

STAATSUNIVERSITÄT JEREWAN

---

JAKOB KÜNZLER

**DREISSIG JAHRE  
DIENST  
AM ORIENT**

Aus dem Deutschen

Übersetzt von  
Dora Sakajan  
und  
Evelina Makarjan

VERLAG DER STAATSUNIVERSITÄT JEREWAN

---

JEREWAN – 2008

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

**ՅԱԿՈՒ ՔՅՈՒՆՑԼԵՐ**

**ԵՐԵՍՈՒՆ ՏԱՐԻ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ  
ԱՐԵՎԵԼՔՈՒՄ**

Գերմաներենից թարգմանեցին՝

**Դորա Սաքայանը**

**և**

**Էվելինա Մակարյանը**

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ – 2008

ՀՏԳ 941(479,25)  
ԳՄԳ 63.3(27)  
Ք 677

Հրատարակության և ներկայացրել  
ԵՊՀ Հայագիտական կենտրոնը

### **Քյունցլեր Յակոբ**

Ք 677 **Երեսուն տարի ծառայություն Արևելքում: – Եր.: ԵՊՀ Հրատ., 2008 թ., 100 էջ + 2 էջ ներդիր:**

*Գիրքը Հայ ժողովրդի մեծ բարեկամ, չվեյցարացի միսիոներ, բազմաթիվ և բազմաբնույթ գործերի հեղինակ Յակոբ Քյունցլերի (1871–1949) հուշագրությունն է: Քյունցլերը Հարավարևելյան Անատոլիայում ականատես է եղել Հայերի կոտորածներին ու առաջիններից է, որ Շվեյցարիայում մարդկանց ուշադրությունն է սևեռել այդ Հարցի վրա, սակայն նրա օգնության կանչն անարձագանք է մնացել:*

*Նախատեսվում է ընթերցող լայն զանգվածների համար:*

ԳՄԳ 63.3(27)

ISBN 978-5-8084-1026-8

© ԵՊՀ Հրատ., 2008 թ.

© Թարգմանիչների համար, 2008 թ.

## ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Իր գոյության փոթորկալից օրերին հայ ժողովուրդը միշտ ունեցել է օտարազգի բարեկամներ, որոնք երբեմն իրենց իսկ կյանքը վտանգելով՝ օգնության ձեռք են մեկնել նրան: Այդպիսի մարդիկ հայտնվել են հատկապես Առաջին աշխարհամարտի ժամանակ՝ հայոց Մեծ եղեռնի օրերին: Հայ ժողովուրդը երբեք չի մոռանա իր այնպիսի երախտավորների անունները, ինչպիսիք էին գերմանացիներ Յոհաննես Լեփսիուսը, Արմին Վեգները, Արմին ֆոն Չանդերսը, դանիուհի Կարեն Յեփեն, շվեյցարացի Յակոբ Քյունցլերը և ուրիշներ:

Սույն գրքով առաջին անգամ գերմաներենից հայերեն թարգմանությամբ ներկայացնում ենք հայ ժողովրդի մեծ բարեկամ Յակոբ Քյունցլերի «Երեսուն տարի ծառայություն Արևելքում» գիրքը, որը նա գրել է 1933-ին: Այս հուշագրությունը ամփոփում է Քյունցլերի ու նրա կնոջ՝ 1899-ից մինչև 1930-ը Արևելքում ապրած կյանքն ու այնտեղից ստացած տպավորությունները: Քյունցլերի գիրքն սկսվում ու եզրափակվում է նրա հրատարակչի՝ դ-ր Էմանուել Ռիզենբախի բավական ծավալուն խոսքով, որն իր նախաբանում տալիս է Քյունցլերի համառոտ կենսագրությունը և ապա վերջաբանում բնութագրում նրա գրական հարուստ ժառանգությունը:

Կարդալով այս օրագրությունը՝ մենք տեսնում ենք, որ Արևելքում Քյունցլերի ծառայության երեսուն տարիները համընկնում են 1915–1921 թթ. հայոց ցեղասպանության ժամանակին: Դեռևս 1914-ին նա Բաղդադում լսած է լինում երիտթուրքերի առաջնորդ Նեֆիս բեյի խոսքերը. «Մենք՝ թուրքերս, հայերին առանց բացառության կ'ամ պիտի բնաջնջենք, կ'ամ տարագրության հարկադրենք: Մեր կայսրության սահմաններում նրանց հետ միասին ապրելը միանգամայն բացառված է»: Շատ շուտով այդ խոսքերն իրականանում են Քյունցլերի աչքի առաջ. մեծ մարդասերը ակամա վկա է դառնում մարդկային անասելի մի ողբերգության:

1899–1922 թթ. միսիոներներ Յակոբ Քյունցլերն ու նրա կինը՝ Էլիզաբեթը, ապրել են օսմանյան Թուրքիայի հարավարևելյան քաղաքներից մեկում՝ Միրիային սահմանամերձ բազմազգ Ուրֆայում, որտեղ կողք կողքի ապրել են հայերն ու թուրքերը, արաբներն ու քրդերը:

Քյունցլերը աշխատել է շվեյցարական հիվանդանոցում. սկզբում՝ որպես բուժակ, ապա՝ բժիշկ, իսկ ավելի ուշ ինքն է դեկավարել այդ հիվանդանոցը: Այստեղ է, որ նա և իր կինը մոտիկից տեսնում ու զգում են Ուրֆայից և նրա շրջակայքից դեպի անապատները քշված հայ գաղթականների արհավիրքը: Այդ բոլորի մասին նա ժամանակին ահագանգում է Շվեյցարիայի տիրող շրջաններին, ինչպես և միջազգային հանրությանը, սակայն հարկ եղած օգնությունը չի գալիս:

Մեծ մարդասերը ինքն է իր ուժերով անում այն, ինչ կարողանում է հայ հալածյալներից գեթ ոմանց կործանումից փրկելու համար: Նա ոչ միայն խնամում է, բուժում, այլև ապաստան հատկացնում նրանց՝ բաքցնելով հիվանդանոցում և այլուր: Ընդհանրապես, մարդկային կյանքեր փրկելու համար նա ոչնչի առաջ կանգ չի առնում: Նա կարող էր գործադրել խորամանկություն, չափավոր շողոքորթություն, դիմել նույնիսկ ոճրագործի պատվախնդրությանը: Բարեբախտաբար այդ միջոցներին հաճախ չէր դիմում, քանի որ երբեմն նրա մի փոքրիկ միջամտությունն էլ բավական էր: Չէ որ Քյունցլերը, կամ ինչպես այլազգիներ էին նրան կոչում՝ Յակոբ էֆենդին, բոլորի մոտ հարգանք էր վայելում: Ասում են, որ նա լավ գիտեր մարդկանց հետ խոսելու ձևը, անկախ նրանից՝ այդ մարդիկ չարագործ էին, թե չարագործի զոհեր:

Թե ինչե՛ր է արել Քյունցլերը տառապյալ հայ գաղթականների, հայ որբերի ու այրիների համար, և թե ինչպես է նա իր անձը զոհաբերել նրանց բարօրության համար, կարելի է կարդալ հետևյալ էջերում: Այստեղ է, որ ընթերցողը կհասկանա, թե ինչու է նա հայ տարագրության պատմության մեջ մտել որպես «Հայր Յակոբ» կամ «Եղբայր Յակոբ»:

**Թարգմանիչներ**

## ՆԱԽԱԲԱՆ

Իմ բարեկամը՝ արեղա Յակոբ Քյունցլերը, երկար ժամանակ հետաձգում էր իր հիշողությունները գրի առնելու գործը: Ուստի ես իմ պարտականությունը համարեցի նրան համոզել, որ այդ գործը ստանձնի: Չէ՞ որ նա այն հազվագյուտ եվրոպացիներից է, որոնք Մերձավոր Արևելքի ուղնուծուծը գիտեն: Իրավացի է այն գիտնականը, որը նրա մասին ասել է. «Քյունցլերին երևի կարելի է դասել սակավաթիվ մարդկանց թվին, որոնք Արևելքը ճանաչում են այնտեղ երկար ապրելով. նրանք ևս արևելցի են դարձել: Եթե ես Արևելքում իսկապես ինչ-որ բան տեսա ու լսեցի, ապա միայն Յակոբ Քյունցլերի հարուստ հոգու ու խորաթափանց աչքերով, որտեղ մարդկային մի սերնդի ընթացքում կուտակվել էր ողջ Արևելքը»:

Ինչպես ցույց է տալիս նրա աշխատությունների ընդգրկուն ցանկը, Քյունցլերը պարբերաբար հաղորդել է իր վերապրած դեպքերի մասին ու դրանց վերաբերյալ խորհրդածել է, սակայն նրա հաղորդագրությունները ցրված են և հաճախ՝ դժվար հասանելի: Նույնիսկ ամբողջության մեջ այդ նյութերը իրավիճակի մասին հազիվ թե ճշգրիտ պատկերացում տան, ինչպես ներկա գրում անմիջականորեն գրառված հուշերը:

Այստեղ իրենց բազմազանությունամբ հարուստ պատկերներն անցնում են մեր աչքի առաջով, և մեր հայացքն ուղղվում է դեպի կենսագործունեությունը մի մարդու, որն իր ամբողջ էությունամբ ծառայում է իր սիրելի Արևելքին ու համակված է միայն մեկ ձգտումով՝ կիրառել մերձավորին սիրելու գերագույն պատվիրանը իրեն պատահած բոլոր մարդկանց հանդեպ: Նա պատրաստ է օգնություն հասնել ամենից առաջ հայերին, որպես ամենաշարաբախտների, բայց և՛ թուրքերին, քրդերին ու արաբներին: Նա նույնքան ցանկալի հյուր է հայ փախստականների տաղավարներում կամ սիրիացու աղքատիկ տնակում, որքան հարուստ մուսուլմանի դղյակում կամ անապատային շէյխի վրանում: Որտեղ էլ որ երևա Յակոբ էֆենդին (այսպես են նրան կոչում ամենուրեք), այնտեղ վրա է հասնում օգնությունն ու բարի խորհուրդը, այն-

տեղ բոլորը սիրով ականջ են դնում նրա խրատներին ու լուսաբանումներին: Նա միակն է, որ համարձակվում է անդեն ճանապարհորդել վտանգավոր գավառների միջով, խառնվել ամեն տեսակի ամբոխի մեջ և բացահայտորեն իր կարծիքը հայտնել: Ծատերի համար նա դարձել է նեղ օրվա օգնական, խորհրդատու ու ընկեր և այժմ էլ շարունակում է իր ողջ ուժն ու կարողությունը տրամադրել բոլոր նրանց, ում ի վիճակի է օգտակար լինել:

Նախքան նրան խոսք տալը հարկ եմ համարում մի քանի տվյալներ հաղորդել նրա կենսագրությունից:

Վալցենհաուզենցի Յակոբ Քյունցլերը ծնվել է 1871 թ. մարտի 8-ին Ապենցել կանտոնի Հունդվիլ գյուղում որմնադիր վարպետ Արնոլդ Քյունցլերի ընտանիքում: Վեց տարեկան հասակում նա կորցնում է հորը և մի քանի տարի հետո էլ մորը: Այսպես, տղան պատանեկության մեծ մասն անց է կացնում տարբեր ազգականների մոտ Ապենցելի կանտոնում և հարկադրված է լինում ինքն իր հացը վաստակել դպրոց հաճախելուն զուգընթաց, որտեղ սովորում էր բարձր առաջադիմությամբ: Մինչև 22 տարեկանը նա իր հայրենիքում և Բազելում աշխատում է որպես ատաղձագործ: Այնուհետև ընդունվում է այդ քաղաքի վարդապետաց դպրոցը և ուսումնառությունն ավարտելուց հետո հինգ տարի որպես արեղա ծառայում Բազելի քաղաքային հիվանդանոցում:

1899 թ. Քյունցլերը մեկնում է Ուրֆա՝ միսիոներական հիվանդանոց, որտեղ ավելի քան քսան տարի փոքր ընդմիջումներով աշխատում է բազելցի բժիշկներ դ-ր Հ. Քրիստի և դ-ր Ա. Ֆիշերի մոտ որպես բժշկի օգնական: Ծուռով բժշկական այնպիսի հրմտություն է դրսևորում, որ գլխավոր բժշկի բացակայության դեպքում նրան է հանձնվում հիվանդանոցի ղեկավարությունը, և նա ստանձնում է բժշկի բոլոր պարտականությունները:

Աշխարհամարտի բռնկման ժամանակ Քյունցլերը մեկն էր այն սակավաթիվ եվրոպացիներից, որոնք կարողացան մնալ Մերձավոր Արևելքում և դարձան հայոց աղետի վկաներ: Ահավոր այդ ժամանակաշրջանում Քյունցլերը ղեկավարում է հայերին օգնություն հասցնող կարևոր գործողություններից շատերը, ինչպես սեփական նախաձեռնությամբ, այնպես էլ բարեգործական տարբեր հաստատությունների հանձնարարությամբ:

Պատերազմի ավարտից հետո Քյունցլերը հավաքում է դեռևս մահմեդական տներում գտնվող հայ երեխաներին ու կանանց՝ նրանց ամբրիկյան բարեգործական «Մերձարևելյան նպաստա-

մատույց» կարևոր կազմակերպության խնամքին հանձնելու համար: 1919 թվականին նա ծառայություն է մտնում «Հայերի չվեյցարացի բարեկամների միություն» մեջ և մեկ անգամ ևս ստանձնում այդ չվեյցարացիներին պատկանող Ուրֆայի միսիոներական հիվանդանոցի ղեկավարությունը: Այնուհետև 1922 թվականի ամռանը «Մերձարևելյան նպաստամատույցի» հանձնարարությունով Քյունցլերը կատարում է իր ամենամեծ գործը՝ 8000 հայ երեխա Թուրքիայից Սիրիա փախցնելով: Այդ երեխաների մի մասը հետագայում մնում է նրա տնօրինություն ներքո: Լիբանանի Սազիր բնակավայրում նրա խնամքի տակ էր 1400 հայ աղջիկներից բազմաթիվ մի խումբ: Նրանց զբաղեցնելու նպատակով Քյունցլերը Լիբանան է ներմուծում գորգագործությունը, որը նրան ծանոթ էր Ուրֆայից: Ի ճանաչումն այդ գործի նա լիբանանյան կառավարությունից ստանում է Լիբանանի Արժանյաց կարգի պատվո չքանչան: Երբ որբերը մեծացան ու ինքնուրույն դարձան, Քյունցլերը իր պաշտոնին վերադարձավ «Հայերի չվեյցարացի բարեկամներ» հիմնարկում և Բեյրութում ստանձնեց փախստականների ճամբարներում աղետյալների հետ տարվող աշխատանքների ղեկավարությունը: Մինչև օրս դեռ աշխատում է նույն պաշտոնում:

Երկու տարի է, ինչ Քյունցլերը գրի է առել իր հիշողությունները, այնպես որ վերնագիրը պետք է լիներ «32 տարվա ծառայություն»՝ 30-ի փոխարեն: Զգձգման համար մեղավոր են տարբեր հանգամանքներ, ամենից առաջ հրատարակչի կողմից կատարված խմբագրական աշխատանքը, ինչպես նաև որոշ հավելումներ ու լրացումներ: Սակայն հուսով ենք, որ դա ամենևին չի անդրադառնա գրքի նկատմամբ եղած հետաքրքրություն վրա:

Բագել, նոյեմբեր, 1933 թ.

Հրատարակիչ դ-ր Էմանուել Ռիզենբախ





# ԵՐԵՍՈՒՆ ՏԱՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ

## ՀՐԱԺԵՇՏ ՀԱՅՐԵՆՆԻՔԻՆ

1899 թիվն էր, երբ Հայերի նշանավոր բարեկամը՝ դ-ր Յոհաննես Լեփսիուսը, եկավ Բաղել և քաղաքային հիվանդանոցում այցելեց ինձ: Նա ասաց, որ իրեն հանձնարարել են ինձ հարցնել, թե արդյոք չէի՞ ցանկանա գործուղվել Ուրֆա՝ պարոն դ-ր Քրիստի մոտ:

Թեև ես բոլորել էի բժշկական ծառայություն իմ առաջին հինգ տարին, որի ընթացքում կոմիտեն ինձ կարող էր ուղարկել, ուր որ ուզեր, և ես, հետևաբար, ազատ էի իմ որոշումների մեջ, փորձեցի թաքնվել այդ կոմիտեի թիկունքում՝ ասելով. «Եթե ինձ ուղարկեն, ապա կզնամ»: Դ-ր Լեփսիուսը դիմեց կոմիտեին, և վերջինս կատարեց նրա ցանկությունը:

Այսպես ուրեմն՝ պետք է մեկնեի: Սակայն հարկավոր էր նախապատրաստվել: Ամենից առաջ պետք է թուրքերեն սովորեի: Դրա հնարավորությունը կար Ս. Քրիշոնայում, որտեղ ինձ դասեր տվեց այդ լեզուն տիրապետող մի միսիոներ: Այնտեղ ինձ սովորեցրին նաև անգլերենի հիմունքները: Այնուհետև ես պետք է սովորեի ձիավարել. չէ որ հետագայում հաճախ էի ձիով երկար ճանապարհորդություններ անելու:

Հայրենիքից հեռանալը հեշտ չէր: Թոյֆենում մեկ անգամ ևս այցելեցի մորս գերեզմանին: Ես պետք է զրուցեի պատանեկան իմ տարիներին աշխարհում ամենասիրելի մարդու հետ: Մահից առաջ նա իր երեխաներին հասցրել էր վերջին անգամ գրել մի քանի խոսք. ահա դրանք. «Երեխանե՛րս, դուք հավանաբար կցրվեք աշխարհով մեկ, ուրեմն միշտ հիշեք այս բառերը.

**«Թեկուզ երկրներ ու ծովեր մեզ բաժանեն,  
Մեր սրտերը միշտ անբաժան կլինեն»:**

Գերեզմանի մոտ ես նրան ասացի. «Մայրի՛կ, 22 տարի անց իրականացավ քո գրածը: Երկրներ ու ծովեր են բաժանելու մեզ

այսուհետև, սակայն մեր սրտերը մնալու են իրար մոտ: Սիրելի՛ մայրիկ, քո զավակը, որ պատրաստվում է հեռուները գնալ, քեզ երբեք չի մոռանա: Որպես քո որդին՝ ես ուզում եմ ինձ դրսևորել արժանավայել, որպեսզի դու երանությանդ մեջ ինձ համար չամաչես: Աստված ինձ օգնական»:

1899 թ. հոկտեմբերի 10-ին մեկնեցի: Գոթհարզն անցնելուց հետո հրաժեշտ տվեցի հայրենիքիս և նրան ևս խոստացա օտար երկրում ինձ այնպես պահել, որ նա երբեք չամաչի իր որդու համար:

## ԱՌԱՋԻՆ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ

Վենետիկը, Տրիեստը, Դարզանելն ու առաջին երկարատև փոթորիկը՝ առաջին ծովային հիվանդությամբ ուղեկցվող, մնացել էին հետևում: Դեկտեմբերի սկզբին հասա Ուրֆա, հնում՝ Աբրահամի քաղաքը: Սկզբում այն ինձ առանձնապես դուր չեկավ: Նախ քիչ չէի սարսափահար եղել սատկած կատուններից ու շներից, որ ընկած էին փողոցներում ու օդն էին ապականում: Որ երբևէ այդ նույն փողոցներում կտեսնեմ նաև մարդկային դիակներ թափված, այդ ժամանակ ես չէի կարող նախազգալ: Երբ Ուրֆա ժամանեցի, դ-ր Քրիստին տանը չգտա: Նա Դիարբեքիը էր գնացել՝ հիվանդ մի միսիոների այցելելու: Այսպիսով, ես աշխատանքի անցա առանց որևէ ներածության: Արդեն հաջորդ առավոտյան հիվանդանոցում էի՝ թևքերս վեր քշտած: Հիվանդանոցը, ինչպես նաև դեղատունն ու վիրահատարանը շտապ մաքրման կարիք ունեին, իսկ ես ուզում էի հենց մաքրությամբ սկսել: Սակայն լաթը խլելով ձեռքիցս՝ հասկացրին ինձ, որ նման բան վայել չէ եվրոպացուն:

Վերջապես Ծննդյան օրը, ձյան ու մրրիկի միջով, դ-ր Քրիստը վերադարձավ:

Հիմա կարելի էր կրկին խոսել «չվեյցարական գերմաներենով»: Դա երկուսի՛ բժշկի և նրա նոր ժամանած օգնականի համար էլ դուրեկան էր: Երկուսն էլ հանդիպել էին մի ցանկությամբ. հեռավոր այս երկրում աստվածահաճո գործ կատարելու:

Դրա համար առիթներ չպակասեցին: Դեռ նոր-նոր գործում էր միսիոներական փոքրիկ, անձուկ կլինիկան, սակայն արդեն լրջորեն մտածում էին հիվանդանոց հիմնելու մասին: Հիսուն հազար բնակչություն ունեցող այդ քաղաքում չկար մի տեղ, ուր հնա-

րավոր լիներ խնամքի տակ առնել ծանր հիվանդներին: Վերջիններս պետք է ձիով չորս օրվա ճանապարհ անցնեին Այնթապ հասնելու համար, որտեղ աշխատում էր ամերիկացի մի բժիշկ: Ով ձիավարել չէր կարող, նրան դնում էին մաաֆայի մեջ, այսինքն՝ երթևեկություն համար նախատեսված փակ մի արկղ, որը քաշում էին երկու ձիեր:

Ուրֆայի քաղաքային իշխանությունը շատ կուզենար հիվանդանոց ունենալ, որը սակայն ոչ մի դեպքում չպետք է լիներ եվրոպացիների ձեռքում: Չէ որ դա կնշանակեր, որ հիվանդանոցը ենթարկվելու էր արտերկրյա օրենքներին: Թե դա ինչ էր նշանակում, բացատրեմ հանգամանորեն: Աշխարհամարտից առաջ յուրաքանչյուր տուն, որտեղ օտարերկրացի էր ապրում, գտնվում էր ոչ թե թուրքական, այլ այն երկրի ենթակայության տակ, որին պատկանում էր օտարերկրացին: Դա, իհարկե, թուրքերի նկատմամբ արդարացի չէր, սակայն դա էր այն ժամանակ ընդունված կարգը և երբեմն էլ օտարներին հարմար կանոնը. դրան դեռ կանդրադառնանք:

Քանի որ Ուրֆայի համար հիվանդանոցը ծայրահեղ անհրաժեշտություն էր, գերմանական արևելյան միսիոներությունը, որի ծառայության մեջ էինք մենք, հակառակ կառավարության դժկամության, հետամուտ եղավ այդ նպատակին:

Մինչ այդ բավականին շատ բժշկական աշխատանք կար:

Դեռ հազիվ երկու ամիս Ուրֆայում՝ ես պետք է մեկնեի Դիարբեքիր: Դա այն քաղաքն էր, որի մասին հավաստում էին, որ ոչ միայն տներն են սև, այլ նաև փողոցային շներն ու բնակիչների հոգիները: Նախկին անունն էլ հենց այդպես էր՝ Կարա Ամիդա, այսինքն՝ Սև Ամիդ:

Դիարբեքիր հասնելու համար ստիպված էի ձիով չորս օրվա ճանապարհ անցնել: Այնտեղ ես պետք է օգնեի գերմանացի մի միսիոներին, որը հիվանդ երեխա ու ախտավոր կին ուներ, ու ինքն էլ ուժերի լարման վերջնակետում էր: Նա առաջադրանք էր ստացել Դիարբեքիրում հարյուր երեխայի համար որբանոց բացել: Սակայն կառավարությունը դեմ էր դրան. բանտարկում է նրա երկու հայ տնօրեններին ու հրամայում դատարկել որբանոցը, իսկ միսիոներին տան առաջ կանգնեցնում է ոստիկան: Այդ պատճառով նա այլևս չէր ուզում այնտեղ մնալ:

Բայց այստեղ մի վտանգ կար: Եթե միսիոներն առանց փոխարինող ունենալու մեկներ, ապա այլևս ոչ մի օտարերկրացի չէր

կարող այդ շենքը մտնել: Դա էր ուզում կանխել միսիոներությունը, երբ ինձ ուղարկեց Դիարբեքիր: Այդ տարիներին օտարերկրացիներն իրավունք չունեին առանց զապթիեի, այսինքն կառավարության կողմից նշանակված զինված մարդու ճանապարհորդել: Նա որոշ իմաստով ապահովում էր պաշտպանությունը, բայց և զգալի չափով խանգարում էր ուղևորությունը, քանի որ ուզում էր հանգիստ ճանապարհորդել և չէր շտապում, ինչպես մենք՝ օտարերկրացիներս: Ուրեմն նման մի զապթիեի հետ մեկնեցի սև քաղաք:

Իմ ժամանումը Դիարբեքիրի միսիոների ընտանիքում մեծ ուրախություն առաջացրեց: Դա երեք տառապյալների համար փրկություն հույս էր: Հաջորդ օրն իսկ սկսեցին մեկնելու պատրաստություններ տեսնել, այդ թվում միսիոներության գործերի ու որբանոցի պաշտոնական հանձնումն ինձ: Մենք երկուսով կառավարությունը ներկայացրինք զրազրի կողմից պատրաստված վճարովի փաստաթուղթը: Այժմ միսիոներն ազատ էր և կարող էր ճանապարհ ընկնել:

Նույն օրը՝ կեսօրից բավականին անց, ինձ մոտ եկավ ոստիկանության կոմիսարը, ինչպես ինքն ասաց՝ բարեկամական այցով, ոչ պաշտոնական: Ես ընդունեցի նրան պատշաճ սիրալիրությամբ: Նա ուներ մի հիվանդություն և ես, որպես բժշկության բնագավառի մարդ, նրան պետք է խորհուրդ տայի: Մատուցվեց ընդունված թուրքական սուրճ, և այցը վերածվեց հաճելի զրույցի, որի համար ես շատ ուրախ էի և խնդրեցի ինձ կրկին այցելել, քանի որ այս ձևով ես ամենաարագ ու լավագույն ձևով պիտի կարողանայի ծանոթանալ թուրքական իրադրությունը: Այցի վերջում, երկրի սովորության համաձայն, առաջ քաշվեց գլխավորը՝ այն հարցը, թե ինչու եմ եկել Դիարբեքիր: Մեհմեդ էֆենդին՝ կոմիսարը, ուզում էր իմանալ, թե ես այստեղ ինչ ծրագրեր ունեմ և հատկապես կրկին որբեր ընդունելու եմ: Ես կարողացա նրան հանգստացնել՝ ասելով, որ դա ես կանեմ, եթե ձեռքիս լինեն իմ միսիոներության հրամանը և նահանգապետի թույլտվությունը: Սա նրան իսկապես հանգստացրեց, և հետևանքը եղավ այն, որ մինչ այդ միսիոներության տան առաջ կանգնած ոստիկանն այլևս չչարունակեց պահակությունը:

Մոտենում էր Ջատիկը: Բլղուրի (խոշոր աղացած ցորեն) մեծ պաշարներից բաժանեցի որբերին, որոնք տեղավորված էին քաղաքում: Հաջորդեց սպասողական ու նոր բաներ սովորելու մի

չրջան: Երեք ամիս անց էրգրումից հեռագիր եկավ: Ոմն Բերգման հայտնում էր իր մոտալուտ ժամանման մասին գերմանացի միսիոներին փոխարինելու համար: Կիրակի է: Դուռն են թակում: Աստիճաններով դեպի իմ սենյակն է բարձրանում մի սևամորթ: Նրան հետևում է սպիտակ բեղերով տարեց մի պարոն: Բաց եմ անում դուռը, պարոնը ներս է մտնում, ինձ գրկում ու ասում է՝ Փոն Բերգման: Հասկանում եմ, որ ինձ փոխարինողն այստեղ է, և ես կրկին ազատ եմ Ուրֆա գնալու համար: Ֆոն Բերգմանը հայտնի վիրաբույժ էրուարդ Փոն Բերգմանի եղբայրն էր, որն այն ժամանակ աշխատում էր Բեռլինում: Նրա անունը ծանոթ էր ինձ Բազելի քաղաքային հիվանդանոցում լսած դասախոսություններից:

«Իսկ որտե՞ղ են ձեր որբերը»,— եղավ նրա առաջին հարցը: Նրան հաղորդեցի, որ որբանոցը դատարկ է, երեխաները ցիրուցան տեղավորված են քաղաքում: Դա մի քիչ հանգստացրեց նրան, բայց նա հավաստիացրեց, որ ոչ մի նահանգապետ չի կարող նրան արգելել որբերի խնամքը, չէ՞ որ Ավետարանում գրված է, որ այրիներին ու որբերին պետք է հոգատարություն ցույց տալ:

Հաջորդ օրը նահանգապետի ներկայությունը կրկնվելու էր որբանոցի պաշտոնական հանձնումը: Այդ առիթով Փոն Բերգմանը զարդարվել էր մի շարք չքանչաններով: Ես ոչ մի հատ չունեի: Անշուշտ Փոն Բերգմանը այն կարծիքին էր, որ մենք չպետք է արտաքննապես զարդարված լինենք, այլ ներքուստ: Այսուհանդերձ թուրքերին պետք էր տպավորել չքանչաններով: Չէր երևում բրնավ, որ նահանգապետը տպավորվել էր, քանի որ երեք ամիս հետո, երբ Փոն Բերգմանը տիֆից մահացավ, նրա որբանոցում ոչ մի երեխա չկար:

Մեծ ուրախությունը վերադարձա Ուրֆա՝ գործունեություն իմ իսկական ուրտը: Կարա Ամիդ քաղաքը՝ իր 157 աշտարակներով, սև շներով ու բազալտե քարերով, ինձ չէր գրավել, չնայած նրա բնակիչների սրտերն ավելի սև չէին, քան այլ վայրերինը: Տեղի հայերի հետ, իհարկե, քիչ չփում ունեցա, որովհետև նրանք երկչոտ էին և թուրքերի ահից խուսափում էին ինձնից: Մյուս կողմից, հանձին ոստիկանական կոմիսարի, ձեռք էի բերել մի լավ բարեկամ, որը հայերին համակրում էր, քանի որ պատկանում էր արդարամիտ մարդկանց թվին:

Առաջին իսկ դեպքերն ինձ ցույց տվեցին, որ Արևելքում շատ բաներ այլ կերպ են ընթանում, քան մեզ մոտ՝ Արևմուտքում:

## ՈՒՐՖԱՅԻ ՄԻՍԻՈՆԵՐԱԿԱՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՅԸ

Իմ բացակայության ժամանակ դ-ր Քրիստը քաղաքում քիչ թե չատ մեծ տուն էր վարձել, որտեղ կարելի էր տեղավորել առաջին հիվանդներին: Ես ինքս պատրաստեցի մահճակալները, ինչպես նաև դրանց կից սեղանիկները:

Նշանակալից օր էր դա, երբ առաջին հիվանդը պառկեց այդ նոր հիվանդանոցում: Ճիշտ նույն ժամանակ Ուրֆայի կառավարությունը Հալեպի նահանգապետից գրություն ստացավ այն մասին, որ նա պատրաստ է իր ուժերի ներածի չափով պարոն դ-ր Քրիստին իր աշխատանքում սատարել: Այդ գրության հետևում կանգնած էր մի ոմն պարոն Մյուլինեն, մի չվեյցարացի, որն աշխատում էր Կոստանդնուպոլսի Կայսերական Գերմանիայի դեսպանատանը: Այսպիսով, գոնե մեր նոր ձեռնարկի համար որևէ պաշտոնական դժվարություն չունեցանք:

Մեր բժշկական գործունեության շնորհիվ չփման մեջ էինք բնակչության բոլոր խավերի հետ: Ի դեպ, հաճախող հիվանդների մեծ մասը հայեր էին, սակայն բուժման դիմող թուրքերի, արաբների ու քրդերի թիվն էլ գնալով մեծանում էր: Սա հնարավորություն էր տալիս երկկողմանի համակշռության. քրիստոնյաները խնամում էին հայերի թշնամիներին, իսկ հայերը, թուրքերն ու քրդերը, իրենց հիվանդության հոգսերով տարված, համերաչխ պառկում էին կողք կողքի: Հիվանդները, ինչպես և քաղաքացիները ինձ Յակոբ էֆենդի կամ նաև «բիրաղեր (գերմ. Bruder-եղբայր բառի աղավաղված ձևը) Յակոբ» էին անվանում: Բանն այն էր, որ ոչ մեկը չէր կարողանում իմ Գյունցլեր ազգանունը ճիշտ արտասանել, բայց Յակոբ անունը հայտնի էր և՛ հայերին, և՛ թուրքերին, առաջիններին՝ Հակոբ, վերջիններին՝ Յակուբ ձևով: էֆենդի նշանակում է պարոն, բիրաղեր՝ եղբայր:

Շուտով մեր հիվանդանոցը ամբողջ շրջակայքում հայտնի դարձավ, և ամեն կողմից այցելուներ եկան:

Հիվանդների մեծ հոսքը մեզ ոգևորեց և մեզ մղեց մտածելու հիվանդանոցային այլ կառույցների մասին: Այս անգամ խոսքը քաղաքից դուրս հիվանդանոց ունենալու մասին էր: Սակայն դա

այնքան էլ դյուրին գործ էր: Կյանքն Արևելքում ամեն տեսակե-տից այլ կերպ է ընթանում, քան մեզ մոտ: Այնտեղ կան դժվարություններ, որոնց առաջ, հատկապես որպես սկանակ, կանգնում ես չվարած: Ստիպված ես դիմել ամեն կարգի զիջումների և հնարավոր բոլոր հնարքների: Մենք՝ միսիոներներս, հաճախ ստիպված էինք գործել այնպես, ինչպես մեր արևելյի եղբայրները:

Մեր հիվանդանոցի շինարարությունն ժամանակ ևս նույն իրավիճակն էր: Եթե բացեիրքաց հայտնեինք մեր մտադրությունը, ապա պետք է ձեռք բերեինք ոչ միայն պաշտոնական, այլև կայսերական թույլտվություն: Այլ միսիոներությունների փորձը ցույց էր տալիս, որ նման թույլտվություն ստանալը չափազանց դժվար էր: Եվ այսպես, մենք ևս զարտուղի ճանապարհներով էինք գնում դեպի մեր նպատակը: Վաղուց արդեն քաղաքից դուրս մի հողակտոր էինք ձեռք բերել՝ քաջ գիտենալով, որ երկար ժամանակ էր պահանջվելու, մինչև որ այնտեղ կարողանայինք մեր հիվանդանոցը կառուցել: Ուստի դ-ր Քրիստը այդ հողակտորը մարզարեաբար «ավետյաց» կոչեց: Կգա՞ր արդյոք ժամանակը, երբ նրա մեջ կտեղավորվեինք: Քանի որ առայժմ չկար այնտեղ շինարարություն կատարելու հեռանկար, իսկ քաղաքում էլ տեղը քիչ էր, քաղաքից դուրս մի կիսակառույց տուն գնեցինք՝ դրա վրա կառուցելով մի քանի սենյակ: Սակայն այդ հողակտորի և՛ ձեռքբերումը, և՛ շինարարությունը դարձյալ կատարվում էր կեղծիքով: Որպես տեր ժամանակավորապես հանդես եկավ մի հայ, իսկ տեղափոխությունը տեղի ունեցավ հանկարծակի, որով կառավարությունը դարձյալ կանգնեց կատարված փաստի առաջ: Միայն շատ տարիներ հետո՝ պատերազմի բռնկումից քիչ առաջ, դ-ր Քրիստի հետնորդին հաջողվեց ստանալ «Ավետյաց երկրում» իսկական հիվանդանոց կառուցելու իրավունք: Ուրեմն հնարավոր էր հասնել նպատակին, միայն դրա համար շատ ժամանակ ու համբերություն էր հարկավոր: Սակայն բանը շինարարությունն չհասավ, քանի որ սկսվեց աշխարհամարտը:

Երբ դ-ր Քրիստը 1903 թ. աշնանը մեկնեց Շվեյցարիա, Այնթապից մի հայ բժիշկ նշանակվեց, որի դիպլոմը ապահովեց մեր հետագա աշխատանքի հաջողությունը: Չնայած դրան՝ դժվարություններն անպակաս էին: Ուրֆան այդ ժամանակ ուներ քաղաքային մի թուրք բժիշկ: Երբ մի անգամ վիրահատությունը մահով վերջացավ, նա հայտարարեց, որ վիրահատություն կատարելու համար անհրաժեշտ է երկու դիպլոմավոր բժիշկ: Թեև դա օրենք



չէր, այնուամենայնիվ մեր հայ բժշկին սպառնում էր բանտարկու-  
թյուն: Միայն դրամ տալով կարելի էր դա կանխել: Իսկ ես այդ  
բանին դեմ էի: Ուստի խնդրեցի քաղաքի բժշկին, որ նա մեզ մոտ  
պաշտոնավարի որպես երկրորդ բժիշկ: Վերահատուկությունների  
ժամանակ նա չէր մասնակցելու, այլ միայն ներկա էր լինելու:  
Պարոնն ընդունեց, սակայն պահանջեց կանխիկ երկու ամսվա  
վարձ: Դա շատ չէր. ամիսը 50 Ֆրանկ, և ես վճարեցի: Այժմ կարող  
էինք հանգիստ շարունակել վերահատուկությունները, իսկ եթե պա-  
տահեին մահվան դեպքեր, պաշտպանված էինք:

Այսպիսի շատ այլ դժվարություններ մշտապես աչքի առաջ  
պիտի ունենայինք: Դրանք Արևելքում կյանքի մաս են կազմում:  
Պետք է պարզապես սառնասրտությունը պահպանել:

## ՄԵՐ ՀԻՎԱՆԴՆԵՐԸ

Շուտով մեր հիվանդանոցը հայտնի դարձավ ամբողջ շրջա-  
կայքում, և ժողովուրդը սկսեց գալ: Թե հիվանդների ինչպիսի  
բազմաբզեռ խառնուրդ էր նա իր հարկի տակ առնում, լավա-  
գույնս ցույց են տալիս մի քանի կենսագրականներ ու հիվան-  
դություն պատմություններ, որոնք քաղել ենք հարյուրավոր այդ-  
պիսիներից:

Ահա նախ և առաջ Համիդը՝ 60 տարեկան մի թուրք: Նրա միակ  
հարստությունը հինգ երեխաներն են, բոլորն էլ աղջիկներ, որոնց  
նրա համար ծնել է Ֆաթիման՝ մի արաբուհի: Շատ տխուր բան է  
արևելցու համար միայն կրղ (kyz), այսինքն աղջիկ զավակ ունե-  
նալը: Թուրքը նրան անվանում է Էկզիկ (eksik), այսինքն՝ չափա-  
զանց քիչ, արաբները՝ չակֆիտ բինտ (schakfit bint), այսինքն՝ մի  
կտոր աղջիկ: Համիդը երկար տարիներ տառապում էր ծնկների  
հողացավով, որոնք շարժվելիս մեծ ցավ էին պատճառում: Այժմ  
նա, որ բազմանդամ ընտանիքի կերակրողն էր, այլևս չէր կարո-  
ղանում կոչիկ կարկատել (արհեստով փինաչի էր) և ընկել էր  
ծանր կարիքի մեջ: Վեց շաբաթ առաջ նա դիմել էր մեր բժշկին:  
Քանի որ վերջինս խոսել էր անդամահատության մասին, Համիդն  
ավելի էր ձգձգել հիվանդությունը՝ չհանձնվելով մեր խնամքին:  
Միայն մի քանի ամիս տառապելուց հետո որոշում է գալ մեր  
հիվանդանոց՝ այդ ընթացքում է՛լ ավելի վատթարացած ոտքը  
կտրել տալու: Սակայն նրա մարմինը շատ թուլացած էր: Վախ

կար, որ այդ ոչ վտանգավոր վիրահատությունը չէր կարողանա դիմանալ: Բայց նա դիմացավ: Սակայն ինչպիսի դժբախտություն: Հին Հիվանդությունն անմիջապես կրկին բռնկվեց բնից վեր: Վիրահատությունից առաջ մեր ունեցած հույսը, որ Հիվանդ անդամը հեռացվելուց հետո վերստին արագորեն պիտի կազդուրվեր, անհետացավ: Նա դուրս եկավ Հիվանդանոցից չբուժված, մահամերձ վիճակում: Շատ տխուր էր Հիվանդի, նրա ընտանիքի, ինչպես նաև մեզ համար: Նա դարձել էր մեր սիրելի Հիվանդը, մշտապես շնորհակալ մեր ամեն մի ծառայություն համար:

Ային՝ Մոսուլի գավառից մի արար, «վայրի թոչուն» էր: Նա ընդամենը 17 տարեկան էր: Մանկությունից տրվել էր մուրացկանություն: Սակայն ամիսներ ի վեր չի կարողացել կարգին զբաղվել այդ «ազնիվ» արհեստով, որոհետև ոտքն սկսել է ցավել: Երբ նա լսել է խաիրխախտ հեքիմի, այսինքն մարդասեր բժշկի մասին, մեզ է դիմել օգնություն: Նրան մաքուր անկողին մտցրին, անշուշտ միայն այն բանից հետո, երբ բարերար լոգանքը նրան որոշ չափով ազատեց հին ու նոր կեղտից: Ոտքը վիրահատեցինք: Մոտ երկու ամիս մնալու էր մեր Հիվանդանոցում: Բուժման դիմաց նա կարող էր միայն համբուրել մեր ձեռքերը, մի բան, որ նա անում էր ամեն անգամ, երբ հնարավոր էր լինում դրանք բռնել: Նրան շատ էր դուր եկել մեր Հիվանդանոցը: Իսկ ինչո՞ւ չէ. լավ անկողին, լավ կերակուր և ձմեռը տաք սենյակ: Չէ՞ որ սովորաբար նրա բնակարանը քարայրն էր, ներքնակը՝ գետինը, իսկ սնունդը՝ մուրացած չոր հացը: Նա ասում էր, որ բուժվելուց հետո այլևս մեր տնից չի հեռանա, այլ, իր իսկ արտահայտություններով, մեր «ստրուկը» կզառնա: Ուզում էր խնամել մեր կենդանիներին ու տնտեսություն համար ջուր կրել: Սակայն մենք կարծում էինք, որ հենց որ բուժվի, մուրացկանի շարժուն կյանքը կգերադասի Հիվանդանոցում մշտական աշխատանքից: Ի դեպ, նա խոսում էր միայն արաբերեն: Ցանկացանք մի քանի թուրքերեն բառ սովորեցնել, սակայն դրա համար «Նյուրնբերգյան վարժապետի» կարիքը զգացվեց: Լեզվական մեր առաջին բացատրությունները նա ընդունեց ղեմքի այնպիսի ոչ խելահաս արտահայտությամբ, կարծես ինչ-որ կենդանու էինք փորձում այբուբեն սովորեցնել:

Երկաթի մի փոքրիկ բեկոր էր մխրձվել մի հայի աչքի մեջ գյուղում, որտեղ բժիշկ չկար: Երբ երկու օր հետո նա մեզ մոտ եկավ, աչքը գրեթե անհույս վիճակում էր: Սակայն, ի մեծ ուրախություն նրա, աչքն օր-օրի լավացավ: Հիվանդանոցում 12 օր մնալուց հե-

տո կարելի էր ասել, որ աչքը փրկված է: Գուցե հետագայում վիրահատություն միջոցով աչքը լրիվ վերականգնվի: Հիվանդն ի վիճակի էր բուժման ծախսերը երկու երրորդով փակել:

Հակոբը նույնպես հայ էր, որը աչքի խոցի պատճառով 14 օր մնաց մեր հիվանդանոցում: Ուրախ էր, քանի որ բուժվել էր, սակայն վախվխելով դուրս եկավ հիվանդանոցից: Ինչո՞ւ վախվխելով: Ցավոք, նա հանձնվել էր ոգելից խմիչքների սատանային, որից հրաժարվելու երզում էր տվել հիվանդանոցում: Թող Աստված օգնի նրան, որ կարողանա իրեն սպասող առաջին դժվար փորձությունները հաղթահարել:

Մեզ մոտ միայն մի քանի ժամ պառկեց հարևան Գարմուշ գյուղից վեց տարեկան մի տղա: Նա մահացավ թուքերի բորբոքումից:

Նրա հետ հիվանդանոց էին բերել մեկուկես տարեկան սիրունատես մի երեխայի: Նրան անմիջապես պետք է վիրահատելն կոկորդի սուր բորբոքումից առաջացած սպառնալի շնչահեղձություն պատճառով: Ծնչափողում տեղադրվեց ներարկման ասեղ: 14 օր անց երեխան, որը դեռ ծծկեր էր, ապաքինված վիճակում հանձնվեց մորը: Բուժման համար ծնողները կարողացան շատ քիչ վճարել:

Իսսա, այսինքն՝ Հիսուս, այսպես էր արարի անունը Հարանից: Գնդակը վնասել էր ողնաշարը, և վիրահատություն կարիք ուներ: Մի քանի շաբաթ պետք է մնար, որպեսզի նորից կարողանար ձիու վրա Հարան վերադառնալ: Հունվարին մեզ դիմած հիվանդներից նա միակն էր, որ ի վիճակի էր վճարել բուժման ամբողջ ծախսը:

Որպես հազվագյուտ երևույթ, մի աղքատ հրեա, որը, սակայն, հարուստ էր երեխաներով, երկրորդ անգամ ընդունվեց մեր հիվանդանոց: Նա խնդրեց, որ երկու ոտքերից վիրահատվելուց հետո իրեն թույլ տան հիվանդանոցում պառկել: Անշուշտ, նա վճարում էր միայն ծախսի մեկ երրորդը: Մեր խոհանոցից չէր օգտվում, որովհետև մեր կերակուրը (քոչեր» չէ: Սաֆեղում (Պաղեստին) գտնվող անգլիացիների միսիոներական հիվանդանոցի մակարդակին դեռ չէինք հասել, որպեսզի հրեաների համար հրեա խոհարարուհի պահեինք, որի եփած ճաշերը լինեին նաև իսկական «քոչեր»: Սելիմից (սա է նրա անունը), որ տարիներ տևող թոքախտի պատճառով բավարար միջոցներ չուներ իր բազմաթիվ երեխաներին պահելու, ինչպե՞ս կարող էինք սպասել, որ հոգար հիվանդանոցային ծախսերը:

Հացթուխ Գևորգը՝ չքավոր մի հայ, ութ օր հիվանդանոցում մնալով, բուժվեց աչքի խոցից:

Հայ ավետարանական համայնքի սարկավագ, կոչկակար Օհաննեսը՝ յոթ երեխայի տեր, չափազանց աղքատ, ոտքի լուրջ վարակումով ընդունվեց մեզ մոտ: Նա երկար էր մնալու և ի վիճակի չէր վարձահատույց լինել: Սակայն ավետարանական համայնքը տարվա մեջ մի կիրակի հանգանակեց հօգուտ մեր հիվանդանոցի: Թեև սա մեծ գումար չէր, այնուամենայնիվ գովելի ձեռնարկ էր, և մենք սիրով անվճար խնամեցինք նրանց աղքատ սարկավագին:

Աղիյամանից՝ Ուրֆայից երկու օր հեռավորություն վրա գտնվող քաղաքից, մեզ ուղարկեցին մի աղքատ երիտասարդ կնոջ, որն ուներ միայն մի աչք, այն էլ քիչ հուսալի վիճակում: Սակայն երբ վիրահատվեց և մեկ ամիս շարունակ խնամվեց մեր հիվանդանոցում, հուրախություն մեր բոլորի՝ նրա աչքը կրկին լույս տեսավ: Մենք նրան տեղավորեցինք քաղաքում՝ սիրիացիների մոտ, քանի որ մեկից երկու ամիս նա դեռ մնալու էր բուժման մեջ: Սկզբում նա ստույգ չգիտեր, թե որ համայնքին է պատկանում՝ Հայկակա՞ն, թե՞ սիրիական. ի վերջո պարզվեց, որ պատկանում է Հին սիրիական համայնքին: Նա, որի սեփականությունը մի քանի ցնցոտի էր, սիրով կուզենար մշտապես մեզ մոտ մնալ, որովհետև այստեղ կար լավ անկողին, տաք հագուստ և սննդարար կերակուր: Լաց լինելով դուրս եկավ հիվանդանոցից, որտեղ նա, անշուշտ, անց էր կացրել իր կյանքի ամենագեղեցիկ օրերը: «Դեսուղեն քչվել»՝ ահա սա է եղել նրա ճակատագիրը մինչև օրս և հիվանդանոցից դուրս գալուց հետո էլ նույնն էր լինելու: Սիրիական համայնքը պատրաստ էր նրան կրկին Ադյաման «քչել»: Միայն մեր եռանդուն բողոքի շնորհիվ նրան թույլատրվեց դեռ մնալ:

Մարգրիտը՝ սիրիացի կաթոլիկ այդ կինը, մեզ մոտ էր եկել Փրանցիսկյան կրոնավորների հանձնարարությունով: Նրա մի աչքը պետք եղավ վիրահատել, անշուշտ, կրկին առանց վճարի, բայց հնարավոր եղավ նրան օգնել ու կանխել այնքան հաճախ կրկնվող աչքի ուժեղ ցավերը և վրա հասնող կուրությունը:

Քրիստոնյա մի աղջիկ՝ 18 տարեկան, որն արդեն տարիներ շարունակ գորգագործություն էր անդամալույծ հորը, ծեր մորն ու չորս կրտսեր քույրերին ու եղբայրներին, մեկ տարի էր, ինչ սրտային հիվանդ էր: Դրա հետևանքով ընտանիքը ծայրահեղ կարիքի մեջ էր: Ցամաք հաց, այն էլ հաճախ անբավարար.

ահա այդ ընտանիքի գրեթե միակ սնունդը: Մեզ մոտ այդ քաջ աղջիկը շուտով իրեն լավ զգաց, սակայն հարցն այն էր, թե որքան կտևեր մեր ջանքերի արդյունքը, երբ նա կրկին տանը լիներ:

Մի թրքուհի՝ էմինեն, ուներ միայն մի աչք, և այն էլ պատած թարախակույտով: 14 օրվա հիվանդանոցային խնամքը օգնեց նրան հաղթահարելու վտանգը: Բուժումը, ժամանակի առումով, բավականին արագ չէր ընթանում: Նա նապապես վճարել էր հիվանդանոցային ծախսի մեկ վեցերորդը, բայց չցանկացավ այլևս վճարել և այնպես էլ չբուժված, բայց շատ ավելի լավ վիճակում դուրս գրվեց:

Ռումբալայից, որը մի փոքրիկ քաղաք է Եփրատի ափին և գտնվում է այստեղից երկու օրվա հեռավորության վրա, մեզ մոտ բերեցին մի հայուհու, որին կծել էր շունը: Դրա հետևանքով ոտքը ախտահարվել ու այտուցվել էր: Ինչքա՛ն ցավոտ պետք է եղած լիներ այդ ոտքով երկու օրվա ճանապարհը՝ էջի մեջքին նստած: Տեղ էր հասել ուժեղ տենդով: Բժիշկն անմիջապես վիրահատեց, ջերմությունը շուտով իջավ, իսկ 14 օր անց նա թողեց հիվանդանոցը: Սակայն վիրակապը փոխելու համար էչով նորից կլինիկա էր գալու:

## ԱՅԼԵՎԱՅԼ ԽՆԴԻՐՆԵՐ

Մեր միսիոներությունից հիմնադիրները նախապես միայն մի խնդիր ունեին՝ մահմեդականների միսիան: Սակայն իրենց գործունեությունից հենց սկզբնական շրջանում տեղի ունեցան 1895 թ. հայկական ջարդերը, որոնք առաջ քաշեցին առավել հրատապ խնդիրներ. օգնություն հասնել հազարավոր վերքերից արյունաքամ եղող հայ ժողովրդին: Այսպես հավաքագրվեցին որբեր ինչպես Թուրքիայում, այնպես էլ հյուսիսային Պարսկաստանում, ուր փախել էին մեծ թվով երեխաներ: Այդ գործը առաջ բերեց կլինիկաներ բացելու անհրաժեշտությունը, որոնք իրենց հերթին կյանքի կոչեցին հիվանդանոցներ: Եվ հենց այդ հիվանդանոցներում պետք է երևար, որ միսիան պատրաստ է օգնել նաև քրիստոնյաների կարիքավոր թշնամիներին: Մուսուլմանին ամենամոտիկ գտնվող մարդը բժիշկն էր և նրա օգնականը, այդ ժամանակ հենց դ-ր Քրիստոն ու ես: Դա լավ էր նաև հայերի ու մահմեդականների համար, որոնք գալիս էին կողք կողքի պառկելու հիվանդանոցում

նույն հոգսերով, նույն ցավերով: Դրա արդյունքը հաճախ մնա-  
յուն, բարեկամական կապն էր:

Մեր ցանկությունը ոչ միայն հիվանդներին օգնելն էր, այլև  
բնակիչներին (անկախ նրանց դավանանքից)՝ իրենց բազմապիսի  
նեղություններով, զորավիզ լինելը: Ամենից առաջ պետք է հաշվի  
առնվեին կանայք, հատկապես մահմեդականները, որոնք դեռևս  
չառ ցածր մակարդակ ունեին: Այդ հարցում մեծ հմտություն ու-  
ներ կինս: Նա կարողանում էր մուտք գործել նրանց կյանքի մեջ  
չառ ավելի հեշտ, քան ուրիշ միսիոներների կանայք, քանի որ ին-  
քը մեծացել էր Արևելքում: Նա վաղ պատանեկության տարի-  
ներից արդեն չփման մեջ է եղել մուսուլման երեխաների ու կա-  
նանց հետ և խոսում էր նրանց լեզվով: Այսպես, նա բավականին  
չուտ իր առաջին այցելությունն արեց հարեմ՝ Թրքուհիներին: Իսկ  
երկրի սովորության համաձայն թուրք կանայք փոխադարձում  
էին այցելությունները: Չէ՞ որ մուսուլման կանայք շատ ժամանակ  
ունեն: Նրանց ամուսինները կեսօրին տուն չեն գալիս՝ մի բան ու-  
տելու, ճաշում են շուկայում: Բացի այդ եվրոպացի կանանց այ-  
ցելելը շատ հետաքրքրական է նրանց համար: Ուստի գալիս են  
մի խումբ հարևանուհիներով, և քանի որ փոքր երեխաներին չեն  
կարող տանը թողնել, նրանց էլ են բերում իրենց հետ: Այսպիսով,  
խմբերով փոխայցելության են գալիս: Մահմեդական կանայք մոլի  
ծխողներ են: Թեև մեր տանը, որտեղ ոչ ոք չի ծխում, նրանց  
ծխախոտ հյուրասիրող չկար, նրանք սովորաբար իրենց հետ էին  
բերում մի լեցուն տուփ և ծխում էին եռանդուն:

Մինչ կանանց հետ շատ բան չէր կարելի անել, տղամարդկանց  
հարցը այլ էր: Նրանք ջանասիրաբար, իրենց հատուկ ձևով, կարճ  
այցելություններով մեր ընտանիքներում ներս ու դուրս էին ա-  
նում: Իրենց հերթին՝ կանանց ուղարկում էին մեզ մոտ, որպեսզի  
նրանք տեսնեն ու սովորեն, թե ինչպես պետք է կինը վարի տըն-  
տեսությունը:

Ջարմանալի չէր, որ ռազմական դաշինքով տարված շատ  
թուրքեր ամուսնացան գերմանացի կանանց հետ: Թեկուզ և այն  
ժամանակ նրանց ընտրությունը շատ մեծ չէր, և ստիպված էին  
գոհանալ՝ նվազ կրթված մի կին առնելով, այնուամենայնիվ նը-  
րանք չահում էին՝ կազմելով ավելի լավ ընտանիք: Հարցը միայն  
այն է, թե արդյո՞ք գերմանացի կանայք գոհ էին իրենց ամուսին-  
ներից: Ահա այս հարցն է, որ առկախ ենք թողնում:

Մահմեդական կանանց վրա ազդեցություն գործելու ջանքերից ավելի չնորհակալ գործ էր Ուրֆայում յակոբիտյան դպրոցի հիմնադրումը: Սիրիայի քրիստոնյաները բաժանվում են չորս խմբի՝ նեստորականներ, մելկիտներ, մարոնիտներ և յակոբիտներ: Վերջիններից շուրջ 5000 հոգի բնակվում էին Ուրֆայում: Նրանց չըրջանում գործում էր ամերիկյան միսիոներությունը՝ ոչ թե նրանց բողոքականներ դարձնելու, այլ լավ քրիստոնյաներ, նրանց նոր կյանքի կոչելու: Սակայն այստեղ ևս նույն պատկերն էր, ինչ որ բոլոր հին եկեղեցիներում: Նախ՝ միսիոներներին ողջունում էին որպես օգտավողների, որոնց համախոհները, սակայն, իբրև հերետիկոսներ, շատ շուտով հեռացվում էին եկեղեցուց, մի բան, որ այնուհետև նպաստում էր բողոքական եկեղեցիների հիմնադրմանը: Այդ նույն ձևով է, որ Ուրֆայում հայ բողոքական եկեղեցու կողքին ստեղծվեց մի, այսպես կոչված, սիրիական բողոքական եկեղեցի: Եվ քանի որ սիրիացիները Ուրֆայում բնակվում էին թուրքերին միախառնված և խոսում էին թուրքերեն, ուստի սիրիական բողոքական եկեղեցում ևս քարոզը կարգացվում էր այդ լեզվով: Դա իհարկե լավ էր, որովհետև նրանք՝ որպես ժողովուրդ, հայերի հետ բնավ չէին պատշաճում: Հայերն իրենց մտավոր կարողությամբ, ինչպես նաև աշխատասիրությունը, ավելի բարձր էին կանգնած, քան սիրիացիները, սակայն վերջիններս թուրքերի համար ավելի վստահելի տարր էին: Նրանք իսպառ հրաժարվել էին իրենց ազգային հպարտությունից և վարժվել էին թուրքերի ստրուկը լինել: Չնայած դրան՝ նրանք ևս հալածանքի էին ենթարկվում, քանի որ որպես քրիստոնյաներ պատկանում էին ուսյահին, այսինքն՝ հորդային, ինչպես թուրքերը պաշտոնապես անվանում էին նրանց: Քանի որ միշտ սիրում էի ժամերգություն գնալ և առաջին տարին իսկ կիրակնօրյա դպրոցում որպես ուսուցիչ էի աշխատում, շատ շուտով սկսեցի գնալ սիրիական բողոքական եկեղեցի և այնտեղ, հանձին քարոզիչ Ջյուրջիի, գտա մի լավ բարեկամի:

Յակոբիտները դեռևս դպրոց չունեին: Ջյուրջիի ցանկությունը ես ձեռնամուխ եղա համայնքի տղաների համար մի լավ դպրոց հիմնելու գործին: Շվեյցարիայում անցկացվող իմ առաջին արձակուրդն օգտագործեցի դրա համար: Ծարաղրվեց վիճակը ներկայացնող խնդրագիր: Միշտ պիտի հիշեմ, թե ինչպես ինձ այնտեղ բազելյի տարիքոտ մի քահանա թիկունք կանգնեց և քաջալերեց, որ գնամ այդ բանին՝ մուրացկանություն երթին: Նա անձամբ իմ

խնդրագրի տակ գրեց քաջալերման խոսք, որը հետևյալն է. «Թ՛ող որ բարի գործ անենք ամեն մարդու, բայց ամենաչատր՝ կրոնակիցների հանդեպ»: Ավելորդ չէ հիշատակել, որ նա անձամբ դրպրոցի հիմնադրմանը մասնակցեց նշանակալից նվիրատվությամբ: Մի քանի օր անց հավաքվեց հազար Փրանկ, և դրանից անմիջապես հետո ինձ բաժին հասավ նույնպիսի մի գումար ևս: Այսպիսով, հնարավոր եղավ բացել դպրոցը:

Այն շատ լավ առաջադիմեց: Աստիճանաբար այդ գործում ընդգրկվեցին չորս հմուտ ուսուցիչներ: Դպրոցը շարունակեց գոյատևել նաև այն բանից հետո, երբ 1909 թ. քահանա Ջյուրջին սահմանադրության զոհ դարձավ: Նախ՝ դաժան պատերազմը այստեղ ևս փակեց դարպասները, ապա՝ պատերազմին հետևեց սիրիացի քրիստոնյաների բռնագաղթը: Ներկայումս նրանք հիմնականում ապրում են Հայկալում և դեպի Թուրքիա տանող Սիրիայի սահմանի մոտ: Սիրիայի ժողովուրդը նույնպես պատերազմի թրշվառ զոհերից է, որի մասին աշխարհում քիչ է խոսվում:

Սակայն ոչ միայն մարդկանց, այլև կենդանիներին էի ես փորձում օգտակար լինել: Չէ՞ որ նրանք Արևելքում անխղճորեն ենթարկվում են ամեն տեսակ դաժանությունների: Բարձկան ու լրծկան անասուններից շատերը ունեին ուռուցքներ, խոցեր և վիրավոր մեջքեր: Ոչ ոք այդ մասին չէր մտահոգվում: Եթե վիճակը շատ էր վատանում, ապա խեղճ կենդանուն բերում էին պայտարի մոտ, որը վերքն այրում էր շիկացած երկաթով: Իսկ եթե դարբինը կենդանու առողջանալու վերաբերյալ հույս չէր տալիս, հիվանդ ձիուն, ուղտին կամ ավանակին տնից քշում էին: Այլևս չէին ուզում նրանց կերակրել ու ջուր տալ: Նույնն էր պատահում նաև, երբ կենդանու ոտքն էր ջարդվում: Ի՞նչ էր կատարվում նրա հետ: Նա սովի ու ծարավի էր ենթարկվում, իսկ վերքերի մեջ բուն դրած մակաբույծներից տանջամահ էր լինում: Իսկ ինչո՞ւ չէին սպանում: Խնդիրն ամեն դեպքում մուսուլմանական կրոնի մեջ էր, որն արգելում էր սպանել տան կենդանիներին: Այն կենդանիներին՝ կով, ոչխար, այծ, որոնց միսն ուտելը արգելված չէր, անշուշտ մորթում էին: Այս առավելությունը, սակայն, չէին վայելում հնազանդ ավանակը, ազնիվ ձին և հպարտ ուղտը: Ուրեմն դրանք էին, որ պետք է իրենք իրենց սատկեին, իսկ վերացնել չէր կարելի: Սրանց թվում էին նաև շունն ու կատուն: Ծեծել մինչև կիսամեռ վիճակի հասցնելը կարելի էր: Տեսել եմ շներ, որոնք իրենց հետևի ոտքերը հազիվ էին կարողանում քարշ տալ, որովհետև փայտով



Չարդված էր նրանց ողնաշարը: Քանի՜ անգամ պատրաստ եմ եղել ստանձնել փրկարարի դերը: Իսկ երբ մարդ չէր լինում, իսկույն անցնում էի իմ փրկարարական գործին, սակայն պետք էր շատ զգույշ լինել: Իմ բարեկամ միսիոներ Գրեյսին՝ մի քաջ անգլիացի, որը երկրում նորեկ էր, տեսել էր վտարված մի ուղտ, որի ոտքը Չարդված էր: Վերքերը սոսկալի հոտ են արձակել, սովն ու ծառավը տանջել են խեղճ կենդանուն: Գրեյսը քաշել է ատրճանակը, և կենդանին փրկվել է: Հաջորդ օրը եկել է ուղտի տերը և պահանջել 300 ֆրանկ՝ որպես վնասի հատուցում: Գրեյսը չի վճարել, սակայն տեղի են ունեցել երկարատև դատաքննություն, անվերջանալի զլխացավանք:

Փորձում էի ժամանակ գտնել հիվանդ կենդանիներ խնամելու, նույնիսկ բազելյցի իմ մի բարեկամից փող ստացա գործիքներ ձեռք բերելու համար և, այսպիսով, Ուրֆայում ապրած տարիներին ընթացքում կարողացա բավական թվով կենդանիների օգնել: Իմ հիվանդներն էին ուղտեր, ձիեր, ափանակներ, կովեր, հորթեր, ոչխարներ, այծեր, հավեր, սագեր, այո՛, նույնիսկ մի անգամ նաև մի կաքավ: Վերջինիս ոտքն էր Չարդվել, և այն գիպսի մեջ դրվեց: Դրա դիմաց որպես վարձատրություն 7,5 կգ մածուն ստացա: Կաքավի արժեքը մեկ ոսկեդրամ էր, քանի որ այն խայծաթուչուն էր, որի միջոցով հեշտությունը ուրիշ կաքավներ էին բռնվում:

Այսօր թուրքերը խելքի են եկել: Նույնիսկ Ուրֆայի հայ բողոքական եկեղեցին դարձրել են կենդանիների հիվանդանոց: Որովհետև այլևս հայ չկա քաղաքում, եկեղեցին գոնե խեղճ կենդանիներին է օգտակար լինում: Սա անչուշտ մի նշան է թուրքերի վերընթացի: Չէ՞ որ ասված է, որ արդարամիտ մարդը կխղճա իր կենդանուն: Ավտոմեքենաները նույնպես դարձել են կենդանիների պաշտպաններ: Այլևս հազվադեպ են կենդանիներն իրենց վերքոտ մեջքով երկրով մեկ ծանր բեռներ կրում, այժմ դա անում են ինքնաշարժ մեքենաները: El hamd ul illah! (Փառք Աստծուն):

Սակայն դեռ անվերջ աշխատանք կա անելու, որպեսզի տնային կենդանիներն ավելի լավ խնամք ստանան և, այսպիսով, մարդկայնությունն որոշ նշույլ զգան:

Գուցե ընթերցողը կամենա հարցնել. «Ո՞ւր է մնում Ավետարանի ուսուցումը բոլոր այդ բարեգործություններում»: Որպես բժշկական առաքելություն, մեր առաջին ու կարևորագույն խնդիրը ոչ թե քարոզելն էր, այլ խնամելը: Երբեմն, իհարկե, քարոզում էի քրիստոնեական եկեղեցիներում, բայց ոչ երբեք մզկիթում և

դրանց բակերում: Հիվանդանոցում և կլինիկայում հիվանդներին երբեմն ողջունում էի Աստվածաշնչի մի քառյակով, որը և բացատրում էի: Գուցե դա մեր միսիոներությունից սխալն էր, որ ուղարկում էր բժիշկ և սարկավագ, բայց բնավ ոչ քարոզիչ, ինչպես ընդունված էր մնացած գրեթե բոլոր միսիոներություններում, որոնք բժշկի հետ մշտապես նաև իսկական միսիոներներ էին ուղարկում: Ի դեպ, մեր միսիոներությունից նպատակը մարդկանց կրոնափոխ անելը չէր. հայերը կարող էին անվրդով հավատարիմ մնալ իրենց Գրիգորյան եկեղեցուն, որն անշուշտ մինչ օրս մի հզոր նահատակաց եկեղեցի է, իսկ մահմեդականների դարձի համար ամենից առաջ անհրաժեշտ էր տասնամյակների աշխատանք, որպեսզի սիրով ու խնամքով վերացվեր անվստահությունը:

Մեզ համար, ուրեմն, միսիոներական աշխատանքը օգնություն ամեն կարգի ծառայությունն էր:

## ՓՈԹՈՐԻԿԸ ՄՈՏԵՆՈՒՄ ԷՐ

Թեև շատ հաղորդվելիք բաներ կան սկզբնական շրջանի մեր բարեգործական աշխատանքի մասին, այնուամենայնիվ կուզենայի անդրադառնալ այն իրադարձություններին, որոնք առավել չափով խթանում էին մեր գործունեությունը և հաճախ դրան այլ ընթացք տալիս, քան մենք պատկերացնում էինք:

1908 թ. փետրվարն էր, և երկիրն անասելի ցնծություն մեջ էր սահմանադրության հռչակման կապակցությամբ: Ազատագրական գաղափարներն ի վերջո հաղթանակել էին: Ճնշումն ու հալածանքը իրենց վերջն էին գտնելու, գալու էին երջանիկ ժամանակներ:

Վկա էի, թե ինչպես նախկինում թշնամի մահմեդականներն ու քրիստոնյաները ողջագուրվում էին փողոցներում: Մարդիկ այժմ ուզում էին իրար սիրել որպես եղբայրներ, նաև որպես մեծ ու գեղեցիկ երկրի տերեր:

Ամբողջ երկրով մեկ նշում էին հաշտության տոներ, որոնցից շատերին մասնակցել եմ նաև ես: Տոնախմբություններից մեկի ժամանակ ծանոթացա հայազգի Լևոնի հետ, որը 1895 թվականից թաքնված էր մնացել իր տանը: Նա նրանցից մեկն էր, որ հայերի կոտորածի ժամանակ կրակել էր թուրքերի վրա: Քանի որ չէին կարողացել նրան բռնել, հեռակա մահվան էին դատապարտել: 12

տարվա ինքնակամ բանտարկությունից հետո սահմանադրու-  
թյունը նրան էլ, ինչպես հազարավոր այլ մարդկանց, ազատու-  
թյուն էր բերել:

1908 թ. աշնանը խորհրդարանն առաջին անգամ ընտրվեց ժո-  
ղովրդի կողմից: Կոստանդնուպոլսում գումարված առաջին իսկ  
նիստերում պարզվեց, որ հայ ազգային խորհուրդները մտավոր  
գերազանցություն ունեին մուսուլմանականների նկատմամբ: Նը-  
րանք էին, որ ամենից շատ զարկ էին տալիս նոր ազատություն-  
ներին: Թերևս դա էր, որ առաջ բերեց թուրքերի նախանձը: Սոր-  
հրդարանում ընտրվել էին նաև «հներից» ոմանք, որոնք բար-  
յացական չէին հայերի նկատմամբ:

Այժմ արդեն, թուրքական պետութայն գոյությունից ի վեր, ա-  
ռաջին անգամ քրիստոնյա տղամարդիկ ևս կանչվում էին զին-  
վորական ծառայութայն: Թե սա ինչ արմատական նորարարու-  
թյուն էր, կարող է հասկանալ միայն մեկը, որ մեծացել է թշնամի  
եղբայրների միջավայրում: Տարեց մուսուլմաններից ոմանք դրա  
համար գլուխ էին թափահարում, շատ քրիստոնյաներ էլ դեմ էին,  
որ իրենց որդիները թուրք զինվոր դառնան: Ոչ բոլորն էին հա-  
վատք ընծայում նորամույժ բարեբախտութայնը: Այդ թերահա-  
վատները շատ իրավացի էին, քանի որ հենց հաջորդ գարնանը  
տեղի ունեցավ Ազանայի ջարդը: Այսպիսով, սահմանադրութայն  
ցնծությունը մի այգաբաց էր, որը շատերին բերեց վաղահաս  
մահվան գույժը:

Հետևեցին դժվարին ժամանակներ: Սակայն ամենադժվարները  
դեռ առջևում էին: Պատերազմի լուրերը, որ 1914 թ. օգոստոսին  
ամբողջ Արևելքը տակնուվրա արեցին, առաջին ազդանշաններն  
էին:

Այդ ժամանակ ընտանիքիս հետ արձակուրդի մեջ էի Սաֆե-  
դում՝ Վերին Գալիլեայում: Պատերազմի լուրն իսկույն ընդհատեց  
արձակուրդս: Լավ էր, որ շտապ մեկնեցի Ուրֆա, որովհետև քա-  
ղաքից բացակայում էր մեր հիվանդանոցի վարիչը՝ դ-ր Ֆիչերը:  
Մայիսի վերջերից նա իր արձակուրդն անց էր կացնում Եվրո-  
պայում:

Թուրքական բանակի համընդհանուր հավաքին զորակոչվեց  
նաև մեր հայ բժիշկը, բայց իմ ջանքերի շնորհիվ նրան կրկին ա-  
զատ արձակեցին: Այսպիսով, մեր հիվանդանոցը կարող էր շարու-  
նակել իր աշխատանքը: Միայն թե մեր ղեղազորժ դ-ր Աբրահամը,  
որ նախկինում Ռումկալեյի կառավարական բժիշկ էր և օրենքի

պահանջը բավարարելու համար այդ ընթացքում դարձել էր դիպլոմավոր դեղագործ, լինելով քաղաքային իշխանություն անդամ, խիստ զբաղված էր պաշտոնական գործերով, ուստի ես կողքից վարում էի նաև դեղատան աշխատանքները:

Հենց պատերազմի սկզբին բանակ կանչվեցին տարբեր տարիքի երիտասարդներ, այդ թվում միայն Ուրֆայից մի քանի հազար հայ: Երբ հոկտեմբերին Թուրքիան էլ մտավ պատերազմի մեջ և այն էլ կենտրոնական պետություններից մեկի կողմից, հայերին համակեց մեծ անհանգստություն: Քանի դեռ պատերազմ չկար, զինակոչը մի տեսակ խաղ ու պար էր: Սակայն երբ արյունահեղություն էր սպասվում, հարկ էր մտածել՝ ի՞նչ նպատակով և ինչի՞ համար: Պարզ էր, որ պետք էր մասնակցել: Արդեն տասնյակ հազարավոր հայեր կանգնած էին Թուրքական դրոշների տակ: Իսկ մյուս կողմում նրանց ոուսահայ եղբայրներն էին գորակոչվելու, և կարող էր պատահել, որ եղբայրը եղբոր դեմ կովեր: Ինչպե՞ս կարելի էր դա թույլ տալ: Իհարկե, Բալկանյան պատերազմում հայերը քաջաբար կռվել էին Թուրքական կողմում: Մի՞թե Թուրք գորահրամանատարներն իրենք չէին ասում, որ հայ զինվորն անվեհեր մարտիկ է: Սակայն այն ժամանակ նա սեփական հայրենակիցների դեմ չէր կանգնած:

Ի՞նչ անել հիմա: Արդյո՞ք ծայր առած պատերազմն ի վերջո իրենց ազատ Հայաստան կտար: Եթե Թուրքերը հաղթեին, հույսը քիչ էր՝ չնայած տված նոր խոստումների, թե Թուրքական պետությունը հայերին ցույց կտա իր երախտագիտությունը: Իսկ եթե հաղթեի Անտանտը, որ շատ հավանական էր, կազատագրվեի՞ն արդյոք հայերն այդ դեպքում: Առայժմ ոչինչ հնարավոր չէր անել, քան ենթարկվել Թուրքական զինակոչին:

Թեպետ ոչ մի զինվոր ոգևորությունը պատերազմ չէր գնում, այնուամենայնիվ հայ զինվորները հրաժեշտի պահին քաջաբար, շատ ավելի քաջաբար էին իրենց պահում, քան նրանց մուսուլման ընկերները: Մինչ վերջիններս հարազատների հետ հրաժեշտի պահին ամենատխուր տեսարաններ էին սարքում, հայերն արգելում էին ազգականներին քաղաքի առաջ իրենց վիշտը ցույց տալ: Իսկ ով հետևում էր մնում, խիստ մտահոգված էր այն ամենով, ինչ սպասվում էր:

Հայ ժողովուրդը նման լուրջ գործերում միշտ գտնվում էր իր ազգային ու հոգևոր պետերի ազդեցություն տակ: Կոստանդնուպոլսի պատրիարքն այս անգամ ևս հրաման արձակեց, որ հայերը,

որպես թրքահայատականեր, պետք է հնազանդ լինեն կառավարութեանը և նրան տան, ինչ որ իրենցից պահանջվում է: Դա, իհարկե, արգելք չհանդիսացավ, որ մարդիկ պատերազմական իրադարձություններին հետևեին աճող լարվածութեամբ, ինչպես նաև յուրաքանչյուր քաղաքում այդ իրադարձությունները զաղտնի նիստերում քննարկվեին, որպեսզի հնարավոր ամեն պարագայում պատրաստ լինեին:

Թուրքերի վերջնական հաղթանակը ոչ մի հայ չէր ցանկանում, և թուրքերն անշուշտ դա շատ լավ գիտեին: Այսպիսով հայերը նրանց որոշակի թշնամիներն էին: Եվ Թուրքիան նրանց ճակատ էր ուղարկում: «Ինչո՞ւ է դա ավարտվելու»,— հարցնում էին մարդիկ: Այնուամենայնիվ, հայերը հնազանդվում էին գորակոչին, ստանում իրենց զենքը: Իսկ պետութունը ուներ բոլորովին այլ, շատ ավելի լուրջ թշնամիներ հանձին արաբների՝ հարավում: Նրանք չէին հնազանդվում գորակոչին և զենք ունեին: Ի՞նչ կլինեին, եթե զենքն ուղղեին Թուրքիայի դեմ: Հետևաբար, թուրքերը պատերազմի սկզբին իրենց բախտավոր էին համարում, որ Բալկանյան պատերազմում որպես քաջ զինվոր հայտնի դարձած հայերը հպատակվել էին և չորս ճակատներում էլ իրենց հետ կողք կողքի կռվում էին:

## ԱՆԴՈՐՐ ՓՈԹՈՐԿԻՑ ԱՌԱՋ

Ուրֆան հեռու էր ռազմական գործողությունների թատերաբեմից: Պատերազմն այստեղ շատ նկատելի չէր: Բայց և այնպես տարբեր դեպքերի մասին լուրերը տեղ էին հասնում: Նախ մի փոքր՝ «Կարմիր մահիկի» մասին:

Քանի որ «Կարմիր խաչի» խորհրդանիշից խորշում էր յուրաքանչյուր մահմեդական, որը պատեհ չէր թուրքական իրականութեանը, թուրքերը կյանքի կոչեցին «Կարմիր մահիկը», որը «Կարմիր խաչի» դերն էր ստանձնելու:

Պատերազմի սկզբին կինս դրամահավաք կազմակերպեց ի նպաստ «Կարմիր մահիկի»: Մուսուլման մի բարեկամուհու հետ նա տնից տուն էր գնում, որի ընթացքում նրա համար պարզ դարձավ, թե պատերազմը որքան ժողովրդական չէ: Մեծ նվիրատուները ոչ թե մահմեդականներն էին, այլ քրիստոնյաները: Այո՛, մի մուսուլմանի տնից մահմեդական երկու կանանց էլ դուրս էին

Հանել, սակայն նրանք հետո հետին դռնից նորից ներս էին մտել ու վերջապես մի քանի պրիստել պոկել դժկամ, գրեթե կատաղած թուրքից: Այդ առաջին հավաքի արդյունքը շոշափելի մի գումար էր, որով հնարավոր եղավ մի քանի գրաստ՝ բեռնված վիրակապերով ու դեղորայքով, ուղարկել Հյուսիսարևելյան ճակատ: Այդպես էլ չիմացանք, թե այդ առաքումը, որին այլևս երկրորդը չհաջորդեց, հասե՞լ է իր նպատակին:

Հրաման եկավ, որ Ուրֆայի կանայք կարելու են պարկեր, որոնք լցվելով անապատի ավազով՝ փակելու էին Սուեզի ջրանցքը, որպեսզի զինվորները կարողանային վրայով անցնել: Սա անշուշտ ցնորամիտ գաղափար էր, սակայն ուրֆացի կանայք, այնուամենայնիվ, կարեցին տաս հազար պարկ: Իսկ արդյունքը: Շուտով Ուրֆայում տոնեցին ջրանցքի վրայով զորքի անցնելու իրադարձությունը:

Պատերազմի սկզբին քաղաքում բազմաթիվ հաղթանակներ նշվեցին: Արհեստագործական դպրոցի սաները երաժշտական խումբ ստեղծեցին և նման առիթներով եռանդուն թմբկահարում էին: Մեր հիվանդանոցի բակը ևս բազմիցս արժանացավ այդ երաժշտությունը: Անկեղծ ասած, այդ տոներին ես ինձ լավ չէի զգում, որովհետև հայերի նման ես ևս հավատով չէի վերաբերվում հաղթանակի լուրերին:

Թուրքական կառավարությունը ներմուծեց նաև զրաքննություն: Ամեն նամակի վրա պետք է նշվեր, թե ինչ լեզվով է շարադրված բովանդակությունը: Թշնամիների լեզվով գրված նամակները չէին ընդունվում, մանավանդ՝ անգլերենով: Եթե անգլերեն գրված նամակ էր ուղարկվում, ապա վրան նշվում էր՝ գրված է ամերիկերեն: Այդ դեպքում ընդունում էին:

Առաջին ամիսների ընթացքում զորակոչը գնալով ավելի մեծ տարիքային խմբեր էր ընդգրկում: Նրանց մի քանի օր վարժեցնում էին Ուրֆայում, ապա հնարավորին չափ շուտ ուղարկում ճակատ: Թեև քրիստոնյան ու մուսուլմանը հավասար էին օրենքի առաջ, հենց սկզբից նկատելի էր մուսուլմանի հակակրանքը քրիստոնյա զինվորի հանդեպ: Մի փոքր զրվազ ասվածն ապացուցելու համար:

Միրիական դպրոցի մի ուսուցիչ իր կրթությունն ստացել էր Երուսաղեմի Ծնելլերի դասընթացների ինստիտուտում, քաջատեղյակ էր մարմնամարզական վարժություններին: Զորակոչելով որպես մարզական հրահանգիչ՝ նրան իսկույն լծեցին իր քուրդ

ծառայակիցների վարժեցման գործին: Օրենքով նա անմիջապես պետք է ենթասպայի կոչում ստանար, իսկ եթե մահմեդական լիներ՝ սպայի: Այնինչ եթե նա առավոտները գորանոցի բակում խստապահանջ ուսուցիչ էր, կեսօրից հետո քուրդ ենթասպաները նրան արտաքնոցի հորերն էին մաքրել տալիս:

Վաղուց թուրքական բանակում սկսվել էր դասալիքների արտահոսքը: Մի անգամ նույնիսկ հարյուր հոգիանոց խմբից, որը գորավարժությունները շարունակելու համար Ուրֆայից Այնթապ պետք է տեղափոխվեր, Այնթապ ժամանեց միայն երեք հոգի: Եվ նրանք քրիստոնյաներ էին: Տեղացի սպան ասել էր ծիծաղելով. «Է՛հ, դուք էլ կարող եք փախչել, որպեսզի կարողանանք ղեկուցել, թե ամբողջ խումբը կորել է»:

Վերոհիշյալ ուսուցչին նույնպես հետագայում Այնթապ էին տեղափոխել, և այնտեղ լավ վերաբերմունքի չարժանանալով՝ նա նույնպես փախել էր: Ապաստանեց իմ տանը, մինչև որ Բաղդադի երկաթուղու շինարարությունում ես նրա համար տեղ գտա: Մինչև պատերազմի վերջը նա բարեխիղճ ծառայեց երկաթուղու շինարարությունում և դրանով իսկ իր երկրին շատ ավելի օգուտ տվեց, քան եթե զինվոր մնար: Ի դեպ, այն օրը, երբ նա երկաթուղու գնալու համար, որը գտնվում էր 75 կմ հեռավորության վրա, թողել էր իմ տան կտուրի պաշտպանությունը, քաղաքի մուտքի մոտ ընկել էր ոստիկանների ձեռքը: Պետք է ինքնություն վկայական ցույց տար՝ ապացուցելու համար, որ դասալիք զինվոր չէ: Քաջ գիտենալով, թե այդ պահին ինչ վկայական է հարկավոր, իր ձեռքի տասը ոսկեդրամը տվել էր՝ բացելու համար երկաթուղու տանող ճանապարհը:

Մի դեպքի մասին ևս ուզում եմ հիշատակել, որը տեղի ունեցավ խաղաղ այդ ժամանակաշրջանում, քանի որ այն ինձ պարտավորեցրեց մի բարեգործություն կատարել, որի մասին երբևէ չէի մտածել:

1914 թ. դեկտեմբերին Ուրֆայում անսպասելի հայտնվեցին պարսիկ երկու արքայազներ: Նրանցից մեկը քաղաքի մերձակայքում ընկել էր ձիուց և ոտքը դուրս գցել: Նա եկավ ինձ մոտ բուժվելու: Երբ արքայազները պատրաստվում էին շարունակելու իրենց ճանապարհորդությունը, ես, որպես բժիշկ և խորհրդական, նրանց հետ պետք է մեկնեի Պարսկաստան: Սակայն ասացի, որ կարող եմ մինչև Բաղդադ ուղեկցել. այնտեղից վերադառնալու էի: Հույս ունեի, որ դրանով կարող էի ոչ միայն որպես բժիշկ օգ-

տակար լինել, այլև լցնել միսիոներութեան դատարկված դրամարկղը, քանի որ մեկ օրվա համար ստանալու էի 25 Ֆրանկ:

Այդ երկու արքայազնները ժամանակին ընկել էին ոռուսների ձեռքը ու վտարվել Շվեյցարիա: Այնտեղ նրանք ապրել են չքեղ և ուրախ կյանքով, քանի որ ոռուսական կառավարությունը յուրաքանչյուրին ամսական վճարել է 4000 Ֆրանկ: Դրանով հնարավոր էր լավ ապրել: Արքայազններից մեկը ամուսնացել էր չվեյցարուհու հետ: Վերջինս ևս այս խմբի մեջ էր և սպասում էր իր առաջնեկին: Հատկապես այդ էր պատճառը, որ ներկայությունս ուղևորութեան ընթացքում անհրաժեշտ էր:

Ճանապարհորդությունը հարմարավետ էր ու հանգիստ: Խմբի մեջ էր նաև պարսից մի գեներալ: Չնայած խումբը եկել էր Հալեպից և այնտեղի հյուպատոսի կողմից դրամական միջոցներով ապահովվել՝ գեներալը ստիպված եղավ Ուրֆայից վերադառնալ Հալեպ՝ հյուպատոսից ավելի փող պահանջելու: Ռազայում գեներալը կրկին միանալու էր արշավախմբին: Սակայն քանի որ նա իրեն երկար սպասել տվեց, Ռազայում խումբը մի քանի օր դես ու դեն էր շրջում՝ արդեն սովորույթ դարձած սննդամթերքի բռնազրավումներ կատարելով վաճառականներից: Ապրանքի դիմաց վերջիններս մի թղթի կտոր էին ստանում, որի վրա գրված էր, որ զինվորական այսինչ խումբը այսինչ ապրանքն է բռնազրավել:

Թե հայերի համար ինչ էր նախատեսված դեռևս այդ ժամանակ՝ 1915 թ. հունվարին, ես իմացա այստեղ: Թուրք հազարապետ Նեֆիս բեյը, որը աչքի էր ընկել 1908 թ. Կոստանդնուպոլսում Թաշղչայի վրա ձեռնակված գրոհի ժամանակ, այն մարդը, որ այն ժամանակ ուրիշների նման հայերի հետ գրկախառնվել ու համբուրվել էր, ճանապարհ ընկած այս մեր խմբի առաջնորդն էր: Մի երեկո նա մեզ պատվեց դասախոսություններ: Խոսեց հայերի մասին և բացատրեց, որ թուրքերի համար անկարելի է հայերի հետ շարունակել համատեղ ապրել, որ պատերազմը հնարավորություն էր տալու թուրքիային՝ նրանցից ազատվելու բնաջնջման և կամ արտաքսման միջոցով: Հազարապետի ճառն անմիջապես լրացվեց նման մի այլ ճառով արքայազններից մեկի՝ Սալահ էդ Դովլեի կողմից: Նա խոսեց այն մասին, որ Պարսկաստանում նույնպես համոզվել են հայերի անվստահելիության հարցում, և պատերազմի հաղթական ավարտից հետո հայերին բնաջնջելու մտադրություն կա:



Կրակոտ այդ երկու ճառերից հետո ես անկարող էի մի քանի խոսք չասել: Մատնանչեցի, որ երկրագնդի վրա ամեն ժողովուրդ ապրելու իրավունք ունի, ըստ որում՝ այնտեղ, որտեղ ծնվել է: Եվ որ այդ երկու երկրների հայերը ևս ունեն ապրելու իրավունք այնտեղ, որտեղ ծնվել են: Նրանց պետք էր ոչ թե բնաջնջել, այլ անփոխարինելի բարեկամներ դարձնել, որից ամենից մեծ օգուտը կքաղեր պետությունն ինքը: Ապա ուղիղ դիմելով արքայազնին՝ շարունակեցի.

– Իսկ Ձեզ, Ձե՛րդ մեծություն, այն բանից հետո, երբ գիտեմ, որ Դուք նույն ձևով եք մտածում, ինչպես պարոն Հազարապետը, ցանկանում եմ, որ երբեք չհասանք Պարսկաստան, որպեսզի չկարողանաք չարիք հասցնել Ձեր հայ հայրենակիցներին:

Հաջորդ առավոտյան արքայազնը խնդրեց ինձ՝ իր հետ ձիով մի պտույտ կատարել: Զիավարելու ժամանակ մեզ ուղեկցող թուրք զինվորներին հրամայեց մի քիչ ետ մնալ, որից հետո նա ինձ՝ իր բժիշկ խորհրդականին, սկսեց բացատրել, որ նա անչուչտ հայերի մասին նույն կարծիքին է, ինչ որ ես, սակայն երեկ երեկոյան թուրք հազարապետին, որը ապուշի մեկն է, ցանկացել է իր ճառով հաճոյանալ:

Այդ ճանապարհորդության ընթացքում էր նաև, որ տեղեկացա հետևյալի մասին: Այս նույն արքայազնը այն ժամանակ, երբ պարսիկները ընդունել էին իրենց սահմանադրությունը, հյուրընկալված էր Ժնևում: Նա այնտեղից փախել է և, որպեսզի հնարավորին չափ շուտ փրկի իր երկիրը, ղերվիչի պես հազնված Բեսարաբիայից ճանապարհվել է Հարավային Ռուսաստան: Առաջին պարսկական գյուղը հասնելուն պես հրավիրել է իր ընկերներին, ինքնությունը ցույց տվել, ապա ցեղակիցներին պաշքարի կոչ է արել հեղափոխության դեմ: Կարճ ժամանակում իր հրամանատարության ներքո հավաքելով երեսուն հազարանոց մի բանակ՝ հարձակվել է հայազգի Եփրեմ խանի գլխավորած երեք հազարանոց ջոկատի վրա: Մարտը սակայն ավարտվել է Եփրեմի փառահեղ հաղթանակով: Հենց այստեղից էլ արքայազնի թշնամությունը հայերի դեմ:

Նշեմ, որ այդ ճանապարհորդությունը արքայազններին բարեբախտաբար Պարսկաստան չհասցրեց: Երբ նրանք հասան Ֆելուշա (Բաղդադից մեկ օրվա ճանապարհ), բանակի հրամանատարից հրաման եկավ՝ վերադառնալու: Ասվեց, որ արքայազնները Բաղդադի համար անցանկալի հյուրեր են: Հազարապետը անմի-

Ղապես մենակ մեկնեց խալիֆաների քաղաքը և այնտեղից լուր բերեց, որ Բաղդադում ապրում է 12 հազար պարսիկ. եթե արքայազները ժամանեն, հնարավոր է, որ խիստ անցանկալի վիճակ ստեղծվի: Այսպիսով, արչավախուժը վերադարձավ:

Սակայն արքայազները մտածում էին փախուստի մասին: Այսքան մոտ լինելով իրենց երկրին՝ ուզում էին փախչել ու անապատով տեղ հասնել: Առաջարկեցին, որ ուղեկցեի նրանց: Երբ մերժեցի, խնդրեցին, որ իշխանուհուն ինձ հետ տանեմ Ուրֆա, որտեղ նա կարող էր սպասել իր երեխային: Իրենց մեծությանը խորհուրդ տվեցի չփախչել, և նրանք վերադարձան Դեյր Էլ Ջոր՝ սպասելով նոր հրահանգների: Իսկ ես վերադարձա Ուրֆա:

### ՓՈԹՈՐԻԿԸ ՊԱՅԹՈՒՄ Է

Երբ արքայազների հետ կատարած ուղևորությունից վերադարձա, կինս ու երեխաներս դիմավորեցին ինձ Ուրֆա քաղաքի մուտքի մոտ: Նրանք եկել էին քաղաքամերձ այգիների միջով: Այնտեղ թրքուհիները ճանաչելով կնոջս՝ որպես գերմանուհու, ձայնել էին. «Դուք գերմանացիներդ եք, որ մեզ ներքաշեցիք այս պատերազմի մեջ: Ձեր մեղքով է, որ մեր զավակներին ուղարկում ենք մասնակցելու այս դաժան պատերազմին, որտեղից նրանք չեն վերադառնալու: Բայց սպասե՛ք, կգա ժամանակը, որ քեզանից ու քո երեխաներից մեր վրեժը կլուծենք»: Այդ ժամանակ իմացանք, թե ինչ տրամադրություն է տիրում:

Ուրֆայի հայերի շրջանում արդեն ամեն տեսակի լուրեր էին շրջում: Ոոսոսում էին այն մասին, որ ոռուները գրավել են Վանն ու Բիթլիսը և առաջանում են դեպի Դիարբեքիր: Մի քանի շաբաթից նրանք կլինեն Ուրֆայում: Թուրքերից լսում էի, թե ինչպիսի անվստահություն էր ստեղծվել հայերի հանդեպ, որոնց կարծեցյալ դավաճանություն մասին ամեն տեսակի լուրեր էին շրջում բոլոր ճակատներում: Իսկ Ուրֆայում տեղացի հայերի մասին ոչ մի վատ բան չէին խոսում: Բայց երբ բոլորը տոնում էին Սուեզի ջրանցքի անցման հաղթական լուրը, և որոշ հայեր քմծիծաղով էին ընդունել այն, հաջորդ օրն իսկ նրանք ձերբակալվել էին: Լուրջ իրավիճակ էր:

1915 թ. գարունը իր գեղեցիկ ճաճանչները փոեց վայրենացած մարդկություն վրա հատկապես Ուրֆայի շրջանում: Կնոջս արձա-

կուրդ էի ուղարկել Բաղդադի երկաթուղու վրա աշխատող բարեկամների մոտ, իսկ ես Ուրֆայում ձեռքիցս եկածն էի անում Հիվանդների մի ամբողջ բանակի համար: Արձակուրդից վերադառնալու օրերին մերոնց հետ արտասովոր մի բան կատարվեց: Կինս կարծելով, որ ես նրան ընդառաջ եմ գնալու մինչև Թեյ-էբիադ, ոտքով ճանապարհ էր ընկել արձակուրդի վայրից: Կես ժամ հետո տեսել է ինձ իմ սև հովատակին հեծած և զարմացել պարանոցիս սպիտակ փաթթոցի վրա, որ ես երբեք չեմ կրել: Հաջորդ վայրկյանին այդ պատկերն անհետացել է՝ թողնելով այն տպավորությունը, թե ձիավարելով դեպի հովիտ եմ իջել: Սակայն արի ու տես, որ հստակ հայտնված պատկեր, և ոչ էլ իր ամուսինն է հայտնվել: Իրականում ժամանակ չունենալու պատճառով չէի մեկնել Թեյ-էբիադ, որն Ուրֆայից 60 կմ հեռու էր: Այդ պահին հիվանդանոցում զբաղված էինք հյուսիսարևելյան ճակատից բերված առաջին վիրավորներով: Հաջորդ օրը, սակայն, մեկնեցի՝ քաղաքի մերձակայքում դիմավորելու կնոջս ու երեխաներիս: Կոկորդս ցավում էր, և ես սպիտակ վիրակապով էի, ճիշտ այնպես, ինչպես կինս մեկ օր առաջ տեսել էր ինձ: Նաև սև հովատակ էի հեծել: Երբ կինս ինձ այդպես տեսավ, սարսափեց, որովհետև Հիվանդ էի: Կարճ ողջույնից հետո շրջվեցի ու առաջ անցա, իսկ երբ կինս տեղ հասավ, ես արդեն անկողնում էի: Հաջորդ առավոտ արդեն զառանցում էի տաքության մեջ: Ուրֆայում բժիշկները չէին կարողանում որոշել, թե ինչ հիվանդություն ունեի, բայց որ բանը լուրջ էր, պարզ էր նրանց համար: Կինս, երեխաներս ու բարեկամներս ախ ու վախի մեջ էին: Եկեղեցիներում աղոթում էին իմ ապաքինման համար: Ասում էին, որ անգամ մզկիթներում աղոթքի մեջ Հիշվել է եղբայր Յակոբի անունը: Ընտանիքի հավատարիմ բարեկամ միսիոներ Լեսլին սեփական նախաձեռնություններ Այնթապից հրավիրեց նշանավոր բժիշկ Շեփարդին: Նա ժամանեց հիվանդություն 17-րդ օրը: Ճգնաժամային օրս էր, քանի որ ջերմությունս 40 աստիճանից իջել էր 35-ի: Բժիշկը, դեռ ինձ չտեսած, նախասենյակում դիտելով ջերմության կորագիծը՝ ասաց. «Սա բժավոր տիֆ է»: Նույն բույսից գիտեինք, որ այդ հիվանդությունը նաև Ուրֆա էր մուտք գործել: Իրականում ես առաջին բժավոր տիֆով հիվանդը չէի: Ճակատից վերադարձած մի զինվոր էր բերել այդ հիվանդությունը: Նրանից վարակվել էր մեկ այլ զինվոր, որի թևից մեր հիվանդանոցում կոտորակառուների մի բեկոր հանեցինք, և նրանից էլ բժավոր տիֆը ինձ էր անցել:

Իմ հիվանդությունից օրերին Ուրֆայի ամենալավ հայ ընտանիքներին տասնութը արտորվել էր Ռագա: Ամեն օր ձերբակալվում ու բանտ էր նետվում այս կամ այն հայր: Հազիվ էի փոքր-ինչ հիվանդությունից ապաքինվել, որպեսզի կարողանամ մի քանի քայլ անել, երբ ինձ մոտ եկավ հայերի մի պատվիրակություն, որը ներկայացրեց հայերի՝ զնայով ավելի վատթարացող իրավիճակը: Խնդրեցին մի բան նախաձեռնել հայերի փրկության համար: Նախ մտածեցի եվրոպա մեկնելու մասին: Եթե դ-ր Լեփսիուսի հետ քննարկեի ժողովրդի վիճակը, հավանաբար նա մի ճար կգտներ: Միայն թե այլևս շատ ուշ էր, որովհետև, ըստ հայերի վկայությունից, կայսրության շատ վայրերում արդեն ջարդեր են տեղի ունեցել: Այսպիսով, որոշեցի անմիջապես Հալեպ մեկնել, որպեսզի այնտեղ երեք հյուպատոսներին՝ գերմանացի, ավստրիացի և ամերիկացի, իրագեկեմ ողբերգական իրավիճակի մասին:

Իմ հույսը հատկապես Ամերիկան էր, որն այժմ իր քաղաքական մեծ կշիռ ունեցող նժարը պիտի դներ կշեռքի թաթին: Սուր ճոճելը իր հերթին պետք է օգներ, չէ՞ որ դրա ճիշտ ժամանակն էր, քանի որ Գերմանիան ու Թուրքիան պետք է մտածեին այն մասին, որ խոհեմություն չէ նոր թշնամիներ ձեռք բերելը: Ավելի ուշ պարզվեց, որ Ամերիկան, ճիշտ է, պաշտոնական քայլեր ձեռնարկել էր Բարձր դռան նկատմամբ և իր ափսոսանքը հայտնել հայերի դեմ թուրքերի վերաբերմունքի կապակցությամբ, սակայն ամենևին սուր չէր ճոճել:

Հալեպում իմ ձեռնարկած քայլերը մնացին անհետևանք:

Ուրֆա վերադառնալիս ճանապարհներին տեսա ուրուրների կողմից հոշոտված հայերի դիակներ: Մի նոր բան, չլսված մի բան էր սկիզբ առել՝ զանգվածային տեղահանություններ:

Ուրֆա հասած առաջին տարագիրները կանայք ու երեխաներ էին Խարբերդից: Որտե՞ղ էին նրանց ամուսիններն ու հայրերը: Ասացին, որ կանանց հետ ճանապարհ էին ընկել, իսկ Մալաթիայից տարվել էին այլ ճանապարհով: Անշուշտ, կանանցից շատերը համարձակվում էին ասել, որ նրանց սպանել են: Մյուսները չառունակում էին հուսալ, որ տղամարդիկ կհասնեն իրենց հետևից:

## ՄԱՀ ԱՄԵՆՈՒՐԵՔ

1915 թ. ամառվանից մինչև 1916 թվականի ամառը գրեթե ամեն օր Ուրֆա էին գալիս բռնագաղթվածների շարասյուններ: Նրանք տեղ էին հասնում գնալով ավելի թշվառ վիճակում: Երբ Ադիյամանից (Ուրֆայի մոտ մի փոքրիկ քաղաք) տեղահանված հայուհիներին էլ մեր քաղաքի մոտով անցկացրին, պարզ դարձավ, որ հերթը հասնելու էր Ուրֆայի բնակչությանը: Ի՞նչ կարելի էր անել: Արդյոք հնարավո՞ր էր խույս տալ: Այո՛, եթե ուսաները գային: Այն փաստը սակայն, որ 500 ներկալվածներ Ուրֆա բերվեցին, եզրակացնել էր տալիս, թե թուրքերը ուսաներին Ուրֆայում չեն սպասում: Այսուհանդերձ հայերը այդ հույսն էին փայփայում:

Ոմանք ստորագրություններ էին հավաքում և դիմում գրում նահանգապետին՝ խնդրելով, որ ընդունեն մահմեդական կրոնը: Սակայն այդ միջոցն այլևս չէր օգնում, քանի որ կառավարությունը չէր պատասխանում դիմումներին: 1915 թ. օգոստոսի սկզբին երկու թուրք պաշտոնյա հայտնվեցին Ուրֆայում: Դեռ նրանցից առաջ լուր էր հասել, որ նրանց նպատակն էր ամեն գնով ոչընչացնել հայերին և որ զրա համար նրանք ունեին բարձրագույն իշխանության թույլտվությունը: Հագիվ Ուրֆա հասած՝ նրանք կարգադրեցին սպանել բանտարկյալներին: «Ինչո՞ւ չարունակել նրանց կերակրելը»,– ասել էին նրանք: Քանի որ այդ բանտարկյալների հիմնական մասը հայ երեխիկներ էին, ուստի նրանց մահապատիժը չպետք է կայանար ուրֆացիների ձեռքով: Դրա համար նրանց հանեցին Դիարբեքիր գնացող ճանապարհի վրա, որտեղ նրանց կյանքին վերջ տվեցին Սևերեկի վարձու մարդասպանները: Նույն բախտին արժանացան նաև Եդիկույուի հայերը, ինչպես նաև Հյուսիսում գործող հայերի աշխատանքային գումարտակը՝ մոտ 400 մարդ:

1915 թ. մարտից սկսած՝ այլևս հայ տղամարդկանց չէին զորակոչում: Նրանք հավաքագրում էին երիտասարդ ուժերին և, փոխանակ ռազմաճակատ ուղարկելու, մտցնում էին աշխատանքային գումարտակների մեջ՝ կայսրության տարբեր վայրերում վաղուց անհրաժեշտություն դարձած ճանապարհներ կառուցելու: Սակայն նրանք ոչինչ չհասցրին անել, որովհետև բոլոր այդ աշ-

խատանքային զինվորները անմիջապես զոհ դարձան ջարդերի, որոնց ընթացքում մեծ մասամբ գործածվում էր դանակը: Գնդակը խնայվում էր արտաքին թշնամու համար: Տեղերից մեկում մարդկանց ստիպում էին հերթով բարձր ժայռից անդունդը նետվել՝ նախապես յուրաքանչյուրին դանակի մի քանի հարված հասցնելով:

Աշխատանքային գումարտակները համայրվում էին ոչ միայն հայերով, այլև այլ քրիստոնյաներով: Սրանց օգտագործում էին որպես գերեզմանափորների: Իհարկե, թաղման գործը բավականին դժվար էր: Սպանվածների թիվը չափազանց մեծ էր: Հապշտապ ընդհանուր գերեզմաններ էին փորում և հապշտապ էլ ծածկում: Պատահում էր, որ հաջորդ ձմռանը հորդառատ անձրևները դիակները հովիտ էին քշում, այնպես որ հովտի երկայնքով տարիներ անց մարդկային ոսկորներ էին հայտնվում՝ դժգույն ու արևից այրված: Մեզինքն ոչ հեռու՝ Ուրֆայի հարավում, ճանապարհին ընկած էր մի խոր ջրհոր: Դրա մեջ է, որ ոչ հայ զինվորները վերին հրամանով լցրել էին նույն նախօրեին ճամբարի առաջ ջարդի ենթարկված իրենց հայ ընկերներին: Նրանց մեջ դեռևս կենդանի մնացածներ են եղել: Մեկը նույնիսկ, որ դեռ ի վիճակի է եղել քայլելու, ջրհորն է նետվել:

Այդ սոսկալի օրերին էր, որ երկու թուրք ոստիկան, ուժ գործադրելով, հայերից մեկի տանը փախստական էին որոնում: Այնպես պատահեց, որ թաքստոցից նրանց դիմավորեցին կրակոցով, որի հետևանքով սպանվեց ոստիկաններից մեկը: Օգոստոսի 19-ին էր՝ ցերեկվա ժամը 4-ը: Հենց որ լուրը տարածվեց, ջարդի հրաման տրվեց: Ես տեսա, թե ինչպես իմ հարևան քրդերը տուն չտապեցին, հրացան, սուր կամ մանգաղ վերցրին և ապա քաղաքի վրա հարձակվեցին՝ ճանապարհին սպանելով ամեն պատահած քրիստոնյայի: Մի ակնթարթում դրացի քրիստոնյաներ ապաստանեցին մեր հիվանդանոցում: Դրա համար շատ մեծ էր վտանգը, որ հրոսակախումբը քաղաքից վերադառնալիս հարձակվեր հիվանդանոցի վրա: Մահմեդական ծառայիս ուղարկեցի նահանգապետի մոտ՝ պաշտպանություն խնդրելու: Նա անմիջապես երկու ոստիկան ուղարկեց: Սակայն նրանց ժամանելուց հետո այդ երեկո այլևս ոչ մի քրիստոնյայի թույլ չտրվեց հիվանդանոց մտնել: Ոստիկանները նրանց դիմադրում էին: Մեր հարևան տունը բերդանման մի շինություն էր և պատկանում էր մի հայի, որն ուներ յոթ չափահաս որդի: Մթնշաղին քուրդ արյունարբու դրացիները

քաղաքից վերադառնալիս ուզեցին գրոհել տան վրա, սակայն դռներն արդեն կողպված էին: Հետո եկավ գիշերը, ու լուռություն տիրեց:

Ընտանիքս գտնվում էր քաղաքից մեկ ժամ դուրս՝ խաղողի այգիներում՝ հովանավորյալ հայերի մի մեծ խմբի հետ: Արդյոք ի՞նչ եղան նրանք: Սակայն այդ գիշեր ես չէի կարող թողնել հիվանդներին ու նրանց, ովքեր պատսպարվել էին հիվանդանոցում:

Հաջորդ առավոտյան քաղաքը կրկին խաղաղ էր: Առավոտյան այցելեցի նահանգապետին՝ շնորհակալություն հայտնելու երեկվա ուղարկած պաշտպանության համար: Ճանապարհին անցա բազմաթիվ սպանվածների կողքով, որ ընկած էին փողոցներում: Զկարողացա նահանգապետին չարտահայտել իմ դժգոհությունը երեկվա պատահարների կապակցությամբ: Նահանգապետն ինքն էլ ցավ հայտնեց այդ առթիվ և հայտնեց, որ այժմ իրեն հաջողվել է վերստին խաղաղություն հաստատել: Երեկ Կոստանդնուպոլսից եկած այն երկու պարոնները սանձերը իր ձեռքից խլել էին, իսկ դրանք այսօր կրկին իր ամուր ձեռքերում են. նա ինձ հավաստիացրեց, որ կարող եմ հանգիստ լինել:

Երեկվանից նկատեցի դեղատան իմ օգնականի բացակայությունը: Երբ սկսվեց ջարդը, նա նամակատուն գնալու ճանապարհին էր: Ենթադրում էի, որ պատանին ևս զոհվել է: Սակայն նամակատուն գնալու ու այնտեղից վերադառնալու ճանապարհին ես նայեցի սպանվածներին ու նրանց մեջ չգտա նրան: Կեսօրից հետո իմ թուրք բարեկամը նրան ողջ-առողջ բերեց հիվանդանոց: Երեկ, երբ սկսվել էր սպանդը, նա պատանուն իր հետ տուն էր տարել՝ փրկելով ստույգ մահից: Եվ դա մի թուրք էր:

Քանի որ այժմ իրավիճակը հանդարտվել էր, գնացի խաղողի այգիները՝ մերոնց հետևից: Բարեբախտաբար նրանք քիչ բան գիտեին երեկվա անցուդարձի մասին՝ բացի մերթ ընդ մերթ հեռվից եկող կրակոցներից: Հաջորդ առավոտյան, սակայն, մերձակա խաղողի այգիների կողմից դարձյալ սկսվեցին կրակոցներ, և տեսանք, թե ինչպես մի քանի հոգով սպանեցին մեկին: Հետո իմացանք, որ սպանվածը փախել էր մոտակա աշխատանքային գումարտակից և անշուշտ հայ էր:

Հասկանալի էր, որ հաջորդ օրերին հայերը տնից դուրս չէին գալիս: Ոչ էլ փողոցներում թափված դիակներն էին թաղվում: Վախը, որ ջարդը կարող էր վերսկսվել, շատ մեծ էր: Թեև կառավարությունը հայկական թաղը մունետիկներ էր ուղարկել, որոնք

Հորդորում էին բնակիչներին՝ անցնել աշխատանքի, հայերն այլևս ոչչի չէին վստահում, մի բան, որ շատ հասկանալի էր:

Սպանվածներով թուրքերն իրենք պետք է զբաղվեին: Բեռնակիրները պարանով կապում էին դիակների ոտքերից ու երեսն ի վար փողոցներում քարչ տալով՝ տանում էին քաղաքից դուրս ու գցում փոսի մեջ:

Երբ ջարդի հաջորդ առավոտ շուկա գնացող շրջակայքի բնակիչները, բացառապես մահմեդականներ, քաղաք եկան, չզարմացան՝ տեսնելով հայ արհեստավորների կրպակները փակ կամ թալանված: Այդ մարդկանց համար ամենածանրը այն էր, որ այլևս դժվար էր հայթայթել ուտելիք, մանավանդ հաց, քանի որ հացթուխները բոլորն էլ հայ էին: Ճիշտ է, շատ տներում մարդիկ իրենք էին թխում իրենց ընտանիքի հացը, սակայն ուրիշների համար ևս թխելու հարմարություններ չկային, պետք էր փուռ ունենալ: Վիճակից դուրս գալու համար մի քանի թուրք փողոցում յուզաբլիթ թխելու հարմարանք տեղադրեցին, որը փոփ կարիք չուներ: Սակայն իրադրությունը մնում էր ծանր: Վերջապես՝ կոտորածից վեց օր անց, երկար խնդրանքից հետո հայ հացթուխներից ոմանք բացեցին իրենց կրպակները: Կառավարությունը նրանց ապահովության համար խոստացավ ամեն փոփ առաջ մի ոստիկան կանգնեցնել, և այդ խոստումը կատարվեց:

1915 թ. օգոստոսն ու սեպտեմբերն այն ամիսներն էին, երբ ճանապարհները լեցուն էին բռնագաղթվածների հոծ զանգվածներով, քանի որ այդ ժամանակ Անատոլիայի գրեթե բոլոր քաղաքներից հայերին տեղահանում էին: Դժվար է պատկերացնել, թե ինչպես այդ քաղաքները մարդաթափ եղան: Դա արվեց տարբեր եղանակներով: Էրզրումում, օրինակ, որտեղ ուունները սահմանամերձ շրջաններում արդեն սկսել էին գրոհները, հայերը դեռ կարողացան ընտանիքներով քաղաքից հեռանալ՝ իրենց սայլերով, ձիերով ու ավանակներով, ինչպես նաև որոշ տնային իրերով: Սկզբնական շրջանում տեղահանումներն իրագործող պաշտոնյաներն իրենք էլ չգիտեին, թե դրանք ինչպես պետք է կատարվեին: Ասում էին, որ տեղահանվելու են հայերի այն տարրերը, որոնք բնակվում էին սահմանի մոտ: Հետևաբար, պաշտոնյաներից շատերը հաց էին մատակարարում այն ճամբարներին, ուր հանգրվանելու էին տարագիրները: Սակայն վիճակը օր օրի վատանում էր: Ճակատներից տարածվում էին նորանոր լուրեր, որ իբր այս կամ այն հայ ճակատային փախստական կամ նույնիսկ բացար-



ձակ դավաճան է դարձել: Տեղահանման ենթակա եղան ոչ միայն սահմանամերձ տարածքների բնակիչները, այլև Անատոլիայի բոլոր հայերը: Բացի դրանից՝ բռնագաղթը ընդունում էր ավելի հանկարծակի բնույթ, և երկրի այդ դավաճաններին, ինչպես թուրքերն էին անվանում հայերին, շուտով թույլ չտվեցին այլևս լավ նախապատրաստվել տարագրության համար: Ապա հրաման արձակվեց, որ պետք է ոչնչացվեին աքսորում գտնվող բոլոր տղամարդիկ, որոնք տարիքոտ չէին համարվում:

Այդպես էլ եղավ. Ուրֆայով անցնում էին միայն կանայք ու երեխաներ ավելի թշվառ խմբերով: Քաղաքում մի մեծ իջևանատուն կար, որտեղ առաջներում գտնվում էր գերմանական որբանոցը: Այն դարձել էր միջանկյալ ճամբար, որը 1915 թ. Հուլիսից մինչև 1916 թ. գարունը ընդունեց տասնյակ հազարավոր բռնագաղթվածների:

Մի բուպե պատկերացրեք՝ 2000 բնակչություն ունեցող եվրոպական մի մեծ գյուղ հաջորդ առավոտյան ժամը 8-ին արտագաղթելու հրաման ստանա: Թույլ էր տրվում վերցնել միայն ամենամանհրաժեշտ իրերը. հիվանդներ, հղիններ, բոլորը պետք է մասնակցեն: Եթե նույնիսկ լինեն երթևեկության միջոցներ, իրավունք չկա օգտվել դրանցից: Ճանապարհին ամեն աքսորյալ ինքն է հոգալու պարենավորման հարցը: Սա աներևակայելի բան է: Եվ այսպես ամիսներ շարունակ ամբողջ Անատոլիայով մեկ վխտում էին բռնագաղթվածների շարասյուները: Մեռածներին պարզապես թողնում էին գետնին պառկած ու գնում: Եթե խմբերն անցնում էին գետերի կամ խոր ջրհորների մոտով, ապա կյանքից հոգնածները նետվում էին դրանց մեջ: Իսկ եթե խոսենք այն մասին, թե ինչ եղան երիտասարդ աղջիկները, որոնք բոլորն էլ օրենքից դուրս էին... Այնքան ժամանակ, քանի առանձին աղջիկներ իրենց մոտ փող ունեին, երբեմն կարողանում էին որոշ ժամանակ խայտառակությունից փրկվել, որովհետև այդ օրերին փողը զազրամոլների համար նախընտրելի էր, քան մարմինը: Սակայն շատ շուտով գալիս էր այն պահը, երբ վերջին փողն էլ էր սպառվում: Այդ ժամանակ հերթը գալիս էր պատվին: Մի անգամ տեսա, թե ինչպես Ուրֆայով էին անցկացնում մի խումբ լրիվ մերկ կանանց, որոնց առաջնորդում էր մի ոստիկան, և ի՞նչ սարսափելի տեսք ունեին նրանք: Այդ կանանցից մեկը ծլկեց իմ հիվանդանոց: Ահա թե ինչ պատմեց նա.

«Երբ Խարբերդում հրաման տրվեց, որ վաղը մեր Թաղի հերթն է, ես հոգացի, որ երկու աղջիկներս էլ լավ հագուստեղեն ունենան: Ամուսինս բարբախտաբար Ամերիկայում էր, այլապես նա այժմ արդեն մահացած կլիներ, քանի որ մեր Թաղի տղամարդկանց արդեն հավաքել-տարել էին և, ինչպես հետո լսեցինք, սպանել: Քանի որ չկարողացանք գրաստ ձարել, պետք է ոտքով գնալինք: Ճանապարհ ընկնելուց առաջ երեկոյան վերջին անգամ հավաքվեցինք մեր եկեղեցում: Լաց ու կոծի միջից միայն մի աղերս էր լսվում. «Ախ Աստված (բնագրում՝ յա՛ Աստված), խղճա զմեզ»:

Հաջորդ առավոտյան ճանապարհ ընկանք դեպի Մալաթիա: Գնալով մեր խումբը մեծանում էր, այլ վայրերից տղամարդիկ էլ միացան մեզ: Մալաթիայում, սակայն, բաժանվեցինք: Տղամարդկանց տարան: Մենք (կանայք ու երեխաները) ավելի ուշ պիտի հետևեինք նրանց: Շաբաթներ անց կրկին մոտեցանք Եփրատին, որի վրայով մի անգամ արդեն անցել էինք Խարբերդի ու Մալաթիայի միջև գտնվող փայտե կամրջով: Այստեղ, սակայն, կամուրջ չկար: Օրերով պիտի սպասեինք, մինչև մյուս ափը փոխադրվելու հերթը մեզ հասներ: Իսկ սպասողները հաղարավորներ էին: Ոմանք քաջություն ունեցան վերջ տալու իրենց տառապանքներին, քանի որ հորձանքը մոտ էր: Բայց ես դեռ երեխաներ ունեի ու մի քիչ էլ փող: Երբ վերջապես գետն անցանք, հասանք մի անրնակ քարաստան: Մեկ էլ քրդերը մեզ բոլոր կողմերից շրջապատեցին ու կրակ բացեցին մեր խմբի վրա: Դա սոսկալի հրմուշտոց ստեղծեց: Շատ երեխաներ ու կանայք ոտքի տակ ընկնելով՝ խեղդամահ եղան: Իսկ արյունարբու քրդերն ավելի ու ավելի մոտեցան: Վերջապես երեկոն իջավ, ոճրագործները հեռացան, սակայն հաջորդ օրը եկան՝ կենդանի մնացածների ու սպանվածների հագուստները հանելու: Ես ու երեխաներս մերկ էինք, բայց ոչ վիրավոր: Կանանցից շատերը դեռ կարող էին քայլել: Բայց ո՞ւր գնալին: Այսպես մնացինք տեղում քաղցած, ծարավ ու մահ տենչալով: Երեկոյան արդեն ուժասպառ էի եղել, մտածեցի՝ վերջս եկել է: Ականջներս տնքում էին երեխաներիս ձայնից, որ անդադար լաց էին լինում ու պապակ լեզվով ասում. «Մայրիկ, հաց, մայրիկ, հաց (բնագրում՝ Mairik, Haz, Mairik, Haz): Այդ պահին մի քուրդ էր անցնում մեր մոտով: Խնդրեցի նրան՝ երեխաներիս վերցնի որպես emaret allah (Աստծու ավանդ): Նա վերցրեց երեխաներիս: Թեև հարյուր անգամ մահ էի ցանկանում, բայց այն չէր գալիս: Մահացած կանանց ու երեխաների դիակների գարշահոտը շատ ու-

ժեղացավ: Առավոտյան կողմ մի քանի կանանցով ճանապարհ  
ընկանք: Դեպի ո՞ւր: Ո՞վ գիտեր: Ստույգ՝ դեպի մահ: Վրա հասավ  
կեսօրվա շոգը: Արևը սարսափելի կիզում էր՝ բշտիկներ առաջաց-  
նելով մեր մերկ մարմինների վրա: Հասանք մի հերկած դաշտ,  
պառկեցինք ակոսների մեջ ու շոգից պաշտպանվելու համար  
ծածկվեցինք հողով: Մահը դարձյալ չէր ուզում զալ ու փրկել մեզ:  
Հաջորդ օրը մի գյուղ հասանք, որտեղ հայեր էին ապրում: Դա  
Գարմուջն էր՝ Ուրֆայից մեկ ժամ հեռավորության վրա: Այնտեղ  
մենք մի կերպ հագնվեցինք, ինձ մի շապիկ հասավ, որ հազիվ  
ծնկներիս էր հասնում: Ամբողջ գյուղը լցված էր բռնազաղթված  
կանանցով: Մի քանի օր անց եկավ մի ոստիկան ու մեզ հավա-  
քելով՝ քչեց-բերեց Ուրֆա»:

Սա է եղապի պատմությունը՝ խարբերոցի մի կնոջ ու մոր, որը  
մեկն էր հազարավորներից: Նրա երեխաները երբեք այլևս չգտնը-  
վեցին:

## ՀՈՒՍԱՀԱՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հայերի դժբախտությունը գնալով ավելի ողբերգական ձևեր էր  
ընդունում: Օր օրի Ուրֆան վերածվում էր ահավոր իրադար-  
ձությունների թատերարեմի: Քաղաքի հայությունը համակել էր  
հուսահատությունը: Նրանք որոշեցին իրենց կյանքը հնարավորին  
չափ թանկ վաճառել զինվորներին, զինվեցին ու թուրքերի դեմ  
կանոնավոր պայքար սկսեցին: Հայկական թաղը պատնեչելով՝  
բաժանեցին թուրքականից: Քանի որ դրա դիրքը թուրքականից  
բարձր էր, հայերը առավելություն ունեին: Նույնիսկ մոլլաները  
չէին համարձակվում մինարե բարձրանալ աղոթքի: Թուրքերի  
փողոցներից շատերը գտնվում էին հայերի կրակի տակ:

Ըստ Ուրֆայի տների ճարտարապետական կառուցվածքի ա-  
մեն տուն մի փոքրիկ ամրոց էր: Հենց որ փակվեր, դժվար էր  
բնակիչներին հասնել: Կառավարությունն այդ ժամանակ գրեթե  
զինվորներ չունեց: Իսկ մի փոքր խումբ ոստիկաններով հնարա-  
վոր չէր որևէ բան ձեռնարկել: Թեև կային հավաքագրված կամա-  
վորներ, սակայն նրանց պակասում էր զենքն ու զինամթերքը:  
Անհրաժեշտ էր պաշտպանվել հայերի գրոհներից մինչև որ Հալե-  
պից օգնություն հասներ: Պաշարման 9-րդ օրը ժամանեց գեներալ  
Ֆախրին՝ մի քանի հարյուր զինվորներով և թնդանոթներով: Նրա

Համհարզը գերմանացի կոմս էր: Նրանք կարողացան քաղաք մտնել միայն գիշերով և այն էլ՝ մեծ հրաձգության ներքո, քանի որ մի խումբ քաջագուն հայեր որոշել էին թնդանոթների փակադակները գողանալ, մի բան, որ նրանց չհաջողվեց:

Հաջորդ օրն ինձ կանչեցին նահանգապետի մոտ: Այնտեղ իմացա, որ իմ բարեկամ Լեսլիին հաջողվել էր նամակ ուղարկել նահանգապետին, որով խնդրում էր ազատել իրեն: Ես պետք է փորձեի Լեսլիին դուրս բերել հայերի դիրքերից: Հայկական թաղ գնալու իմ առաջարկը նահանգապետն անմիջապես մերժեց՝ պատճառաբանելով, որ որպես նահանգապետ ինքը պատասխանատու է իմ կյանքի համար: Չէ՞ որ հնարավոր էր, որ հայերն ինձ այլևս թույլ չտային դուրս գալ թաղից: Ուրեմն առաջարկեցի նամակ ուղարկել Լեսլիին: Նամակը պիտի տայի պատնեչի վրա կանգնած հայերից մեկին, և նրա միջոցով հասցնեի Լեսլիին: Այնտեղ նշվելու էր ստույգ ժամը, երբ նա պետք է դուրս գար թաղից: Այս առաջարկն ընդունվեց: Նամակը գրելուց հետո ոստիկանների հսկողությունը մոտեցա պատնեչին ու այնտեղից ձայնեցի.

– Գևորգ, Գևորգ,– այսինքն անունը որևէ հայի, որ կարող էր գտնվել մոտակա տներից մեկում: Որոշ ժամանակ անց եկավ պատասխանը.

– Ո՞վ ես:

– Ես եմ, Յակոբը: Մո՛տ արի, քեզ վրա չեն կրակի, նամակ եմ տալու՝ պարոն Լեսլիին հանձնելու:

– Մոտեցիր դռանը, քեզ չենք վնասի,– պատասխանեցին ներսից: Ապա ասացի, որ նամակը նետում եմ գորգագործարանի մոտ գտնվող տան բակը, որ գնա, վերցնի ու Լեսլիին տանի: Այդպես էլ արեցինք: Սակայն պատասխան ստացա կեսօրից շատ ավելի հետո միայն: Հայն ինձ ասաց, որ Լեսլիի գրածը կարող եմ կարդալ նրա տան վրա: Քաղաքից դուրս մի բլրակ կար, որտեղից լավ էր երևում Լեսլիի տունը: Այնտեղից հեռադիտակով կարդացի. «Ուզում եմ գալ, բայց ինձ չեն թողնում»: Այսպիսով պարզ էր, որ միսիոները հայերի գերին էր:

Սկսվեց հայկական թաղի ոմբակոծումը, որը տևեց ութ օր: Ապա հայերը իրենց կանանցից մի խումբ սպիտակ դրոշով ուղարկեցին թուրքերի մոտ հանձնվելու մասին ուղերձով: Գեներալը հրաման արձակեց, որ հայերը հաջորդ առավոտյան անձնատուր լինեն, ըստ որում այն պայմանով, որ կանայք ու երեխաները դուրս գային Սամաստի դարպասից միայն մեկական փոքրիկ կա-

պոցով: Նա հայտնեց, որ նրանց անհապաղ տեղահանումը պարտադիր է: Իսկ տղամարդիկ՝ ձեռքերը վեր, հանձնվելու էին Աբրահամի լճակի մոտ:

Երբ այս լուրն առա, գլուխս բռնեցի: Ինչո՞ւ հանձնվեցին: Թաղը համարյա չէր վնասվել թնդանոթների կրակոցներից, իսկ ուտելիքի պաշարը վստահաբար դեռ երկար կբավականացներ: Բացի այդ՝ հայերին չէր սպառնում նաև ջրի պակասը, չնայած ջրի մատակարարումը հենց սկզբից կտրել էին. չէ՞ որ գրեթե յուրաքանչյուր տուն իր ջրհորն ուներ: Հայերը նաև պետք է գիտակցեին, որ ութ օրվա պաշարումից հետո, որը մոտ հարյուր թուրքի կյանք խլեց, այլևս անհնար էր հույս դնել թուրքերի ողորմածություն վրա, նույնիսկ եթե խոստացվեր:

Երեկոյան դեմ վերջին անգամ հնչեցին երկու եկեղեցիների գանգերը: Մայր տաճարում տեղի էր ունեցել վերջին հավաքը: Այդ օրը կոտորակառումբից սպանվել էր առաջնորդը՝ ապստամբության հոգին: Դրանով իսկ աշխուժացան այն հայերը, որոնք սկզբից ևեթ դեմ էին ապստամբությանը, որի հետևանքով հաջորդ օրը ընդունվել էր հանձնվելու որոշումը:

Առավոտյան ժամը 9-ի մոտ գնացի ոստիկանատուն՝ հույս ունենալով այնտեղ հանդիպել իմ բարեկամ Լեսլիին: Ճանապարհին հանդիպեցի կանանց ու երեխաների մի երկար շարասյան, որոնց տանում էին քաղաքից դուրս գտնվող ճամբարները: «Մ, եղբայր Յակոբ, փրկվիր մեզ», - կանչում էին նրանք: Բայց ի՞նչ կարող էի ես անել: Ոչինչ: Իրոք, ոստիկանատանը հանդիպեցի բարեկամիս, որը շատ այլայլված էր: Նկատեցի նաև, որ այդ պահին իմ ներկայությունը ոստիկանների համար ցանկալի չէր: Ծենքի առջև մեծ աղմուկ էր: Բերեցին էջի վրա հեծած, երկար, խոնված մազերով մի ծեր ոուսի: Նա 500 ներկալվածներից մեկն էր: Նույն պահին նա էլից ընկավ: Ծրջապատող մարդիկ հարվածում էին նրան կոշիկների կրունկներով: Անմիջապես նկատեցի, որ նա ծանր հիվանդ է և բողբոջեցի նման վերաբերմունքի համար: Ոստիկանապետը հարգեց խնդրանքս, և որոշվեց, որ հիվանդը իմ հիվանդանոց տեղափոխվի: Իսկ երբ ես մի քիչ ուշ հիվանդանոց գնացի, ոուսն այնտեղ չէր: Նա տիֆով հիվանդ էր ու ճանապարհին մահացել էր:

Իջավ զարհուրելի մի երեկո: Լեսլիին բանտ էին տարել: Մի ծածկոց և մի քիչ ուտելիք հետո վերցնելով՝ գնացի ոստիկանատուն: Միջնորդեցի բարեկամիս համար ու ազատեցի նրան՝ խոստանալով հոգ տանել, որ նա չփախչի:

Տունդարձի ճանապարհին երկուսով արագ անցնում էինք մի մզկիթի հրապարակով: Օտարազգի զինվորները կոպտորեն բղավեցին մեզ վրա՝ պահանջելով որ անմիջապես հեռանանք հրապարակից, քանի որ այն իրենց պետք էր: Փողոցում հանդիպեցինք բանտարկյալների մի մեծ խմբի, որ տանում էին չեքքեզները: Հագիվ էինք հասել իմ տան մոտերը, երբ տարբեր տեղերից, այս անգամ արվարձաններից, կրակոցներ լսեցինք: Լսվում էին նաև ցավի տնքոցներ: Հիմա հասկացա, որ առավոտյան հանձնվող հայերի հաշիվն են մաքրում: Նույն գործի վրա էին մարդիկ նաև մեր հենց նոր անցած մզկիթի հրապարակում:

Սարափը պատեց մեզ: Ժամը 10-ն էր, հանկարծ ծեծեցին իմ տան դուռը: Ռ՞վ էր, որ համարձակվել էր հիմա գալ իմ տուն: «Յակոբ էֆենդի», լսվեց ցածր մի ձայն: Դուռն ասպակու միջից տեսա մերկ, սև մի մարմին: Վարանելով դուռը բացեցի ու հարցրի. «Ռ՞վ ես դու»: «Ես եմ, Հակոբը, քո բեռնակիրը: Աստճո սիրուն, ինձ մի անկյուն տուր, որտեղ կարողանամ հանգիստ մեռնել»:

Նոր նկատեցի, որ նա մեր հիվանդանոցի բեռնակիրն է, որ հավանաբար եղել է այսօրվա հանձնվողների մեջ, ապա մզկիթի բակում սպանվածների և մեռածների միջից հարուխյուն է առել:

Հակառակ ամեն վտանգի՝ արեցի այն, ինչից չէի կարող հրաժարվել: Թշվառին տարանք հիվանդանոց, որտեղ կարեցինք նրա դեմքի ու ծոծրակի վրա կտրվածքի չորս վերքերը:

## ՍԱՐՍԱՓԻ ՕՐԵՐԸ ԴԵՆ ԾԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ

Ուրֆայից կանանց ու երեխաների բռնազաղթը սկսվել էր հենց հանձնվելու հաջորդ օրը, սակայն մինչև մոտավորապես 15000 կին ու երեխա ճանապարհ դրվեցին, պահանջվեց մոտ 14 օր: Մեծ ճամբարներում, որտեղ նրանք սպասում էին տարահանման, տեղի էին ունենում հուսալքության սոսկալի արարքներ: Ծծկեր երեխաները խմբերով ընկած էին բակում և տնքալով սպասում էին իրենց վերջին: Ոչ բոլոր մայրերն ունեին քաջություն՝ նրանց մեծ ջրավազանը նետելու: Չնայած դրան՝ ամեն առավոտ այդ ավազանից հանվում էին մեծ թվով կանանց ու երեխաների դիակներ: Կինս ու ես ամեն օր այնտեղ տանում էինք հացի մեծ բեռներ: Դա շատ վտանգավոր գործ էր, քանի որ քաղցն աճում էր, իսկ բժավոր տիֆը, հատկապես բռնազաղթվածների շրջանում, շատ զոհեր էր խլում:

Ամեն օր մի նոր խումբ էր ճանապարհ ընկնում: Ահավոր տեսարաններ էին: Ահա՛ մի կին ուզում է սպանվել տեղնուտեղը: Նա, ընկած գետնին, խնդրում էր ոստիկանին, որ սվինով խոցոտի իրեն, իսկ վերջինս միայն թեթևակիորեն էր ծակծկում նրա մարմինը: Ի վերջո կինը ոտքի է ելնում ու գնում: Ուրիշ կանայք, երբ ճանապարհին հաց էի բաժանում, բղավում էին. «Մեզ հաց չբերե՛ս, թո՛ւյն բեր»: Կային և այնպիսիները, որ ցույց տալով կոկայինի սրվակը՝ ուզում էին իմանալ՝ ինչքան օգտագործեն պարունակությունից, որ մեռնեն: Նրանք արդեն նկատել էին, որ մեծ քանակությամբ ընդունելու դեպքում մարդ չի մահանում: Դա որոշ տեսակի թույների համար ապացուցված հատկություն է:

Ի պատիվ հայերի պետք է ասել, որ տղամարդկանցից շատերը չէին հանձնվում: Նրանք շարունակում էին թաքնված կամ խրամատավորված մնալ իրենց քարաշեն տներում: Եվ այսպես, մինչև ամբողջ թաղի գրավումը, գրեթե մեկ ամիս տևեց: Այդ ժամանակամիջոցում մերթ ընդ մերթ լավում էին առանձին կրակոցներ, կամ էլ կրակի էին տրվում ծերպերն ու թաքստոցները:

Հանձնվող ոչ բոլոր տղամարդիկ էին անմիջապես ոչնչացվում: Ռազմական դատարանը նախ ուզում էր խոշտանգումներով ճշգրիտ տեղեկություն ստանալ դեպքերի մասին: Այդ հետաքրքրնությունների արդյունքն էր այլոց թվում նաև, որ ոմն քահանա թաքնված էր դանիացի միսիոներուհի Քարին Յեփեի տանը: Այդպես էլ կար: Սակայն սպառնացող խուզարկության լուրն առնելուն պես խիզախ տիկինը այդ մարդուն յոթ այլ մարդկանց հետ միասին թաքցրեց քաղաքից հեռու մի քարայրում: Դատարանը պահանջեց, որ քաղաքիս երեք եվրոպացիները՝ գերմանացի պարոն էքարթը, դանուհի օրիորդ Յեփենն ու ես՝ չվեյցարացիս, երգվենք և երգումով ցուցմունք տանք, որ չգիտենք հետախուզվող քահանայի տեղը: Այս բոլորը տեղի ունեցավ օրիորդ Յեփեի տան առաջին անհաջող խուզարկությունից հետո: Գերմանացի համահարզին, որը պետք է մեզանից ընդուներ երգումը, խնդրեցինք այն փոխարինել ազնիվ խոսքով: Նա համաձայնվեց. սակայն դրան հաջորդող գիշերը այդ քահանան ու նրա կինը ինքնասպան եղան: Մենք թեթևացած չունչ քաշեցինք, որ ազնիվ խոսք էինք տվել:

Այն բանից ի վեր, որ ես Ուրֆայում առաջինը բժավոր տիֆ տարա, այդ հիվանդությունը սկսեց խիստ տարածվել: Ամենակատաղի շրջանը 1915 թ. նոյեմբերից մինչև 1916 թ. հուլիսն էր: Քաղաքում և շրջակայքում տուն չկար, որ համաճարակից զերծ

մնացած լինել: Բայց այն հայերի լավ բարեկամն էր, քանի որ ա-  
րագորեն տանում էր նրանց:

Լավ էր, որ ես արդեն տարել էի այդ հիվանդությունը և հիմա  
կոփված էի դրա դեմ: Հիվանդությունը փոխանցող ոչլինները կա-  
րող էին մարմնիս վրա սողոսկել, որքան ուզում էին, ես այժմ կա-  
րող էի աշխատել ու դրանով իսկ օգտակար լինել հիվանդներին:  
Այդ ժամանակ քաղաքում աշխատող երեք բժիշկներից երկուսը  
հիվանդացան, մեկը մահացավ, մյուսը՝ ապաքինվելուն պես տե-  
ղափոխվեց: Միայն քաղաքի հրեա բժիշկը չհիվանդացավ, քանի  
որ զգուշանում էր գնալ այն տները, որտեղ տիֆով հիվանդ կար:  
Ինքն էր, որ խընդրել էր ինձ բժավոր տիֆով հիվանդներին խնա-  
մել ուժերիս ներածին չափ:

Իսկ մեր հայ բժիշկը, որ ամենավատ օրերին տիֆով հիվանդ  
պառկած էր, այժմ իմ ծեր դոնապանի հետ միասին միակ հայերն  
էին, որ մնացել քաղաքում: Նա իր ապաքինման չըջանում թու-  
լություն հանդես բերելով՝ դիմում տվեց, որ մուսուլման դառնա:  
Հաջորդ օրը նա բանտում էր նստած: Թուրքերն ասում էին՝ ով որ  
նրա նման ազատ արձակվելուց հետո ուզում է մուսուլման դառ-  
նալ, վախկոտ է, և նրա տեղը բանտն է: Որ նա համոզված մահ-  
մեղական երեք չէր դառնա, գիտեր նրան ճանաչող յուրաքան-  
չյուր թուրք:

1916 թ. երկրորդ կեսին սկսեցին կամաց-կամաց քաղաք վերա-  
դառնալ կենդանի մնացած հայուհիները, որոնք գաղթի ճանա-  
պարհին ապաստան էին գտել արաբական ու քրդական գյուղե-  
րում: Քաղաքում նրանց այլևս չէին անհանգստացնում:

Հայերի համար կարծես թե եղեռնական օրերը վերջ էին գտել:  
Սակայն նրանց թշվառությունը դեռ աննկարագրելի էր, և մեր  
բարեգործական աշխատանքը նույնքան կարևոր էր, ինչքան ամե-  
նավատ ժամանակներում:

Այս բոլորի հետ մեկ ուրիշ անսպասելի բան կատարվեց: Նույն  
երիտթուրքերը, որոնք տեղահանել էին հայերին, այժմ ձեռնա-  
մուխ եղան նաև քրդերի տեղահանմանը:



## ՀԵՏՆԱՑԱՎԵՐ

1916 թ. վերջին Ուրֆա վերադարձան անհամեմատ ավելի մեծ թվով բռնազաղթված կանայք, քան կարելի էր ենթադրել: Նրանք, իհարկե, կարիք ունեին ամեն կարգի օգնություն: Կարիքավորների մեր ցուցակներում արդեն գրանցել էինք ոչ պակաս, քան 2700 կին ու երեխա և երկու տուն էլ լցրել էինք որբերով, առանց իշխանությունների թույլտվության:

Մեզ հաջողվեց նաև քաղաքից դուրս օգնություն կազմակերպել: Երկու անգամ կարողացա մեծ գումարով Ռազա մեկնել և հայ փախըստականներին օգնություն հասցնել: Փողը ստանում էի Հալեպի գերմանական հյուպատոսության միջոցով: Երբ առաջին անգամ այնտեղ գնացի, փողը կարողացա բաժանել անարգել: Սակայն երբ հազիվ էի երկրորդ անգամ քաղաք մտել, կանչվեցի ոստիկանական պարետի մոտ: Այդ ժամանակ նահանգի ներսում տեղից տեղ գնալու համար անձնագիր ունենալու անհրաժեշտություն չկար: Պարետն անձնագիր պահանջեց, իսկ ես հետս չունեի: Քանի որ հնարավոր էր, որ ես լրտես լինեի, որովհետև խոսում էի թուրքերի թշնամիների լեզուներով՝ անգլերեն, ֆրանսերեն և արաբերեն, ուստի նա ինձ արգելեց մոտակա օրերին հեռանալ քաղաքից: Նախ ուզեց Ուրֆայի մասին տեղեկություններ ստանալ: Նա բռնազրավել տվեց իմ կառքի ձիասարքը: Ներկալված մահմեդական մի հնդիկ էր, որ ինձ բացատրեց այդ վարմունքի պատճառը: Նա ասաց, որ քիչ առաջ էլ ինչ-որ պարոն Հալեպից փող է բերել վտարանդիների համար, միայն թե նա նախապես մի քանի ոսկեղրամ է բաժանել պաշտոնյաներին, որպեսզի այսուհետև կարողանար անարգել վտարանդիներին օգնել: Այսպիսով, ես իմ անելիքն իմացա: Հեռագրեցի Ուրֆա և շուտով վերադարձի թույլտվություն ստացա:

Տեղ հասնելուն պես նահանգապետն ինձ իր մոտ կանչեց ու կշտամբեց, որ այսպիսի մի ժամանակ առանց թույլտվության երկրով մեկ ճամփորդել եմ: Նա ինձ նաև ասաց, որ այսուհետև իրավունք չունեի որևէ հայի փող տալ առանց ոստիկանության ներկայություն: Քանի որ օգնություն խնդրողները ամեն օր իմ տունը ել ու մուտ են անում, առաջարկեցի, որ նա իմ տան առաջ առավոտից երեկո ոստիկան կանգնեցնի: Չընդառաջեց, և ես կարողացա շարունակել իմ բարեգործական գործունեությունը:

1915 թ. Ուրֆա բերված բանտարկյալներին նույն տարվա վերջին կրկին տարան: Նրանց տեղափոխեցին Կոնիայի երկրամաս՝ ուսանների առաջխաղացումը ղեպի Բիթլիս պատճառաբանելով: Սակայն մի քանիսը հիվանդ էին և մնացին: Հետո ուրիշները եկան: Այս բոլորի համար մինչև պատերազմի վերջը և դրանից էլ հետո ես դարձա օգնական ու խորհրդատու: Սկզբում այդ գործում ինձ հովանավորում էր ամերիկյան Հյուպատոսությունը, իսկ երբ ամերիկացիները երկրից հեռացան, անցա իսպանացիների պաշտպանություն տակ: Ինձ, այսպիսով, հանգիստ թողեցին, միայն բժշկական աշխատանքիս մեջ էին հաճախ նեղում: Ձե՞ որ դիպում չունեի, բայց ծառայում էի որպես բժիշկ: Մյուս կողմից՝ երբեմն, ինչպես տիֆի ժամանակ, նույնիսկ կառավարությունն ամերիկյան բժիշկին ինձ կոչ էր անում ուժերիս ներածին չափ հիվանդներին նվիրվել: Հետո, սակայն, քաղաքի բժշկի հաճախակի փոփոխման ժամանակ հիվանդանոցն ու ղեղատունը երկու անգամ փակվեց: Հիվանդները պարտավոր էին 24 ժամվա ընթացքում թողնել հիվանդանոցը:

Այն բանից հետո, երբ 1915 թ. ոչնչացվեցին երկրում այնքան խիստ անհրաժեշտ ճանապարհներ կառուցող հայկական աշխատանքային գումարտակները, այդ գործը շարունակեցին այլ քրիստոնյա զինվորներ: Դրան մասնակից դարձրին նաև հայ կանանց ու երեխաներին, որի շնորհիվ նրանք փրկվեցին սովամահությունից: Իհարկե աշխատավարձը չէր բավականացնում նոր հագուստների համար: Նրանք ման էին գալիս գրեթե մերկ վիճակում: Ինձ հաջողվեց մի քանի ձիաբեռ հագուստ ստանալ: Դա մեծ ուրախություն պատճառեց նրանց:

Հատուկ մի աղետ ևս պետք է կանխվեր: Ինչպես արդեն նշվեց, տեղի էին ունենում նաև քրդերի տեղահանումներ: Նրանք ևս մասամբ անցնում էին Ուրֆայով, և նրանցից շատերը սովամահ էին լինում: Ամեն առավոտ մզկիթների բակերից, տներից ու փողոցներից դիակներ էին հավաքում: Քրդերի այդ ողբերգությունն ինձ հանգիստ չէր տալիս: Եթե ինձ հաջողվեր նրանց համար օգնություն ստանալ, այդպես էի մտածում ես, ապա հայ ժողովրդի բեկորների հետ տարվող աշխատանքիս համար իմ նկատմամբ ավելի ներողամիտ կլինեին: Այսպես, ճանապարհ ընկա ղեպի Հալեպ: Մնդրի նկատմամբ հետաքրքրություն ցուցաբերեցին ամերիկյան ու գերմանական Հյուպատոսությունները: Ձգալի գումար տվեցին ինձ: Դրանով ցորեն ու գարի գնեցի գյուղերում ու բաժանեցի սո-

վահար քրդերին: Դրանից հետո իսկապես ոչ մի դժվարություն չունեցա Հայերի համար տարվող նպաստամատույց իմ աշխատանքում: 1916-ից մինչև 1919 թթ. նրանց համար Ամերիկայից ու Եվրոպայից ստացա ընդհանուր առմամբ հինգ միլիոն պիասթր:

Ինչպես մենք՝ կինս ու ես, այնպես էլ դանիացի միսիոներուհի Քարին Յեփեն փոթորկից հետո էլ՝ մինչև 1917 թ. վերջը, մնացինք մեր պաշտոնում: Շատ կերկարեր, եթե թեկուզ միայն հանրագումարի բերելով ասեի, թե ինչ է արել Հայերի համար այդ հերոս կինը և դեռ շարունակում է անել: Ուզում եմ նշել նաև նրա գիրքը. Քարին Յեփեն, «Ողբերգություն մեջ գտնվող ժողովրդի համար պայքարում»:

Իր ժամանակին ինձ բախտ վիճակվեց օրիորդ Յեփեին Արևելքին ծանոթացնել: Այն ժամանակ, անչուշտ, ես էի կարող գուշակել, որ ես այնտեղ այնպիսի մի ուժ էի ներշնչում, որը հետագայում ձևավորվելով դարձավ օրիորդ Յեփեն:

## ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ

Ինչպես աշխարհում ամեն բան, այնպես էլ ահավոր պատերազմը վերջապես ավարտվեց: Նկատի ունենալով Հայ քրիստոնյաներին՝ հաճախ բացականշում էինք. «Պահապան Աստված, արդյո՞ք այս գիշերը պիտի վերջանա»: Գիշերն անցավ և ճիշտ այնպես, ինչպես նախագուշակել էին Ուրֆայի հայերը. Թուրքիան պատկանում էր մեծ պատերազմը տանուլ տվողների թվին: Միայն թե ի՞նչ էր դա տալիս հայերին: Մի՞թե բնաջնջված էր Թուրքիայում բնակվող ողջ Հայ ժողովուրդը: Ի՞նչ կարելի էր անել նրանց ծվատված բեկորներով: Այսուհանդերձ, զինադադարից անմիջապես հետո տեսանք մեծ թվով հայերի վերադարձը: Իրոք զարմանալի էր, սակայն և մի նոր ապացույց, որ այնքան էլ հեշտ չէ բնաջնջել երկու միլիոնանոց մի ժողովրդի:

Այժմ ամեն օր մուսուլմանական տներից Հայ կանայք ու երեխաներ էին գալիս մեզ մոտ: Թեկուզ զրանից երևում էր, որ Կոստանդնուպոլսից նոր քամի էր փչում: Այս ամենը պետք է Անտանտի ձեռքի գործը լիներ, քանի որ բոլոր նահանգներում հրաման էր իջել՝ Հայ կանանց ու երեխաներին մուսուլմանական տներից հանձնել Հայ համայնքին: Որտեղ այդպիսիք չկային, ինչպես օրինակ՝ Ուրֆայում, երեխաներին տալիս էին մեզ: Եվ քանի որ

մեծ մասը մերկացած ու զրկված էր ամեն ինչից, պետք էր մեծ գումարներ ծախսել և գոնե այնքան հագուստ ձեռք բերել, որ կարելի լիներ խուճբ առ խուճբ հագուստները փոխել: Դեռևս մինչև զինադադարը, գերմանացի մի ընտանիքի տեղափոխումից հետո, նախկին գորգագործարանի տնօրենը բավական թվով պատրաստ և կիսապատրաստ գորգեր էր տվել ինձ, հետև էլ՝ բուրդ: Այդ բոլորը վերածեցի փողի՝ փախստականների համար ամենաանհրաժեշտ բաները գնելու համար: Սակայն այդ հասույթը չատարազ սպառվեց: Ես պետք է գնայի Հալեպ՝ միջոցներ որոնելու:

Այդ ժամանակ, սակայն, ճանապարհորդությունը մեծ դժվարությունների հետ էր կապված: Երբեմն Բաղդադի երկաթուղու որևէ գնացք մի քիչ ավելի հեռու էր տանում, բայց ոչ մինչև Հալեպ, քանի որ գծերը ավերված էին, կամուրջները՝ քանդված: Ստիպված Չորանբեյից մինչև Մյուսլիմեհ ոտքով մեն մենակ ինը ժամ քայլեցի քիչ բնակեցված շրջանով և հասա անգլիական գորքին, որից օգնություն խնդրեցի: Ցավոք, իմ հայ խնամյալների համար անգլիացիներից փող ստանալու ցանկությունս չիրականացավ: Այդ ժամանակ ես արեցի այն, ինչ հիմա երբեք էլ չեմ անի. Բազելի բանկի 10 հազար ֆրանկի մի չեկ դուրս գրեցի ու այն վաճառեցի Հալեպում: Դրա համարձակությունը ունեցա, քանի որ գիտեի, որ Բազելի իմ ընկերները ինձ բախտի քմահաճույքին չեն թողնի: Այդպես էլ եղավ: Այդ փողով թե՛լ ու բուրդ գնեցի, որոնցով կտոր գործվեց ու հագուստ կարվեց: Համենայն դեպս դրանից մի մեծ գումար առանձնացրի, որպեսզի Ուրֆայում հաց առնեի:

Վերադարձիս, որը տեղի ունեցավ սայլով, քիչ էր մնում ինձ սպանեին: Այդ ժամանակ Մեքքայի իշխանի զինվորները շրջում էին երկրով մեկ՝ փնտրելով փախստական գերմանացի զինվորների: Եփրատից ոչ հեռու 40 ձիավորների այդպիսի մի խումբ ղեմս ելավ: Ես ոտքով էի քայլում, բոլորովին մենակ, սայլը ետ էր մնացել և այդ պահին տեսանելի չէր: Ձիավորները հենց որ ինձ տեսան, կարծեցին՝ փնտրվող գերմանացիներից մեկն եմ: Ասացին, որ ես գերմանացի եմ, և որ ինձ անմիջապես սպանելու են: Ծիծաղելով վրա բերեցի. «Ես գերմանացի չեմ, բայց եթե ուզում եք ինձ այնուամենայնիվ սպանել, կարող եք այդ անել»: Եվ կուրծքս ղեմ տալով շարունակեցի, որ եթե ինձ սպանեն, նրանց չերիֆը հարկադրված կլինի հոգալ իմ ընտանիքի ապրուստը: «Ի դեպ, — ասացի ես, — «միթե չեք հասկանում, որ եթե գերմանացի լինեի, Հալեպից չէի մեկնի և Բաբ ու Բոմդուշ քաղաքները չէի գա, այն էլ

մի սայլ հետս՝ լիքը ապրանքով»։ «Սա՞յլ, ո՞ւր է սայլդ»,– հարցրին նրանք։ Հենց այդ ժամանակ հայտնվեցին երկու խեղճուկրակ ձիերը, որ քաշելով հանում էին սայլը հովտից։ Զինվորները տեսնելով սայլը՝ խուժեցին սայլի վրա։ Նրանք հարցրին իրենց երկրացի սայլապանին, թե ով է այդ օտարերկրացին։ Վերջինս պատասխանեց. «Wallah, hueh, inglisi», այսինքն՝ «Աստված վկա, անգլիացի է»։ Դա նրանց բավարարեց, նրանք հեռացան, և ես փրկվեցի։

Ճիշտ այդ նույն պահին, դա կլիներ կեսօրից առաջ ժամը 11-ը, Ուրֆայում կնոջս համակել է ներքին մի անհանգստություն։ Նա զգացել է, որ ամուսինը վտանգի մեջ է։ Նրան ոչինչ չէր մնում անել, քան աղոթքով հանգստացնել իրեն խաղաղ խցիկում։

Բերածս փողը իսկույն ծախսեցի։ Օրեցօր ավելանում էին նոր եկողները։ Աղքատիկ կերակուրի պատճառով մեր տներում գնալով աճում էր դժգոհությունը։ Չէ՞ որ շատերը մուսուլմանների տներում լավ են ապրել՝ առատ ուտելիք, լավ հագուստներ, կարգին անկողին։ Ոմանք կրկին վերադառնում էին այն մահմեդական ընտանիքները, որտեղից բերվել էին մեզ մոտ։

Փետրվարին մեր տներում աղքատությունը հասավ իր գագաթնակետին։ Կնոջս ուղարկեցի Հալեպ։ Անգլիացիներն այս անգամ էլ օրերով պահեցին նրան՝ չարունակ հուսադրելով, որ օգնություն կժամանի։ Ի վերջո մի առավոտ նա «վերջնագիր» է ներկայացրել գեներալին՝ ասելով. «Հիմա կվերադառնամ Ուրֆա, և քանի որ ի վիճակի չեմ տեսնել իմ խնամակալությունը հանձնված հայերի սովամահությունը, 600 հոգուց բաղկացած խումբը, որ հավաքվել է դեռ իմ մեկնելուց առաջ, կտանեմ Բաղդադի երկաթուղի։ Այնտեղ կարող եք սպասել նրանց, պատասխանատվությունն այդ դեպքում այլևս ինձ վրա չի լինի»։

Գեներալը խնդրում է նրան նստել և ուզում է մտածել, թե ինչ կարելի է անել։ Ի վերջո կինս ստանում է 15 հազար ֆրանկ և երջանիկ վերադառնում Ուրֆա։ Այդ գումարը կբավականացներ երկու ամիս ևս, իսկ դրանից հետո հավանաբար կրկին կապի մեջ կմտնեինք «Հայերի չվեյցարացի բարեկամներ» միություն հետ։ Սակայն այլ կերպ եղավ։ Անգլիացիներն ու ամերիկացիները ևս պետք է Ուրֆայում երևային։ Դեկտեմբերի վերջին ավտոմեքենայով մի անգլիացի հայտնվեց։ Նա իր մոտ կանչեց այդ ընթացքում Ուրֆա վերադարձած հայերին և կոչ արեց հոգալու այն մասին, որ թուրքերը վերադարձնեն հայերի ունեցվածքը, և որ այլևս վնաս-

ված եկեղեցիներից ու հայերի ավերված տներից քարեր չգողանան: Հայ տղամարդիկ բացատրեցին, որ այդ անել նրանք պիտի համարձակվեին միայն այն դեպքում, եթե անգլիական զորքը լիներ Ուրֆայում: Այն արդեն Եփրատի ափին էր, և լսել են, որ գալու է Ուրֆա: Գնդապետը պարզաբանեց. «Համաձայն զինադադարի պայմանագրի մենք չենք կարող Ուրֆա մտնել առանց անհրաժեշտ պատճառի»:

Անհրաժեշտ առիթ ստեղծել՝ ահա այդ մասին հոգացին մի քանի հայեր:

Նրանք սպանեցին իրենց հայրենակիցներից մեկին որպես դավաճանի:

Դեպքը մեծ աղմուկ բարձրացրեց: Նոր հուզումներ առաջացան: Երկու օր անց կրկին հայտնվեց անգլիացի զնդապետը: Նա հարցրեց ինձ Ուրֆայի հուզումների զրգապատճառների մասին, և ես պարզաբանեցի իրավիճակը: Դրանից հետո միայն զինվորականին պարզ դարձավ, որ ոչ թե մահմեդական էր հային սպանողը, ինչպես իրեն գրել էին հայերը, այլ այդ դավաճան հային միայն հայերը կարող էին սպանած լինել: Իրենք՝ հայերը, ցանկացել էին սպանությունը նախադեպ ստեղծել անգլիացիներին ներս հրապուրելու համար:

Այդ ընթացքում գնալով ավելի մեծ թվով հայ տղամարդիկ էին վերադառնում Ուրֆա: Որտեղի՞ց էին նրանք գալիս: Հարավի՛ց: Չէ՞ որ շատերը փախել էին արաբների մոտ: Պատերազմի հենց սկզբին մի քանի հարյուր մարդ ուղարկվել էր հարավային ճակատ, և նրանք այնտեղ որպես զինվորներ հավատարմորեն ծառայել էին թուրքական կայսրությունը: Ո՞վ չի ըմբռնում նրանց վիշտն ու զայրույթը, երբ այժմ, վերադառնալով հայրենիք, իրենց սիրելիներին այլևս չգտան: Դա թուրքական չնորհակալությունն էր:

Երեք օր անց, երբ ես զբաղված էի վիրահատություններով, հայտնվեց մի ոստիկան: Ինձ ասաց, որ անմիջապես գնամ նահանգապետի մոտ: Ի՞նչ կարող էր արդյոք կրկին պատահած լինել: Ախ, այդ ոստիկանները: Այս վերջին տարիներին ինչքան հաճախ էին նրանք ինձ կանչում: Ամեն անգամ ես պետք է ներկայանայի իշխանավորի առաջ, անցնեի շատ տհաճությունների միջով՝ ասելով սուտ ու փուտ բաներ: Ջարմանալի չէ, որ ջղերս ի վերջո սպառնում էին տեղի տալ, և հենց որ օրենքի մարդ էի տեսնում տանս մոտենալիս, վախը համակում էր ինձ:

Ոստիկանն ասաց, որ շատ հրատապ գործ է: Փոքրիկ վիրահատությունը շուտով վերջացավ, և ես ներկայացա նահանգապետին, որի մոտ նստած էին երկու անգլիացի սպա: Նրանք ինձ հարցրին, թե անգլերեն խոսո՞ւմ եմ, և ես հաստատեցի: Ինձ վիճակվեց շատ ցասկոտ խոսքեր թարգմանել նահանգապետին: Բանն այն էր, որ անգլիական ջոկատները՝ թվով 800 մարդ, մոտենում էին, և երկրի սովորույթյան համաձայն նահանգապետը պետք է սպաներին ընդառաջ գնար: Ձե՞ որ անգլիացիները թուրքերի բարեկամն էին: Բայց չէր երևում, որ նրանք այստեղ բարեկամ ունեին՝ հանձին նահանգապետի: Նրանք հայտարարեցին, որ իրենք են ցանկանում գորքի համար բնակարաններ գտնել և միայն դրանից հետո նրան հրաման տալ, որպեսզի նշած բնակարանները անմիջապես կարգի բերվեն:

Դրանից հետո պահանջվեց նաև այն տունը, որտեղ տեղավորել էի կլինիկան, այն բանից հետո, երբ երկու անգամ կնքվել էր իմ հիվանդանոցը: Կնիքները, ի դեպ, վաղուց թափվել էին, սակայն այն չէի բացել: Այժմ, երբ անգլիացիներն այստեղ էին, կարող էի այդ համարձակույթյունն ունենալ:

Հենց այս օրերին Ուրֆա էր ժամանելու թուրքական առողջապահության նոր տեսուչը: Կոահելով, որ վերջինս ևս փորձելու էր դժվարություններ ստեղծել, խնդրեցի անգլիացի բժշկին, որը Ուրֆա էր եկել զորամասի հետ, ստանձնել իմ հիվանդանոցի վերահսկողությունը, որը նա սիրով արեց: Այսպիսով հնարավոր չեղավ իրագործել հիվանդանոցն ու դեղատունը անմիջապես փակելու՝ գոյություն ունեցող հրամանը:

Հենց որ բրիտանացիները եկան, Ուրֆայի քրիստոնյաները շունչ քաշեցին, ըստ որում ոչ միայն հայերը, այլև սիրիացի քրիստոնյաները, որոնցից դեռ մնացել էր մոտ հինգ հազար մարդ: Հայերի թիվն այժմ արագ ավելանում էր: Հատկապես Հալեպում պատերազմի տարիներին թաքնված էին մնացել մեծ թվով ուրֆահայեր, որոնք հիմա արդեն համարձակվում էին տուն վերադառնալ:

Հայկական թաղն ավերակ էր դարձել: Անմիջապես սկսվեց չինարարությունը: Անգլիացիները բերեցին ոչ միայն բարոյական, այլև նյութական օգնություն: Կինս ու ես նախ աղքատներին հաց բաժանեցինք, այնուհետև հարյուրավոր կանանց ու տղամարդկանց լավ վարձատրվող աշխատանքի տեղավորեցինք: Կինս մի մեծ դաշտ մաքրել տվեց քարերից: Այդտեղ օդանավակայան էր կառուցվելու: Հետո եկավ այն մեծ օրը, երբ առաջին օդանավը սավառնեց Ուրֆայի վրա ու վայրէջք կատարեց:

Հայերի վերադարձը զանազան գոտուիթյուններ առաջ բերեց: Մարդիկ փնտրում էին իրենց պատկանող ապրանքներն ու տնային իրերը և հետ էին պահանջում դրանք: Թուրքերը պնդում էին, որ այդ ամենը իրենց սեփականուիթյունն է, որ նրանք ոչինչ չեն վերցրել Հայերից: Ասում էին, որ ես՝ Յակոբ Էֆենդիս, նույնպես ունեցել եմ այդ իրերից, որ այժմ հետ էր պահանջվում: Թեև ես իսկապես անմաս չեմ եղել Հայերի ունեցվածքից, սակայն դրանք բոլորն էլ բռնագրավել էր կառավարուիթյունը: Ինչպե՞ս կարող էի որևէ բան վերադարձնել:

Վերջապես մարդիկ որոշ չափով հարմարվեցին, սակայն թշվառուիթյունը չէր նահանջում, քանի որ փախստական Հայերի մշտական ներհոսքն երկրուղալի չափերի էր հասել: Վերջապես եկավ մեծ օգնուիթյունը՝ Մերձարևելյան նպաստամատույցը (Near-East Relief), այսինքն՝ ամերիկյան բարեգործական մեծ ձեռնարկը: 1919 թ. ապրիլին Ուրֆա ժամանեցին նրա առաջին սուրհանդակները: Նրանք իրենց հետ բերել էին այն ամենը, ինչ անհրաժեշտ էր նպատակապալց բարեգործական աշխատանքի համար:

Մերձարևելյան նպաստամատույցն իր առջև մեծ խնդիր էր դրել: Խնամքի տակ էր առնվելու 132 հազար որբ: Աշխատում էր 400 հոգանոց մի բանակ, այդ թվում՝ բազմաթիվ բժիշկներ ու բուժքույրեր: Ամերիկայում հավաքվել էին հսկայական գումարներ, և ապրանքի ամբողջական նավաբեռները առաքվում էին Մերձավոր Արևելք:

Այժմ կարող էինք մեր հովանավորյալներին հանձնել բարեգործական այդ կազմակերպուիթյունը ու վերստին անցնել մեր հին աշխատանքին:

## ՆՈՐ ԽՆԴԻՐՆԵՐ

Դ-ը Ֆիչերը, որ 1914-ին Շվեյցարիայում էր գտնվում, կարողացավ պատերազմից հետո միայն վերադառնալ Ուրֆա: Մինչև նրա գալը՝ 1919 թ. հունիսը, կինս ու ես դիմանում էինք դժվար պաշտոնում: Դյուրին բան չէր ամենևին, սակայն որոշակի խրախուսանքի պակաս էլ չէինք զգում, մի բան, որ մեզ ամուր էր պահում: Այսպես՝ հանկարծ մի ինքնաթիռ հայտնվեց: Նրանից իջավ բրիտանացի մի գնդապետ: Նա ցանկուիթյուն հայտնեց տեսնելու Յակոբին ու նրա խիզախ տիկնոջը և ասաց, որ այստեղ է



եկել իրենց անխոնջ տոկունությունն ու գործունեությունն Համար շնորհակալություն հայտնելու: Ուրֆա եկավ նաև ամերիկյան մի հանձնախումբ՝ ծանոթանալու ամերիկյան նպաստամատույցի փողերի օգտագործման իմ գրառումներին: Մեզ երկուսիս էլ սըրտանց շնորհակալություն հայտնեցին և հայտարարեցին, որ թուրքական պետության մեջ գործող բոլոր օգնականներից, որոնք ստանում էին ամերիկյան նպաստամատույցի փողերը, ոչ մեկը դրանք այնքան լավ չի օգտագործել, ինչպես մենք:

Շնորհակալություն այս երկու վկայությունները հակակշիռ էին ստորացուցիչ այն պահանջներին, որ հայերն ունեին իմ նկատմամբ: Այսպես, ես մեղադրվեցի 135 ոսկեդրամ գողանալու մեջ, իբր թե ես օգտվել եմ տուժածի՝ տիֆով հիվանդ լինելու հանգամանքից: Մինչ նա անգիտակից հիվանդանոցում պառկած է եղել, ես փողը նրա գրոցից հանել եմ: Քանի որ անգլիացիներն Ուրֆայում էին գտնվում, անցած կապիտուլյացիան կրկին ուժի մեջ էր, ըստ որի թուրքերը չէին կարող ինձ դատել: Անգլիացիները, անշուշտ, ինձ պաշտպանեցին նման մեղադրանքների դեմ, որոնք լրիվ օղից էին վերցված և, իհարկե, պատերազմական հոգեզարության արդյունք էին: Ես գերմանասեր եմ եղել և հիմա պետք է ապաշխարեի: Այդ հայերից ոչ մեկը չէր տեսել, թե ինչպես մենք՝ կինս ու ես, օր ու գիշեր աշխատել ենք իրենց հայրենակիցների նեղ օրերին: Նաև ոչ ոք չէր մտածում, որ եթե Անտանտի բարեկամն եղած լինեի, նմանապես արտաքսված կլինեի, ինչպես ամերիկացի դ-ր Սմիթը՝ Դիարբեքիից: Ո՞վ այնուհետև պիտի զբաղվեր իրենց տարագիրներով:

Երբ դ-ր Ֆիչերն ու կինը Ուրֆա եկան, այն ժամանակ միայն մենք վերջապես կարողացանք մտածել արձակուրդի մասին: Մեկնեցինք Շվեյցարիա: Տասը տարի հայրենիքում չէինք եղել:

Արձակուրդից վերադարձանք 1919 թվականի օգոստոսին: «Հայերի շվեյցարացի բարեկամներին» միությունն հանձնարարություն սվազում պետք է ստուգել շվեյցարացիների աշխատանքը և այնտեղ թողնել մի աշխատակցի, պարոն դ-ր Վիգերին: Դրա համար էլ ճանապարհս անցնում էր Սամսունով՝ թուրքական երկրով: Կինս ավելի ուշ էր ինձ հասնելու:

Թուրքիայի ներսում տիրող անապահով իրավիճակի պատճառով որբերի հետ տարվող աշխատանքն այդ ընթացքում Սվազից տեղափոխվել էր Սամսուն: Այստեղ ես որբերին ու նրանց խնամողներին գտա ջերմախտով հիվանդ վիճակում:

Երբ պաշտոնական այցով Սամսունի նահանգապետի մոտ էի գնացել, վերջինս գրկեց ու համբուրեց ինձ: Դա այն հազարապետն էր, որի հետ 1915 թ. ճանապարհորդել էինք պարսիկ արքայազների ընկերակցությամբ:

Այն օրերին Թուրքիայում ամեն եվրոպացի դիտվում էր որպես լրտես, և այդ իսկ պատճառով նրան լավ չէին ընդունում: Միայն ամերիկյան մեծ նպաստամատույցի պատգամաբերներին էին հանգիստ թողնում, քանի որ նրանք հոգ էին տանում ոչ միայն հայ, այլև մահմեդական որբերի մասին:

Իմ աշխատանքը Սամսունում շուտով ավարտվեց: Սկսեցի պատրաստություն տեսնել Ուրֆա մեկնելու համար, քանի որ դ-ր Ֆիչերն այդ ընթացքում այնտեղից կրկին մեկնել էր Եվրոպա: Դա, սակայն, այնքան էլ հեշտ գործ չէր: Այնուամենայնիվ, Սամսունում որբանոցներ ու մի հիվանդանոց ունեցող ամերիկյան նպաստամատույցի ղեկավարից թույլտվություն ստացա Խարբերդ գնացող նրա մեքենայով մեկնելու: Նահանգապետը Ուրֆա կատարելիք իմ ճանապարհորդությունը չընդդիմացավ: Չէ՞ որ նա ինձ լավ էր ճանաչում և գիտեր, որ ես նրա անհանգիստ երկրին վնաս չեմ տա: Ինձ անծանոթ մի նահանգապետ դժվար թե թույլ տար:

Մալաթիայից հետո ես պետք է ձիով անցնեի Տավրոսի լեռները: Մալաթիայի, Տավրոսի լեռների ու Ադիյամանի միջև ընկած հատվածում 1915 թ. հոսել էր Հայաստանի տասնյակ հազարավոր լավագույն հայորդիների, ինչպես նաև շատ հայուհիների արյունը: Այստեղ առաջին անգամ պատահեց, որ ինձ քրդերը թալանեցին: Ստիպված եղա առանց կոչիկի, անձնագրի ու փողի հասնել հաջորդ գյուղաքաղաքը՝ Ադիյաման: Ես շատ ծանոթներ ունեի, սակայն կառավարությունը չէր կարող ինձ արտոնել՝ չարունակելու ճանապարհը: Նախ պետք էր Մալաթիայում հարցում կատարվեր, թե արդյոք ես այնտեղ մնալու իրավունք ունեի՞:

Սպասողական այդ երեք օրերի ընթացքում Ադիյամանի բնակիչներն անվճար օգտվում էին բժշկական իմ գիտելիքներից:

Իմ ժամանումը Ուրֆա մեծ ուրախություն առաջացրեց մեր հիվանդանոցի անձնակազմի մեջ, որն ի դեպ դ-ր Ֆիչերի մեկնումից հետո էլ հայերի ղեկավարությամբ շարունակել էր գործել: Երկու հայ բժիշկ իրար մեջ էին բաժանել բժշկական գործունեությունը: Սակայն վաղուց ժամանակն էր, որ ես սանձերը ձեռքս առնեի: Անհրաժեշտ էր, որ նախ անձնապես վերացնեի անձնակազմի բազմաթիվ դժգոհությունները:

Ամենաչափազանց թուրքերն էին զարմացել՝ ինձ կրկին տեսնելով: Սակայն ոչ միայն զարմացել էին, այլև ուրախացել: Նաև քաղաքի ու շրջակայքի քրդերն ու արարներն էին ուրախացել, որ վերստին ունենին իրենց Յակոբ էֆենդիին:

Հագրվ ութ օր Ուրֆայում էի, երբ գրավոր հրավեր ստացա Հաջորդ շաբաթ օրը ժամը 9-ին ներկայանալ վեցամսյա բանտարկություն կրելու. «Այ քեզ հրաշալի սկիզբ»,— մտածեցի ես: Ի վերջո, ավելի լավ կլիներ մնայի եվրոպայում: Գնացի բարեկամս՝ կաղիի (գլխավոր դատավոր) մոտ: Նա պետք է որ գործին ծանոթ լիներ և ինքն էլ պետք է որ պատժիչ վճիռը ստորագրողներից մեկը եղած լիներ:

«Յակոբ,— սկսեց նա, երբ անցյալ տարի մեկնեցիր՝ հալածված այն մարդկանց կողմից, որոնց պատերազմի ժամանակ նվիրեցիր գրեթե ամբողջ ուժը ու ժամանակը, այն հայի՝ քո դեմ ներկայացրած գողություն մեղադրանքը շարունակեց իր ընթացքը: Հայցվորը ինքն էլ լինելով բժիշկ, ինչպես գիտես մեզ, այսինքն՝ քաղաքի համար անփոխարինելի մարդ էր: Կարծում էինք, որ դու այնքան հիմար չէիր գտնվի, որ վերադառնայիր: Այդ ժամանակ պիտի կարողանայինք քեզ, որ փախել էիր անգլիացիների պաշտպանություն ներքո, հեռակա կարգով դատապարտել: Քանի որ դու այժմ վերադարձել ես, դատական այդ գործը պետք է իր հետագա ընթացքն ունենա»:

«Դուք հիմա ուզում եք ինձ առանց հարցաքննություն բա՞նտ նետել: Ձեր կողմից էլ սրա՞ն արժանացա. չէ՞ որ ես ձեզ նույնքան լավություն եմ արել, որքան հայերին»,— հարցրի ես:

«Ոչ,— պատասխանեց նա,— այդպես չէ. դու կարող ես պաշտպանվել, դրա համար մենք քեզ ժամանակ ենք տվել: Վաղը արի դատական քննիչի մոտ»:

Այդպես էլ հաջորդ օրը դեպքի մասին իմ ցուցմունքն արձանագրվեց: Այդ ընթացքում, սակայն, հայցվորը՝ որպես բժիշկ, ուղարկվել էր ճակատ, ֆրանսիացիների դեմ, որը գտնվում էր Ուրֆայից երկու օրվա հեռավորություն վրա: Իմ ցուցմունքն այնտեղ պետք է տարվեր, որպեսզի հայցվորը կարողանար դրա վերաբերյալ արտահայտվել: Սակայն մինչև արձանագրություն ճակատ հասնելը, բժիշկն արդեն դասալիք էր դարձել, և ռազմական դատարանը նրան հեռակա կարգով մահվան էր դատապարտել: Այսպիսով, փակվեց այդ տհաճ գործը, և ես կարող էի հանգիստ չարունակել իմ աշխատանքը:

Այդ ժամանակ թույլատրվում էր, որ ամիսը մեկ անգամ ամերիկյան օգնությունների ընկերություններից արհեստագործական ձեռքարկի մոտ անցներ ռազմական գոտին, որպեսզի նրանց աշխատանքը չխափանվեր: Մի այդպիսի ավտոմեքենայով կինս, որը ինձնից երկու ամիս հետո թողել էր Շվեյցարիան, գալու էր Ուրֆա: Այդ ժամանակ շաբաթը մեկ անգամ գաղտնի մի սուրհանդակ՝ ուրֆացի վաճառականների նամակներով, ինչ-որ տեղ կրտրելով ճակատի գիծը, գնում էր Հալեպ: Նրանցից մեկի հետ ես ևս նամակ էի ուղարկել կնոջս: Նրան խնդրել էի, որ շտապ վերադառնա, որովհետև շատ աշխատանք կար անելու: Դա անզգույշ քայլ էր: Սակայն կինս էլ նույնն էր արել՝ թույլ տալով, որ իրեն համոզեն, որ Հալեպի հայերից Ուրֆա բերի մեծ քանակությամբ նամակներ՝ ուղղված իրենց հարազատներին:

Կնոջս բերող մեքենան նոր էր ժամանել Ուրֆայի արվարձանը, երբ ոստիկանների մի խումբ փորձել է այն խուզարկել: Կինս անմիջապես հիշել է նամակները: Նա կարողացել է կապոցն աննրկատ թաքցնել հագուստի տակ՝ ծնկների միջև, և ոտքի կանգնելով՝ թույլ է տվել մեքենան խուզարկել:

Գալու պես կինս լծկեց աշխատանքի: Մեր հիվանդանոցի մոտ գտնվում էր թուրքական հիվանդանոցը, որը շատ տարիներ առաջ կառուցվել էր դ-ր Ֆիշերի ցուցումով: Այն անմխիթար վիճակում էր: Դրա բարեկարգումը, այնտեղ պառկած հիվանդների ու վիրավորների վիճակը տանելի դարձնելը կինս համարում էր իր առաջնային խնդիր: Հիվանդները նրան պարզապես իրենց փրկարարն էին համարում:

Մինչ այդ, սակայն, գինվորական դատարանը զբաղված էր ավտոմեքենայում բռնագրավված իրերով: Երկու չվեյցարացիները կասկածի տեղիք էին տվել: Ամուսինը երկիր էր մտել Սամսունով, կինը՝ Հալեպով: Այդ երկուսը պետք է որ լրտես եղած լինեին: Եվ դատարանը վճիռ կայացրեց մեր նկատմամբ: Գիշերով պետք է մեզ հանելն անկողնուց ու քշեին երկրի խորքերը: Սակայն սպաններից մեկը, որ նույնպես գինվորական դատարանում էր, ընդդիմանում է վճռի անհապաղ կատարմանը՝ պահանջելով Դիարբեքիրում նստող հրամանատար Նահատ փաշայի վավերացումը: Փաշան հարցուփորձ էր արել երկու դատապարտյալների կատարած աշխատանքի մասին: Պետք է որ նրան ասած լինեն, թե ամուսինը ամեն օր բազմաթիվ վիրավոր թուրք գինվորներ է բուժում, մինչ կինը կամավոր վարում է թուրքական հիվանդա-

նոցի ամբողջ ներքին աշխատանքը: Այն ժամանակ այդպես էր. շատ ծանր հիվանդ զինվորներին տանում էին չվեյցարական, իսկ նվազ ծանրերին՝ Թուրքական հիվանդանոց: Երբ փաշան սա լսում է, հրամայում է մեզ անպատիժ թողնել: Սակայն մեզ խստորեն վերահսկում էին: Այսպես, մեր տունը երեք շաբաթ շարունակ՝ օր ու գիշեր, հսկողություն տակ էր: Հայերը չէին համարձակվում մեր տուն գալ: Միայն Թուրքերն էին ավելի հաճախ այցելում, հատկապես ռազմական դատարանի այն սպան, որը արգելք էր հանդիսացել մեր արտաքսմանը:

Ուրֆա վերադառնալուց հետո երկար չէի աշխատել, երբ ինձ մի նոր մեծ առաջադրանք հանձնարարվեց: Միսիոներական հիվանդանոցը, այսպես տեղեկացրեց ինձ «Հայերի չվեյցարացի բարեկամները» կազմակերպությունը, պետք է մոտ ապագայում փակվի: Բժշկական գործունեությունն այժմ ավարտված էր: Թերևս դա լավ էր: Դ-ր Քրիստոն ու դ-ր Ֆիչերը Եվրոպայում էին և չէին վերադառնալու Արևելք: Ինչքան էի զգում նրանց պակասը: Երկուսն էլ ոչ միայն իմ վերադասն էին, այլև իմ բարեկամները: Ես նրանց ճանաչեցի որպես բժիշկներ, որոնք իրենց պաշտոնին վերաբերվում էին ամենայն լրջությամբ ու իրենց անխոնջ աշխատանքով մշտապես ձգտում էին լավագույնն անել հիվանդների համար: Ես անչափ պարտական եմ նրանց: Նաև չեմ մոռանա դ-ր Ռիկո Պֆիստերերին, որը մեկ տարի աշխատեց մեզ հետ: Ինչպես էր նա կարողանում իր հումորով իմ ուշադրությունը հրավիրել որոշ թերացումների վրա և դրանով իսկ ինձ ճիշտ ճանապարհ ցույց տալ: Ես ինձ երջանիկ պետք է համարեմ, որ աշխատել եմ այդպիսի անձնագոհ, պարտաճանաչ և անձուրաց մարդկանց հետ:

Առանց նրանց իմ ուժերից վեր կլինեք շարունակել բժշկական աշխատանքը: Նման պայմաններում մի այլ առաջադրանք տեղին ու ժամանակին էր ներկայանում:

## ՄԵԾ ՏԵՂԱՓՈՒՈՒՄԸ

Ամերիկյան նպաստամատույցի որբերի հետ տարվող աշխատանքը ավելի ու ավելի էր խոչընդոտների հանդիպում: Ի վերջո կառավարությունից հարուցած մշտական գլխացավանքների հետևանքով իրավիճակն այնքան անտանելի դարձավ, որ որոշվեց բո-

յոր որբերին Սիրիա տեղափոխել: Որպես տեղանքի լավ գիտակներ՝ կինս ու ես պետք է ղեկավարեինք տեղափոխումը: Սա էր լինելու մեր նոր առաջադրանքը, որը Ուրֆայում ընդունվեց մեծ տարակուսանքով: Մի՞թե Հնարավոր էր, ինչպես ասում էին, Հազարավոր երեխաների ճանապարհ Հանել: Այնուամենայնիվ սկսեցինք պատրաստվել: Հայ որբերի Համայնքը Համակվեց աննկարագրելի ցնծությամբ: Հեռանալ այն երկրից, որտեղ իշխում և մըշտապես սպառնում էր մահն ու կործանումը: Հեռանալ ղեպի Քանան երկիրը: Սակայն միայն որբերն էին ուրախանում, մեծերը ղեռնա մնալու էին, և դա նրանց դառնացնում էր: Չնայած դրան՝ նրանք ուրախ էին երեխաների տեղափոխման Համար՝ հույս ունենալով, որ Հետո իրենք էլ կգնան նրանց Հետևից:

Քանի որ կինս ու ես լավ թուրքերեն գիտեինք, նաև քաջածանոթ էինք ամեն մի արահետի, դժվար էր գտնել մեզնից ավելի հարմար մարդկանց՝ որբերի երթն իրագործելու համար: Ամերիկյան ղեկավար չըջաններում հույս ունեին, որ Ուրֆայի երեխաները ի վիճակի կլինեին 90 կմ մինչև սիրիական սահմանը ոտքով անցնել: Այդ իսկ պատճառով երեխաների առաջին խումբը՝ թվով 130 հոգի, ճանապարհ ընկավ ոտքով: Յուրաքանչյուր երեխա պետք է ունենար թուրքական անձնագիր, և ոստիկանը յուրաքանչյուրին ղեռնա ճանապարհին մանրակրկիտ ստուգում էր ու անձնագիրը վավերացնում: Առանց ճանապարհորդելու թուլյտվության ոչ ոք մեկնելու իրավունք չունեին: Մի սայլում անհրաժեշտ ուտելիքն էր, երկրորդ սայլը այն երեխաների համար էր, որոնք այլևս ի վիճակի չէին քայլելու, իսկ երրորդը ամերիկացի մի տիկնոջ համար էր, որը Սիրիայի սահմանին որբերին երկաթուղով Հալեպ էր տեղափոխելու:

Տեղափոխումն սկսվեց մարտի վերջին օրը: Եղանակը լավ էր: Ճիշտ է, որբանոցներում բռնկվել էր գրիպի փոքրիկ մի համաճարակ, որը հավանական էր դարձնում ճանապարհին առանձին երեխաների հիվանդանալը: Առաջին օրը խումբը դժվարությամբ անցավ 20 կմ ճանապարհ: Արդեն երեք ժամ Հետո երեք սայլերն էլ լցվեցին երեխաներով, որոնք այլևս չէին կարողանում քայլել: Գիշերեցինք մի քարայրում ու բաց երկնքի տակ: Երբ գիշերն անձրև եկավ, մեծ աղմուկ բարձրացավ: Բոլորն ուզում էին քարայր մտնել:

Հաջորդ առավոտ հազիվ էինք ուրախ-ուրախ ճանապարհ ընկել, երբ կրկին ուժեղ անձրև տեղաց: Շատ երեխաներ լալիս էին,

նրանց կոշիկները խրվում էին ցեխի մեջ: Ո՛չ մի պաշտպանություն անձրեվից, ո՛չ մի վերարկու, ոչի՛նչ չկար, որ ջրից պատսպարեր: Երբ երկու ժամ անց անձրևը պակասեց, սուրաց սառը քամին: Այն անցնելով թաց հագուստների միջով՝ ավելի սառեցնում ու դողացնում էր մարմինները: Զարմանալի էր, որ երեխաները վերհիշում էին տեղահանությունից ծանր օրերը:

Գիտեի, որ չրջակայքում ծածկ ունեցող մի պահեստարան կա, և տղաներին ուղարկեցի փնտրելու: Այն գտնվեց: Մի ակնթարթում ամբողջ խումբը պատրաստվեց: Տարածքն սկզբում չոր էր, սակայն հետո սոսկալի ցեխ առաջացավ, քանի որ մեր հագուստից կաթած ջրերը խառնվել էին սանտիմետրանոց փոշու հետ: Սկսեցի երգել, երեխաները միացան ինձ, նաև կրակ վառեցինք դաշտային փշերով, որ հավաքել էին պատանիները: Շուտով մոռացվեցին անձրևն ու փոթորիկը, և սկսեցինք կրկին կյանքով ուրախանալ: Սակայն պետք է մտածեինք այսօրվա նպատակակետին՝ քրքրական Սուրուջ գյուղաքաղաք հասնելու մասին: Ես կազմեցի իմ ծրագիրը: Շուտով երեք սայլերը մեր տրամադրությունից տակ կլինեն: Դրանց վրա ես պիտի տեղավորեի ամենափոքր երեխաներին: Ավելի ուժեղների խումբն ամբերիկուհու առաջնորդությամբ գնալու էր ոտքով: Փոքրիկ մի խմբի հետ մտադիր էի ես գնալ, նույնպես ոտքով՝ նպատակ ունենալով գոնե հասնել ոչ շատ հեռավոր մի գյուղ, որտեղ երեք սայլերը բեռնաթափվելուց հետո կվերադառնային: Կարծես թե անձրևն այլևս էր ուզում խանգարել, սակայն մինչ այդ ցրտել էր: Առաջին խումբը ոտքով ճանապարհ ընկավ: Հետո տեղ հասան սայլերը: Մեկի անիվը ջարդվել էր: Ուրեմն իմ տրամադրությունից տակ կար ընդամենը երկու սայլ, երրորդի համար նոր անիվ կարելի էր բերել միայն Սուրուջից: Մեր պաշտպանությունն ապահովում էին երկու հեծյալ ոստիկան, որ նախկինում կոչվում էին զապտիե: Սրանք համաձայնվեցին ամեն մեկը երկու փոքր երեխա իրենց մոտ՝ ձիու վրա նստեցնել, մեկին՝ առջևում, մյուսին՝ հետևում: Ինչպիսի սիրալիք վերաբերմունք այդ «չար» թուրքերի կողմից: Վերջապես ես էլ իմ փոքրիկ խմբով ճանապարհ ընկա: Սակայն դեռ շատ չանցած, նույնիսկ մեծ աղջիկները լաց լինելով ասացին, որ այլևս չեն կարող քայլել: Սառնամանիքից դողացող երկու փոքրիկ աղջնակի վերջրի իմ լայն վերարկուի տակ և այսպես նրանց հետ շարունակեցի քայլել: Վերջում փոխնիփոխ մեկ մեկին էի առնում շալակս, մեկ մյուսին: Ինձ համար պարզ դարձավ, որ թշվառների այս

խմբով անհնար է հասնել քրդական գյուղին: Ուրախացա, երբ գտա մի ավերակ գյուղ, որտեղ մի կիսաքանդ տան մեջ չոր տեղ ճարվեց: Այստեղ կարող էինք սպասել սայլերին: Որպեսզի տաքանան, երեխաներին կարգադրեցի շատ մոտ սեղմվել իրար: Մեր գալուց քիչ առաջ հովիվները հավանաբար օգտագործել էին այս վայրը, քանի որ մեջտեղում մոխիր էր մնացել: Նրանք երևի ցախ էին վառել ու տաքացել, ինչպես մենք՝ այն ամբարում: Այդ մոխրի մեջ դրեցի սառցակալած ոտքերս: Ոտքում լավ տաք էր, ու ես սկսեցի դրա մեջ ցատկոտել՝ ի մեծ ուրախություն դեռ հենց նոր լացող երեխաների: «Մեր հայրիկը պարում է»,– ծիծաղելով ասում էին նրանք:

Կեսօրից բավական անց էր, բայց սայլերը չէին երևում: Ի՞նչ անել: Այս փոքրիկ տան մեջ գիշերելու տեղ չկար: Ուրեմն, երեխաները պիտի մնային ոտքի վրա: Բարեբախտաբար սայլերն ի վերջո հայտնվեցին, ու մենք կարճ ժամանակամիջոցում հասանք նպատակակետին: Տաք իջևանատներում մեզնից առաջ հասածներն արդեն չորացրել էին իրենց հագուստները, և տիրում էր ուրախ, ճամբարային կյանք:

Հաջորդ օրը հանգստանալու էինք: Բժշկական ստուգման օր անցկացրի: Գրանցվեց 95 հիվանդ երեխա: Շատերն արդեն գրիպ ունեին: Պարզ էր, որ ինձ հարկավոր էին լրացուցիչ սայլեր: Երկու սայլ ևս ճարեցի: Հույս ունեի՝ հինգ սայլով 50 երեխա գետի վրայով անցկացնել: Երկու օրից կվերադառնայի և էլի 50-ը կբերեի: Իսկ 30 տղա ինձ հետ ճանապարհը ոտքով պիտի անցնեին: Շրջանը, որով պետք է անցնեինք, զուտ քրդական էր: Վերջին տարիներին՝ 1920 թ. ի վեր, ոչ մի հայ չէր համարձակվել այդտեղով անցնել: Այդ իմանալով՝ խմբին հրամայեցի միատեղ մնալ, որովհետև իմ ներկայությունը ոչ ոքի մազին չէին դիպչի, չէ՞ որ ես լավ էի ճանաչում իմ քրդերին: Ցավոք, սայլապաններից երեքը չհնազանդվեցին և առաջ անցան: Նրանք հասել էին քրդական մի գյուղի: Քրդերն իսկույն սկսել են սայլերը թալանել, նաև երեխաների հագուստները հանել: Իսկ երբ իմ տղաների հետ տեղ հասա, չարագործները փախուստի դիմեցին: Ես կանչեցի նրանց, որ վերադառնան, կարևոր բան ունեմ ասելու: Բայց նրանք նախընտրեցին փախչել:

Այնուհետև գյուղի ամբողջ բնակչությունը մի տեղ հավաքվեց: Ես նրանց բացատրեցի, որ այս բոլոր երեխաները և դեռ հազարավոր ուրիշներ, որ անցնելու են այստեղով, իմ երեխաներն են:



Ես անձամբ ի վիճակի չեմ բոլորի հետ լինել, սակայն ակնկալում եմ, որ ոչ մի երեխայի վնաս չի հասցվի, այլ ընդհակառակը՝ նրանք օգնություն կստանան պարզապես որպես իմ երեխաներ: Քրդերը ներողություն խնդրեցին, նրանք չեն իմացել, որ բանն այդպես է: Երդումով խոստացան, որ երեխաներին ոչինչ չի պատահի: Այսպես հաջորդ ամիսներին հազարավոր երեխաներ անցան այս ու այլ քրդական գյուղերով՝ առանց մեկի հետ մի բան պատահելու:

## ԴԱՎԹԻ ԵՂԲԱՅՐԸ

Երկու ժամ անց քրդական Սիֆթեկ գյուղում էինք: Աղբյուրի մոտ անցկացնելու էինք կեսօրվա հանգիստը: Հինգ սայլերն իրենց բեռներով առաջինն էին ժամանել: Երբ ես պատանիների հետ տեղ հասա, երեխաների խումբն արդեն շրջապատված էր մաուզեր հրացաններով զինված քրդերի բազմությունը: Նրանք ինձ իսկույն ճանաչեցին: Մի ծերունի ձայնեց ղեպի վրանները. «Մահմուդ, Մոհամմեդ, Խալիլ, շուտ եկե՛ք, Դավթի եղբայրն է եկել»:

Մի ակնթարթում հայտնվեցին երեք կանչվածները ու նրանց հետ շատ ուրիշներ. չէ՞ որ ուզում էին տեսնել Դավթի եղբորը: Պարզ էր, «եղբայրը» ես էի, իսկ ո՞վ էր «Դավոն», չէի կարողանում գլխի ընկնել:

– Դու Դավոյին չե՞ս ճանաչում: Հնարավո չէ, – ասացին քրդերը: – Հապա սպասիր, տեսնելուդ պես անմիջապես կհիչես նրան:

Ասացին, որ Դավոն հիմա գյուղում չէ: Երբ վերադառնա, կտեսնեմ նրան: Քրդերը պատմեցին ինձ, որ Դավոն 10 տարի առաջ մի քանի ամիս հիվանդ պառկել է մեր հիվանդանոցում, որ ես նրան ավելի լավ եմ խնամել, քան մայրը կաներ, որ Դավոն վերքերը միայն եղբայր Յակոբին է թույլ տվել կապել, և որ ոչ ոք նրան այնպես չի սիրել, ինչպես այդ Յակոբը: Նաև այն, թե ինչպես այնուհետև Դավոն գյուղ է վերադարձել ու ամիսներ շարունակ պատմել Յակոբի արարքների մասին: Հասկացա, որ Դավոն, գալով հայրենի գյուղ, քրդերի սովորություն համաձայն չափազանցրել է իմ արածները, քաղաքում երկար մնալու չնորհիվ որոշ ժամանակ դարձել գյուղի սիրված անձնավորությունը: Երբ հաջորդ օրը վերադարձիս իջա գյուղի աղբյուրի մոտ, ինձ մոտեցավ երիտասարդ մորուքավոր մի քուրդ, նախ ընկավ ոտքերս, համբուրեց

ի նշան հարգանքի, ապա ոտքի կանգնեց, եղբայրաբար գրկեց ու համբուրեց ինձ: Ուրեմն սա էր Դավոն: Ես նրան չէի ճանաչի: Նա հիվանդ պատանուց անել-դարձել էր ուժեղ տղամարդ: Սիրալիր ընթերցողն այժմ կուզենա հավատալ, որ այս գլուղում ևս արտագաղթող իմ երեխաներին ոչինչ է՛ր կարող պատահել: Սակայն ծեր քուրդը, որն իմ ժամանման լուրը հասցրել էր վրանները, ինձ ուղղված մի խնդրանք ուներ.

– Wa'a na bu (այս չեղավ),– ասաց նա,– արդար չէ, որ դու այդքան մեծ թվով գեղեցիկ աղջիկներ ունենաս, իսկ ես ոչ մեկը չունենամ: Չե՞ս կարող գոնե մեկին տալ ինձ:

– Լսի՛ր, բարեկամ,– ասացի ես,– հուսամ, որ ընդմիշտ անցել են այն ժամանակները, երբ դուք՝ քրդերդ, բռնագաղթվածների շարասյուններից քաշում տանում էիք այնքան շատ աղջիկներ, որքան ձեր սիրտն էր ուզում: Եթե սակայն շարունակես պնդել, որ մեկին պետք է ստանաս, ապա նախ կվճարես 20 հազար ֆրանկ, հետո կտեսնենք, թե որն է ամենատղեղ աղջիկը, և եթե նա համաձայն լինի, դու նրան կստանաս»: Ներկա գտնվող քրդերը քրքջացին: «Ի՞նչ, այդքան սարսափելիորեն թանկացե՞լ են հայ աղջիկները: Այդ դեպքում՝ լավ է քեզ պահես նրանց»,– պատասխանեց հիասթափված մարդը:

Երեխաների հետ հասնելով Եփրատ՝ ճանապարհ էինք որոնում գետի մյուս կողմն անցնելու համար: Երկաթուղային կամուրջը՝ գերմանական ճարտարագիտական արվեստի մի գլուխգործոց, անցանելի չէր, քանի որ ֆրանս-թուրքական զինադադարից մեկ օր առաջ թուրք սպաներից մեկը պայթեցնել էր տվել մի կամրջապայուն, որի հետևանքով կամրջի մի մասը գետն էր լցվել: Երկաթյա որոշ մասեր դեռ տասնամյակներ շարունակ գետի ջրերից դուրս կցցվեն: Ես սայլապաններից մեկին ուղարկեցի կամրջի պահպանված մասի վերջը, որպեսզի մեր մասին լուր տար գետի մյուս կողմում կանգնած ֆրանսիացի ժամապահ զինվորներին: Ծատ չանցած՝ գետի մեր կողմում երևաց մի օդաչու, որը զարմացած նայում էր երեխաների այդ մեծ խմբին: Ինչպիսի անսկարագրելի ցնծություն ու մեծ աշխուժություն առաջացավ երեխաների շրջանում, երբ նրանք, շատերն անշուշտ առաջին անգամ, օդանավ տեսան: Հետո անմիջապես մի սպա եկավ՝ նավակով անցնելով գետը: Նա ուզեց իմանալ, թե մեզ ինչ է հարկավոր: Մենք ասացինք նրան, որ մեր ցանկությունը ոչ այլ ինչ է, քան այն, որ զինվորները նավակներով մեզ գետի մյուս ափը հանեն:

Պարզվեց, որ այդ օրվա համար արդեն ուշ էր: Նավակները գալու էին հաջորդ առավոտյան: Մեր խնդիրն էր այժմ ուտելիք պատրաստել ու երեխաներին գետի ձախ ափին տեղավորել՝ գիշերելու: Լավ գուգադիպեց, որ այդտեղ կար ծածկ ունեցող երկաթուղային երկու վագոն, որոնք թեև գնդակներից ուժեղ ծակծկված էին, սակայն քարապատ հիմք ունեին, քանի որ պատերազմի ժամանակ դրանց մեջ զինվորներ էին բնակվել: Հաջորդ օրը գետը ճեղքեցին զինվորական նավակները, և մենք մեկ ժամ անց, ի մեծ ցնծություն երեխաների, արդեն կայարանում էինք, որտեղից երեխաները երկաթուղով մեկնեցին Հալեպ:

Առաջին այս ուղևորությունից ինձ համար պարզ դարձավ, որ ոտքով ճանապարհ ընկնելն անիմաստ է: Ամերիկացիները պարզապես պետք է օգնեին, որ երեխաներն առանց մեծ չարչարանքի սահմանին հասնեին: Այդպես էլ եղավ, և հետագայում բոլոր երեխաներին տեղափոխեցինք սայլերով կամ ձիերով:

Ուրֆայի 1000 երեխային հետևեցին Մարդինի ու Դիարբեքիլի երեխաները, ապա հերթը հասավ Նարբերդի գավառի 5000 երեխաներին: Կինս ու ես Սիրիա տեղափոխեցինք ընդհանուր առմամբ 8000 երեխա: Աշխատանքը հատկապես պահանջում էր շատ չփուժներ թուրք պաշտոնյաների հետ, իսկ մենք այդ հարցում լավ էինք հենց այն պատճառով, որ ոչ միայն թուրքերեն գիտեինք, այլև թուրքերի հետ առաջվա պես բարեկամական հարաբերությունան մեջ էինք: Ահա թե ինչ ասաց կնոջս Նարբերդի ոստիկանապետը, երբ երեխաների՝ մեր կողմից կազմակերպված տեղափոխումն ավարտելուց քիչ առաջ Ուրֆա ժամանեց.

«Այդ որտեղի՞ց ես գտել այս ամուսնուդ: Երբ նա հայտնվեց Նարբերդում և մեզ հայտնեց, որ եկել է 5000 երեխա Սիրիա տանելու, մտադիր էինք նրա ճանապարհին դնել բոլոր հնարավոր դժվարությունները: Սակայն տես, որ փոխանակ դժվարություններ ստեղծելու, օգնեցինք նրան: Իր առիթնող վարվելաձևով նա իր մատի վրա փաթաթեց և՛ ինձ, որ անձնագրային ամբողջ բաժանմունքի պետն եմ, և՛ նահանգապետին՝ օգտագործելով նրան որպես իր օգնական»:

Հայտնի է, որ հաճոյախոսությունների հարցում թուրքերը երբեք չեն թերանում: Բայց հաճոյախոսությունները չէ, որ ինձ համար կարևոր էին, այլ այն հանգամանքը, որ երբեմն ինձ իրոք հաջողվում էր «նրանց գլխին խաղեր խաղալ»:

## ԾԱՆՐ ԱՇԽԱՏԱՆՔ

Մի քանի դեպքեր ևս ունենք Հաղորդելու որբերի «մեծ տեղաշարժի» մասին: Մի անգամ որբ երեխաների մի մեծ շարասյուն կրկին տեղավորել էինք սայլերի մեջ ու դուրս էինք հանում Դիարբեքի քաղաքի Ուրֆա տանող դարպասից: Քաղաքից դուրս սովորականի նման ուստիկանները մեկ անգամ ևս ստուգում էին անձնագրերը: Պարզվեց, որ Մարդինի երեխաներին ներկա-բացակա անելու ժամանակ հինգ անուն կանչելիս ոչ մի երեխա չհերկայացավ: Իսկ ստուգման ավարտին՝ մարդինցի հինգ երեխա, որոնց անունները չէին կարդացել, այնտեղ կանգնած մնացին: Նրանց ուղարկել էին հիվանդ երեխաների փոխարեն՝ տալով վերջիններին անունները:

Ուստիկանը չէր թույլատրում, որ այդ հինգ երեխաները մեկնեն: Գնացի քաղաք նահանգապետի մոտ և բացատրեցի նրան ամեն ինչ: Սակայն նա մերժեց խնդրանքս, ասելով, որ երեխաները չեն կարող մեզ հետ գալ, նրանք մնալու են Դիարբեքիում, մինչև որ Մարդինի ուստիկանատնից ստացվեն հարկ եղած տեղեկությունները: Ես էլ անմիջապես մեկնեցի՝ միանալու այդ ընթացքում ուղևորված երեխաներին: Ճանապարհին հանդիպեցի անանուն հինգ երեխաներին, որոնց ուստիկանները ետ էին տանում: Երբ սայլում նստած՝ երեխաների անձնագրերն էի աչքի անցկացնում, հանկարծ մի ուժեղ քամի բարձրացավ, ու փոշին ինձ ամբողջովին պարուրեց: Բայց ամենասարսափելին այն էր, որ մրրիկն արագ գորանալով հասավ անձնագրերին: Մեկ էլ տեսնեմ՝ իմ բոլոր թղթերը սլանում են քաղաքի ուղղությամբ: Սա արդեն ճակատագրական դիպված էր: Բարբեախտաբար, սայլից բավական հեռու գտնվող մի քարայրում, որտեղով սուրացել էր քամին, ես գտա անձնագրերի չորս տրցակ, բայց մեկն այդպես էլ չգտնվեց: Այժմ գիտեի, որ այս պատմություն պատճառով ճանապարհորդության ժամանակ ուստիկանության հետ բարդություններ եմ ունենալու:

Հաջորդ օրը քարավանը հասավ Սևերեկ քաղաքը: Անմիջապես սկսվեց ներկա-բացական: Այս անգամ սակայն մեծ խմբով երեխաներ կային, որոնց անունները անձնագրերում բացակայում էին: Բացատրեցի եղելությունը, բայց ինչ փույթ: Ուստիկանն ուզում էր երեխաներին խլել: Ես անհապաղ ներկայացա քաղաքի

նահանգապետին: Նա խոստացավ հաջորդ օրն անձամբ քննել գործը: Սակայն քանի որ քաղաքում բավարար տեղ չկար, որ 300 երեխա գիշերեին, խնդրեցի՝ մեզ թույլ տրվի մեկ ժամ ևս շարունակել ճանապարհը, որպեսզի որևէ աղբյուրի մոտ ճամբար խփենք: Կառավարությունն պաշտոնյան համաձայնեց, սակայն մեր հետևից ոստիկան ուղարկեց, որն ամբողջ գիշեր հսկեց, որպեսզի ոչ մի երեխա չփախչի: Անտեղի մտավախություն: Մի՞թե չգիտեին, որ ես, որպես կանոն, բոլոր երթերը կազմակերպում էի բացերեաց և այդպիսով պահպանում կառավարության՝ իմ նկատմամբ տաժաժ վստահությունը: Հաջորդ օրը պարտավոր էի կրկին քաղաք վերադարձնել այն երեխաներին, որոնց անունները անձնագրերով էին հաստատված: Նահանգապետն ուզում էր նրանց տեսնել: Երկար խնդրանքից հետո միայն ինձ հաջողվեց նրան համոզել, որ թույլ տա երեխաներին տանեմ մինչև Ուրֆա: Այնտեղ նրանք պիտի սպասեին, մինչև կպարզաբանվեր անձնագրերի հետ կապված խնդիրը:

Ուարբերդում ես երկու հաջողակ օր ունեցա: Միանգամից կարողացա ճանապարհ դնել 700 երեխա: 400-ը սայլերով մեկնեցին Դիարբեքիրի վրայով, մնացած 300-ը ձիերի մեջքերին նստած գնացին Մալաթիայով: Զերաբլուզում երկու խումբը վերստին միանալու էին: Ուարբերդում ինձ համար շատ կարևոր էր ուղարկել միանգամից մեծ խմբեր, քանի որ ճանապարհորդության օրը միշտ ինձնից պահանջվում էր ավտոմեքենայով հավաքել-բերել կառավարական մի քանի կարևոր անձնավորություն: Սրանց հանձնարարված էր ստուգում անցկացնել, ընդ որում յուրաքանչյուր երեխայի դեմքին նայելով: Որևէ պատանի, որը մոտ էր գինվորական հասակին, իրավունք չունեի լինել մեկնողների թրվում: 700 երեխայի համար այդպիսի մի ստուգում տևում էր մոտավորապես մեկ օր, և այդ իսկ պատճառով ճանապարհ էինք ընկնում միայն երեկոյան դեմ: Ապա հաջորդ օրը, քաղաքից 2-3 ժամ հեռավորության վրա, գիշերային առաջին կանգառի ժամանակ կրկին կատարվում էր ոստիկանական ներկա-բացական: Կառավարության պարոններին նույնպես ես էի պարտավոր այդ վայրերը հասցնել իմ մեքենայով:

Էշով, ջորիով կամ ձիով երթերն ընթանում էին միշտ մեծ շուքով: Ոչ միայն երեխաներն էին ճառագում ուրախությունից, այլև կենդանիներն էին զարդարված դրոշներով ու զանգակներով: Տանիքներից մահմեդական կանայք մեկնող երեխաների հետևից

իրենց լիլիլիլի-ն էին հնչեցնում: Իհարկե այդ կանչը նախկինում մեկ այլ նշանակություն է ունեցել: Դա հնչում էր, երբ մորթվում էին այդ նույն երեխաների ծնողները: Չէ՞ որ դա ոչ միայն ուրախություն կանչ էր, այլև մարտակոչ: Լսել երեխաների ծիծաղը, տեսնել նրանց զվարթ դեմքերը՝ սրտի մեծ հրճվանք էր ինձ համար, կարծես վարձատրվում էի իմ գործադրած հսկայական ջանքերի համար: Իսկ երեխաների համար՝ կարծես եզրիպտոսի ստրկությունից մեկնում էին Քանան երկիրը:

Երբ առաջին անգամ Սարբերդ եկա տեղի 5000 երեխաների տեղափոխումը կազմակերպելու համար, մարդիկ ինձ կախարդի տեղ զրեցին:

Մեծահասակները կասկածում էին այդքան մեծ թվով երեխաներ հեռավոր Սիրիա տանելու կարելիությունը. չէ՞ որ մինչև Ջերաբլուզի սահմանը հասնելու համար 10 օրվա ճանապարհ էր պահանջվում: Դրան նախապատրաստվելը միայն տևեց մի քանի շաբաթ: Ցուցակներ պիտի ուղարկվեին, նահանգապետը դրանք պիտի հաստատեր, որի հիման վրա ոստիկանությունում անձնագրեր պիտի պատրաստվեին: Կարգի պիտի բերվեր հազուստեղենը, մի խոսքով՝ շատ աշխատանք կար անելու: Սակայն քանի դեռ մեզ էր վերաբերում աշխատանքը, կատարում էինք ուրախությամբ: Հրաշալի օգնում էր նաև ոստիկանությունը: Սկզբում միայն սայլապաններն էին դժվարություններ հարուցում: Նրանք 700 ֆրանկ էին պահանջում 10 օր գնալու և 10 օր վերադառնալու համար: Հրեշավոր գումարներ: Սակայն մեզանից առաջ Մերձարևելյան նպաստամատույցից ոմանք, անցնելով նույն ճանապարհը, վճարել էին այդ գումարները: Ուստի սայլապանները հույս ունեին ինձից նույնքան ստանալ: Իսկ ես նախ սպասեցի Ուրֆայից, Մարդինից ու Դիարբեքիրից ժամանող իմ սայլերին, որոնք մեկ օրվա և մեկ սայլի համար պահանջում էին 400 ֆրանկից ոչ ավելի: Ինձ համար պարզ էր, որ որբերի այս բանակը տեղափոխելու համար ես պետք է օգտագործեի Սարբերդում եղած բոլոր սայլերը: Հենց որ դրսից եկող սայլերը հայտնվեցին, խարբերդցի սայլապանները տեղի տվեցին և համաձայնվեցին գործը կատարել նույն գումարով: Այսպիսով, երեք ամիս շարունակ մոտ 130 սայլ մշտապես ճանապարհին էր, դրա հետ նաև՝ 200 ձի, ջորի ու ավանակ:

Սարբերդից հետո հերթը հասավ Մալաթիային: 250 հայ որբերի կողքին կային նաև Թուրքիայի 1250 հույն որբեր: Նրանց հա-

վաքել էին ամերիկացիները 1920–21 թթ. ձմռանը բռնազաղթ-վածների շարասյուներից: Այդ երեխաներն այժմ մեզ համար զգալի հոգսերի աղբյուր էին: Մերձարևելյան նպաստամատույցն իրավունք է ունեցել նրանց միայն կերակրել ու հագցնել, սակայն ոչ ուսուցանել: Բոլորն էլ այնպիսի ողորմելի վիճակում էին, որ նախքան նրանց փոխադրման համար իմ այնտեղ հայտնվելը շատերը մահանում էին:

Այս քաղաքում ևս պարտավոր էի նախ բոլոր երեխաների ցուցակները ներկայացնել ոստիկանատուն: Անուններն արտասանելը լեզվական որոշ դժվարություններ էր առաջացնում: Մեկը կարող էր կոչվել Նարալամբոս Գեթղեմանեսոս, մյուսը՝ Գեթղեմանեսոս Նարալամբոս, մեկ ուրիշ երեխա էլ կոչվում էր Ստավրոս Արիստակոս, իսկ մեկ ուրիշը՝ Արիստակոս Ստավրոս: Մարդ ի՞նչ հասկանա: Բոլոր երեխաներին պետք էր անձամբ տեսնելի. չէ՞ որ պետք է որոշելի, թե արդյոք երեխան կարող էր ձիով ճամփորդել, այդ դեպքում նա պետք է գրանցվեր այն ցուցակում, որը գնալու էր Տավրոսով, եթե սայլով, ապա պետք է գնար Նարբերդ-Դիարբեքիր-Ուրֆա երկար ճանապարհով:

Փոխադրման հենց սկզբին խնդրեցի, որ մեկնող ամեն 10 երեխայի հատկացվի մի մեծահասակ, և ստացա պաշտոնական համաձայնություն: Այնպես պատահեց, որ Մալաթիայում ծառայություն մեջ էր ամերիկահայ էմանուելը: Այդ մարդը պատերազմից առաջ Ամերիկայից եկել էր ծեր մորը տանելու: Պատերազմը սկսվել էր, ու վերադարձը անհնարին դարձել: Տեղահանություն ժամանակ ստույգ մահից խուսափելու նպատակով էմանուելը թաքնվել է մի քարայրում և այնտեղ ապրել գրեթե չորս տարի: Պատերազմից հետո կրկին հայտնվել էր և քանի որ անգլերեն լավ խոսելիս է եղել, ամերիկացիների կողմից անմիջապես աշխատանքի է ընդունվել: Ահա այդ հրաշալի աշխատողին է, որ ուզում էի ընտրել որպես երեխաների ուղեկից Թուրքիայից դուրս գալու ժամանակ: Սակայն նահանգապետն ինձ ասաց.

«Ում ուզում ես, կտամ, միայն ոչ նրան: Որովհետև նա մեր մեծ թշնամին է: Ես դեռ զգալ կտամ, թե որքան ենք մենք նրան ատում»:

Դա էմանուելին շատ վշտացրեց: Սակայն ես հույս ունեի նահանգապետին այնուամենայնիվ համոզել: Մալաթիայում էր գտնվում միսիոներ Քրիստոֆելի հիմնած որբանոցը: Այնտեղ տեղադրված էր մի հիվանդանոց: Վերջինիս բախտը ես էի տնօրի-

նում: Ինձ հայտնի էր, որ քաղաքային վարչությունը վաղուց հիվանդանոց էր ուղում ունենալ: Գնացի, ուրեմն, նահանգապետի մոտ ու հայտարարեցի, որ պատրաստ էի քաղաքին նվիրել այդ հիվանդանոցի սարքավորումը: Այդ լուրը պարոնին շատ ուրախացրեց: Սակայն երբ առաջ եկա խնդրանքով, որ էմանուելին ազատ արձակի, նա կատաղեց:

«Կաշառե՞լ եք ուղում ինձ: Անմիջապես հեռացե՛ք այս գրասենյակից: Դուք՝ եվրոպացիներդ ու ամերիկացիներդ չե՞ք, որ մեր երկրի մասին խոսում եք որպես կոռուպցիայի երկրի, իսկ ինքներդ էլ կաշառում եք: Զզվելի եք, դուրս, դուրս, այլևս չեմ ուղում Ձեզ տեսնել»:

Այ քեզ բան, մտածեցի ես: Ճիշտ չէի՞ սկսել գործը: Արդյոք գրասենյակը այն տեղը չէ՞ր նման խնդրանք ներկայացնելու համար: Նահանգապետը ոստիկան կանչեց: Ես ոտքի կանգնեցի՝ ասելով, որ ոստիկանի կարիք չկա, ձանապարհը ինքս կգտնեմ: Գնալիս դեռ համարձակվեցի ասել. «Դուք ինձ սխալ հասկացաք. ես ձեզ չուզեցի կաշառել, այլ հիվանդանոցը նվիրել, և չեմ տեսնում, թե ինչն էր սխալ, որ միաժամանակ խնդրանքով հանդես եկա, որի բավարարումն այնքան դյուրին պիտի լիներ Ձեզ համար»:

Նույն օրվա երեկոյան, որ Մալաթիայում անցկացրած օրերիցս վերջինն էր, անցնում էի զորանոցի մոտով: Այնտեղից մեկը անունս կանչեց: Մտա ներս: Կանչողը Ուրֆայից ինձ ծանոթ մի թուրք սպա էր: Ջերմ ողջույնին հետևեց ընդունված սուրճը: Վերջում լսեցի նրա խնդրանքը.

– Այսօր կեսօրից հետո այցելեցի նահանգապետին: Նրա միակ աղջնակը ծանր հիվանդ էր: Քաղաքի երկու բժիշկները՝ մեկը թուրք, մյուսը՝ հույն, հավանաբար չգիտեին, թե երեխան ինչից է տառապում: Նահանգապետին խորհուրդ տվեցի քեզ ևս դիմել, քանի որ Ուրֆայում դու ես իմ երեխային բուժել: Երեխայի հայրն ասաց, որ նա չի համարձակվի չվեյցարացուն կանչել, որովհետև այսօր նրան այնպիսի վատ վերաբերմունք է ցույց տվել, ինչպես երբեք որևէ եվրոպացու: Ես նրան պատասխանեցի. «Դուք Յակոբ էֆենդիին չեք ձանաչում: Նա երբեք ռիս չի պահում, նրան միշտ կարելի է սիրաշահել»: Ես նրան պատմեցի, թե ինչպես էին քեզ հետ վարվել մի քանի հայեր, և թե ինչպես դու դրանից հետո էլ շարունակում ես նրանց մասին հոգ տանել, նրանց վեր ու վար ես անում: «Եթե ուզեք,– շարունակեցի ես,– նրան կուղարկեմ ձեր



դատեր մոտ»։ Իսկ Հիմա խնդրում եմ քեզ, զնա Հիվանդ երեխայի մոտ ու խնամի՛ր նրան»։

Այժմ իմ հերթն էր նրան բացատրել, որ նահանգապետն իմ հաշվով բացարձակապես սխալվել էր, որ ես նրան չեմ ցանկացել կաշառել։ Սակայն, այնուամենայնիվ, խոստացա երեխային տեսնել, եթե նահանգապետն իմ հետևից մարդ ուղարկեր։ Հաջորդ օրը՝ վաղ առավոտյան, մի զինվոր ծեծեց դուռս։ Նա ինձ մի երկտող տվեց, որով նահանգապետն ինձ խնդրում էր այցելել իր Հիվանդ երեխային։ Եվ ես գնացի։

Պարոնը դիմավորելով ինձ իր հյուրասենյակում՝ ներողություն խնդրեց։ Ես անշուշտ պատրաստակամություն հայտնեցի։ Ով քաջությունն ունի ոչ միայն ընդունելու կատարած սխալը, այլև դրա համար ներողություն խնդրելու նրանից, ում վիրավորել է, նա, թեկուզ և մահամեղական, կատարյալ մարդ է։

Երեխայի հիվանդությունը կարողացա ախտորոշել։ Նա ուներ Typhus recurrens։ Եթե քաղաքում մի սրվակ Neosalvarsan ճարվեր, հնարավոր կլիներ հիվանդությունը հաղթահարել, սակայն քանի որ տվյալ պահին փոքրիկ քաղաքում այդ դեղը գոյություն չուներ, մնում էր սպասել, մինչև հիվանդությունն ինքը դադարեր, մի բան, որի համար երեք օր էր պետք։ Նկատի ունենալով, որ երեխայի սրտի աշխատանքը բավարար էր, ասացի, որ հարկ չկա վախենալու հոր ունեցած միակ երեխայի կյանքի համար։ Այսպիսի մխիթարական խոսքերով ևս նրան հավաստիացրի, որ երեք օրից հիվանդությունը կանցնի։

Դեռևս կեսօրից առաջ մեկնեց ութ սայլի մեջ խցկված երեխաների իմ վերջին խումբը, բոլորն էլ թույլ ու հիվանդ։ Իսկ ինքս մեկնեցի կեսօրից հետո բեռնատար մի փոքրիկ մեքենայով, որի մեջ լցրել էի ամենատառապյալ հիվանդներին։ Նստել էի վարորդի կողքին ու ծնկներիս առել ութ տարեկան մահամերձ մի տղայի, քանի որ նրա համար մեքենայի հետևում այլևս տեղ չգտանք։ Հազիվ էինք քաղաքից դուրս եկել, նա սկսեց խոռացնել, իսկ կես ժամ անց մահացած էր։ Սակայն նրան դնելու տեղ չկար, և նա սառեց ծնկներին վրա։

Եփրատն անցանք փայտե մի կամրջով, որտեղ իմ վերջին անցման ժամանակ այնքան տանջվեցի, մինչև կարողացա ոստիկանին բացատրել, որ նա իրավունք չունի ինձ կանգնեցնելու։

Տառապյալ խմբի հետ վերջապես հասանք Սարբերդ։

Իսկ այն ո՞վ էր, որ վեց օր Հետո ճառագող դեմքով այստեղ Հայտնվեց: Էմանուելը: Նա պատմեց, թե ինչպես նահանգապետի երեխայի ջերմությունը, ինչպես ասել էի, երեք օր անց նվազել էր: Գրանից Հետո էմանուելին կանչել են նահանգապետի մոտ, որը նրան անձնագիր էր տվել: Այսօր էմանուելն (արդեն վաղուց) Ամերիկայում է գտնվում և կարիք չունի այլևս վախենալու անխիղճ թուրքերից:

Այս գլուխն եզրափակելուց առաջ կցանկանայի նաև նշել, որ տեղափոխման մեր տաժանակիր աշխատանքը զգալիորեն թեթևացնում էին որոշ խիզախ կանայք: Նրանք էին չվեյցարիացի միսիոներուհի Վերենա Շմիդլինը, անգլիացի միսիոներուհիներ օրիորդ Ռութ Էդին և օրիորդ Հոլմսը, ինչպես նաև ամերիկացի տիկին Քալքը: Նրանց բոլորին ես հավերժ երախտարապտ եմ մնալու իրենց հոժարակամ օգնություն համար:

## ԴԺՎԱՐԻՆ ՈՐՈՇՈՒՄ

Երբ Խարբերդում դեռևս զբաղված էի փոխադրման խնդիրներով, մեզ մոտ եկավ Մերձարևելյան նպաստամատույց խոշոր բարեգործական կազմակերպության Սիրիայի ու Պաղեստինի շրջանի գործադիր տնօրենը՝ կնոջս ու ինձ խնդրելու, որ ստանձնենք Լիբանանում գտնվող աղջիկների մի մեծ որբանոցի ղեկավարությունը: Այդ նոր աշխատանքը, սակայն, հանգեցնելու էր Ուրֆայի միսիոներական հիվանդանոցի կազմալուծմանը: Այդպիսի քայլը պետք է դառնար մանրակրկիտ խորազննման ու կշռադատման առարկա: 1919-ից ի վեր մինչ այդ Արևելքի գերմանական միսիոներության կողմից ղեկավարվող հիվանդանոցը պատկանում էր «Հայերի չվեյցարացի բարեկամներ» կազմակերպությանը: Գործունեության հենց սկզբից աշխատանքը մշտապես գլխավորել են չվեյցարացի բժիշկները, և միսիոներության շատ նպաստներ հոսել Շվեյցարիայում գտնվող բարեկամների շնորհիվ: Այդպես է, որ 1920 թ. ես ևս «Հայերի չվեյցարացի բարեկամների» հանձնարարությամբ կրկին եկա Ուրֆա: Սակայն 1921 թ. վերջին, ինչպես նշել եմ, Շվեյցարիայի կոմիտեն ինձ տեղեկացրեց, որ հաջորդ տարվա համար չնչին կամ զրեթե ոչ մի դրամական օգնություն չէր նախատեսվում, ուստի կարող էի հիվանդանոցը փակել, եթե իմ հայեցողությամբ անհնարին լիներ առանց Շվեյցարիայից եկող

օգնություն ծայրը ծայրին բերել: Այդ ժամանակ դ-ը Լեփսիուսի միսիոներությունից ևս ոչինչ ակնկալել հնարավոր չէր, քանի որ մարկը ահավոր անկում էր ապրում: Ի՞նչ պետք է անեի ես:

Չնայած 1914 թվականից ի վեր հաճախ բողոքովին մենակ գլուխ էի հանել բժշկական հսկայածավալ աշխատանքից, ներկայումս ինձ թույլատրելի էր աշխատել միայն դիպլոմ ունեցող բժշկի համատեղությունը: Այն վկայականը, ըստ որի ես 1920 թվականին Բազելում հաջողությամբ գործնական քննություն էի հանձնել բժշկագիտությունից ու վիրաբուժությունից, այստեղ առայժմ այնքան էլ պետքական չէր: Իմ հույսը, որ այդ վկայականի հիման վրա կկարողանայի թուրքական վկայականի քննություն հանձնել և այդպիսով բժշկական աշխատանքի արտոնություն ստանալ, ի չիք դարձավ քեմալական «ազատամիտ» գաղափարների պատճառով: Թեև Ուրֆայի թուրքական առողջապահությունն տեսուչը հենց ինքն էր, որը Անգորային ներկայացրել էր իմ վկայականը, ստացված պատասխանն այն էր, որ այսուհետև եվրոպացի բժիշկներն այլևս իրավունք չունեն թուրքական վկայականի քննություն հանձնելու, իսկ եթե եվրոպացիները ցանկանում են արտոնություն ստանալ, ապա դա հնարավոր է միայն այն դեպքում, եթե իրենց բժշկագիտական ուսումը ավարտեն թուրքական համալսարանում:

Իմ հայ բժիշկը նույնպես սեպտեմբերին Սիրիա փախավ, քանի որ վաղուց Ուրֆայում լավ չէր զգում: Իհարկե, ես կարող էի փորձել շարունակել աշխատանքս մուսուլման բժշկի հետ, որը երբեմն վիրահատությունների ժամանակ ինձ ընթերակայում էր: Նա նույնպես ինձ խնդրեց մնալ: Դա պիտի նշանակեր, որ հիվանդանոցի հիմնական ծանրությունը կրկին ամբողջովին ընկնելու էր ինձ վրա: Ի վերջո որոշումս կայացրի Մերձարևելյան նպաստամատույցի առաջարկի օգտին: Ես իմ մեջ այլևս բավականաչափ ճկունություն չէի զգում, որն ինձ թույլ տար ապագայում միայն թուրքերի հետ համագործակցելու: Բոլոր նրանց համար, ովքեր անձամբ երկար տարիներ չեն աշխատել թուրքիայում, այս միտքը դժվար կլինի հասկանալ: Իսկ նրանք, ովքեր ինձ նման հատկապես պատերազմի տարիներին հարկադրված են եղել աշխատել՝ դիմակն իրենց դեմքին, կհասկանան, որ իմ համբերությունը սպառվել էր: Թող սա չընկալվի որպես մեղադրանք թուրքերի դեմ: Ես սիրով եմ աշխատել նրանց համար ու նրանց մեջ և շատերի կողմից եղել եմ սիրված ու հարգված: Թերևս ավելի շուտ

Արևելքում իշխող իրավիճակներն են, որ Արևմուտքում ծնված ինձ նման մեկին ցավ են պատճառել, և ես հաճախ հարկադրված եմ եղել ձևացնել, որ գոհ եմ ամենադժգոհ վիճակներում: Թեև Սիրիան էլ Արևելք էր, սակայն քրիստոնյա կառավարությունն ինձ կայունության տակ:

Ի վերջո ես, թեև չափազանց ծանր սրտով, վերջնականապես վճռեցի Ուրֆայում կազմալուծել աշխատանքս ու մեկնել Սիրիա՝ հավատալով, որ այստեղ ևս Աստծո առաքյալն եմ:

Ճիշտ նույն օրը՝ 23 տարի առաջ, երբ ես առաջին անգամ մուտք գործեցի այս երկիրը, նույն վայրում անցա Եփրատի մոտով: Դրանով ավարտվեց շատ սիրով, աղոթքով ու քրտինքով կատարած երկարատև աշխատանքս: Իզո՞ւր էր արդյոք այդ ամենը: Հավատքս ասում է՝ ո՛չ:

Երկիր եկա որպես խղճուկ աբեղա, իսկ այժմ ճիշտ Հակոբի նման, երբ Հարանից գնում էր դեպի Քանան, աճեցի, դարձա գրեթե երկու բանակ: Իմ սեփական հինգ երեխաները, որոնց 1920 թ. թողեցի Շվեյցարիայում, ծնվել էին Ուրֆայում: Այս փոքրիկ բանակին ավելացավ 8000 որբերի երկրորդ մեծ բանակը: Սա վստահորեն շատ ավելի բազմամարդ էր, քան Հակոբի՝ Հարանից բերածը:

## ՆՈՐ ՊԱՇՏՈՆՈՒՄ

1923 թ. փետրվարի սկզբներին կինս ու ես, ապավինելով Տիրոջ օգնությանը, ստանձնեցինք Լիբանանի Խազիր բնակավայրում գտնվող աղջիկների մեծ մանկատան ղեկավարությունը:

Հաստատությունը կարծես մեղավարույն լիներ: Այնտեղ խնամակալվում էին 1414 աղջիկներ: Երբեք քաջությունը չէի ունենա ստանձնելու այդ աշխատանքը, եթե կինս չլիներ: Նման կարևոր աշխատանքը նրան կարծես ոգևորում էր: Մենք երեխաների մեծ մասին ճանաչում էինք տեղափոխումներից, մի քանիսը նույնիսկ ուրֆացի էին: Ուրֆայում մեր վաղուց հայտնի Յակոբ էֆենդի և խանում էֆենդի անունները Խազիրում մոռացվեցին, և երեխաները մեզ նոր անուններ տվեցին՝ պապա և մամա:

Սկիզբը դյուրին չէր: Պաշտոնն ստանձնելուց անմիջապես հետո տեղեկացանք տնօրենից, որը ղեկավարում էր Մերձարևելյան նպաստամատույցի այս տարածքը, անձնակազմում կան տարածայնություններ:

Ոստիկանական ուժերը 30 ուսուցչուհի: Սրանք իրար հետ գծաված էին: Բոլորին կանչեցինք մեզ մոտ ու խնդրեցինք՝ ի բարօրություն մեզ վստահված երեխաների, իրար, ինչպես նաև մեր նկատմամբ վստահություն հանդես բերել: Չէ՞ որ ուզում ենք մեզ վստահված աղջիկների այդ խմբից հայ ժողովրդի համար պիտանի մարդիկ պատրաստել: Հորդորն ապարդյուն անցավ:

Մեկ ամիս հազիվ էր անցել, երբ ավագ ուսուցչուհին հինգ այլ ուսուցչուհիների հետ հրաժարական տվեց: Ես իսկույն գլխի ընկա, որ սրանով ուսուցչուհիները հույս ունեին ստիպել ինձ, որ իրենց մնալը խնդրեմ, որին ի պատասխան նրանք կլծելադրեին իրենց պայմանները, այդ թվում այն, որ աշխատանքից ազատել երկու կաթոլիկ քույրերի, որոնց կոչում էին Ma-Mère և Ma-Soeur (Ֆրանս.՝ Մայր-իմ և Քույր-իմ): Այդ երկուսը վերին աստիճանի գործունյա կաթոլիկ հայուհիներ, տեսել էին, ինչպես հայ ժողովրդի կենդանի մնացած բոլոր կանայք, տեղահանություն բոլոր սարսափները, մի բան, որ մեզ բավարար հիմք պետք է տար նրանց հանգիստ թողնելու:

Հետևաբար, մենք երկար չբանակցեցինք, աշխատանքի ընդունեցինք ուսուցչական նոր ուժեր, իսկ երբ տնօրենը վերադարձավ, հնարավորություն ունեցավ դժգոհ ուսուցչուհիներին իր հետ Բեյրութ տանել: Այսպիսով, մեզ մոտ ամեն ինչ կրկին խաղաղվեց:

Որբերի հզոր տեղաշարժից անմիջապես հետո, որը կլանեց ահռելի գումարներ (միայն 8.000 երեխա Սիրիա տեղափոխելու համար ես ծախսել էի 400.000 Ֆրանկ), պարզվեց, որ նույնիսկ Ամերիկյան բարեգործական ընկերությունը ժամանակի ընթացքում ի վիճակի չէր պահել որբերի այս մեծ բանակը: Դրա համար անհրաժեշտ էր հնարավորինս արագ կրճատել որբերի թիվը: Սկսեցին փնտրել բարեգործական ձեռնարկներ ու ազգականներ, որոնց կարելի էր երեխաներ հանձնել, ջանում էինք ավելի մեծ երեխաներին որպես աշակերտներ, աղջիկներին՝ որպես սպասուհիներ տեղավորել որբանոցներում՝ թողնելով միայն փոքր երեխաներին:

Գիտենալով, որ հայ աղջիկները չեն սիրում ծառայել մահմեդականների տներում, որոշեցի մեր որբանոցի աղջիկների համար գորգագործարան հիմնել:

Իմ վերադասները համաձայն էին: Նախապես ինձ միայն 1000 Ֆրանկ տվեցին: Ինչ-որ տեղից գտանք ջուլհակի հին հաստոցներ,

նաև թեյ, և դրանով սկսեցին սովորել առաջին 40 աղջիկները: Երբ մեկ ամիս անց գլխավոր տնօրենը Նյու Յորքից եկավ ու գորգերը տեսավ, ինչպես նաև մեր ոգևորությունը գործի նկատմամբ, կարգադրեց, որ իմ տնօրինություն տակ գտնվող փոքր երեխաները բաժանվեն մյուս որբանոցների վրա, իսկ այնտեղի ավելի մեծ աղջիկները գան Սազիր:

Վերջապես հիմնվեց 120 հաստոցով աշխատող մի գործարան: Հետո զհետե մոտ 2000 աղջիկներ սովորեցին գորգ գործել, 500-ը նույնիսկ վարպետի վկայական ստացան: Այսօր այդ գորգագործուհիներն աշխատում են նաև Ֆրանսիայում, որտեղ պարսկական գորգեր են գործում: 3242 գորգերի թվում, որ թողարկեց մեր հաստատությունը մինչև փակվելը, կային մի քանի փառահեղ գործեր, որոնցից մեկը գտնվում է Վաշինգտոնի Սպիտակ տանը: Լիբանանի կառավարությունը ևս գոհ էր մեր շնորհիվ երկիր մուտք գործած եկամուտի այս նոր աղբյուրի համար: Հանրապետություն նախագահը իր անձնակազմով մի օր հայտնվեց Սազիրում՝ մեր աշխատանքը մոտիկից տեսնելու, և դրան հաջորդեց ինձ շնորհված Արժանյաց կարգի շքանշանը (Pour le mérite): Ինչպես հենց սկզբից սպասում էի, Սազիրի արևելյան գորգերը անուն հանեցին որպես բարձրորակ աշխատանքի արդյունք: Մեր գործած գորգերից վերջինը և ամենագեղեցիկը զարդարում է մի մեծահարուստի դղյակներից մեկը: Դրանով ես հատկապես եմ հպարտանում:

Թեև որբանոցի փակումից հետո ամերիկացիներն այլևս այդ աշխատանքով չզբաղվեցին, այն այժմ իր շարունակությունն ունի հիմնադրման հարցում մեզ օգնող վարպետի, ինչպես նաև մեր նախկին աղջիկներից մի խմբի շնորհիվ, որոնք երբեք չամուսնացան:

Մինչ այդ հասակ առան Մերձարևելյան նպաստամատույց կազմակերպության խնամքին հանձնված որբերը: Նոր որբեր այլևս չընդունվեցին: Սակայն նրանք, որ մշտական օգնության կարիք ունեին, ինչպես, օրինակ, կույրերը, հանձնվեցին ուրիշ կազմակերպությունների: Այսպիսով, Մերձարևելյան նպաստամատույցի հսկայածավալ աշխատանքը իր ավարտին հասավ: Աշխարհը երբեք չի տեսել բարեգործական այդ հզոր ու առատաձեռն կազմակերպության հավասարը: Այն Արևելքում գործեց 15 տարի շարունակ՝ 1915 թ. մինչև 1930 թ., ավելի քան 100 միլիոն դոլարի ներդրումով ու 1000 աշխատող ունեցող անձնակազմով, իր մի քանի հազար տեղացի օգնականներով: Տասը տարի այդ կազմակերպությանը պատկանելը մեզ համար մեծ բավականություն էր:

## ԱՄԵՆԱՄԵԾ ԶՈՀԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Ինքնին հասկանալի է, որ Արևելքում իմ բարեգործական ծառայությունը հաճախ է ինձնից զոհաբերություն պահանջել: Սակայն ամենածանրը հայցվում էր ինձնից Խաղիրում իմ նոր պաշտոնավարման ժամանակ:

Լինելով որբերի հայր՝ ես պետք է հոգայի իմ որբերի մարմնական և հոգևոր բոլոր կարիքները: Առողջ թե հիվանդ՝ նրանք մշտապես գտնվում էին իմ հոգատարության տակ:

Թեև ամերիկացի մի բժիշկ շաբաթը մեկ անգամ Բեյրութից գալիս էր Խաղիր՝ որբերին զննելու, հիմնականում ես էի, որ ամեն օր այցելում ու խնամում էի նրանց մեր փոքրիկ հիվանդանոցում: Մի անգամ, երբ պատրաստվում էի գնալ մեր երեխաներից մեկի հուղարկավորմանը, բուժքույրն ինձ կանչեց: Շտապ պետք է զրննեի նոր բերված հիվանդ երեխային: Ինչպես անմիջապես տեսա, փոքրիկը տառապում էր կարմիր քամի կոչվող հիվանդությունից: Կարգադրեցի, թե ինչ պետք է արվեր, և հասցրի ստուգել հիվանդի զարկերակը: Ապա փութացի հասնել թաղման թափորին: Այդ պահին սայթաքեցի, սակայն բռնելով չոր խոտերից՝ ոտքի կանգնեցի ու նայեցի ձեռքիս: Բթամատս ծածկված էր մանր փրշերով, որոնք թեթևակի մտել էին մաշկիս մեջ: Հագուստիս շփելով մաքրեցի մատս: Բոլոր փշերը մաքրվեցին: Սակայն երկու օր հետո սոսկալի ցավ սկսվեց, նախ՝ բթամատում, այնուհետև՝ ձեռքում: Հաջորդ օրը ստույգ ախտորոշմամբ ներկայացա Բեյրութի հիվանդանոց: Ասացի, որ ճիշտ կլինեի, եթե բթամատում անմիջապես մինչև ոսկորը գնացող խոր ճեղք կատարվեր, քանի որ նյարդի պատյանի բորբոքում էր (tendovaginitis): Բժիշկը ծիծաղեց ու նշանակեց միայն թաց թրջոցներ: Ի՞նչ կարող էի անել: Երբ ինձ մոտ հիվանդ էր գալիս բուժվելու, ինձ ամենից առաջ անհրաժեշտ էր նրա վստահությունը շահել, և ահա ես էլ ուղեցի վստահել բժշկին՝ չնայած քաջատեղյակությունս: Ավագ վիրաբույժը բացակայում էր, նա հայտնվեց միայն 5-րդ օրը: Թեև մինչև նրա գալը արդեն մի քանի ճեղքում կատարել էին, սակայն ոչ մեկը խորքը չէր հասնում: Թեև բարձի չափ ուռել էր, բարձր ջերմությունից ցնցվում էի: Թույնը շարունակում էր լափել արյունս: Ես էի, որ առաջին գիշերը կնոջս ասացի. «Լսի՛ր, վախենում եմ, մահը մեր

դռան առաջ է»։ Ակսեցի կորցնել գիտակցութիւնս։ 7-րդ օրը կինս խնդրեց բժիշկներին՝ ինչ հնարավոր է ձեռնարկել՝ կյանքս փրկելու։ Թեև հույսը քիչ էր, սակայն եթե համաձայնվեի, նրանք պատրաստ էին թեև արմունկից կտրել։ Ինձ հարց տվեցին, պատասխան եղավ. «Ինչո՞ւ եք սպասում»։

Սազիրում իմացել էին անհույս վիճակիս մասին։ Թեև կտրելու նախորդ գիշերը ուրֆացի մի աղջիկ արթնացնում է իր ընկերուհիներին։ Նրանք միասին աղոթում են իրենց պապայի համար, որ նա չմահանա։ Որոշ ժամանակ անց աղջիկը ոտքի է կանգնում ու ասում. «Պապան գալու է, բայց նախ նա պետք է շատ տառապի»։ Խուճրը գնում է քնելու։ Վիրահատության 5-րդ օրը ջերմութիւնս իջնում է։

Երեք շաբաթ անց նստած էի հիվանդանոցի պարտեզում։ Իմ կողքին տեղ գրավեց ինձ առաջինը քննող բժիշկը։ Ես հարցրի նրան, թե արդյոք ձիշտ չէ՞ր իմ ակտորոշումը։ Նա հաստատեց ու իր ափսոսանքը հայտնեց, որ բանն այդպիսի ընթացք է ստացել։ Ուղեցի նաև իմանալ, թե ինչ մանրէ է եղել վարակի աղբյուրը։ Վարակակիրը մի նուրբ, գրեթե անտեսանելի փուչ է եղել, որը մինչև նյարդապատին է հասցրել վարդախտի մանրէն։ Այն պետք է որ եղած լիներ այն աղջկա ձեռքի վրա, որի զարկերակը շոշափել էի։

Չորս շաբաթ անց դեռևս բավականին մեծ վերքով վերադարձա Սազիր։ Ինչպիսի՞ հանդիսավոր մուտք էր դա։ Բոլոր ծառայողները՝ թվով 60 հոգի, ավտոմեքենաներով եկել էին կայարան՝ ինձ դիմավորելու։ Վեց կմ անցնելուց հետո հասանք Սազիր գյուղի հրապարակը։ Տեղում հնչեցին ուրախության կրակոցներ։ Հրաձիգները գյուղի լիբանանցիներն էին։ Նրանց համար ևս ես նորահայտ բարեկամ էի։ Գյուղից մինչև իմ բնակարանը՝ մեկ կմ վրա, փողոցի երկու կողմում կանգնած էին իմ որբերը։ Յուրաքանչյուրի ձեռքին ծառի մի ճյուղ կար, որ բարի գալուստի մաղթանքով նետվում էր դանդաղ ընթացող ավտոմեքենայի առաջ։ Իսկ ամեն տասներորդ երեխա ձեռքին վարդի փունջ ուներ, որ բացականչելով «Բարի գալուստ, պապա»՝ նետում էր ինձ՝ մեքենայից ներս։ Ի վերջո տուն հասա համարյա վարդերի մեջ թաղված։

Ո՞վ ինձ կմեղադրի լաց լինելու համար։ Չէ՞ որ մտածում էի այն Միակի մասին, որին ուղեցի կյանքս նվիրաբերել, և որը մի օր նման ձևով հայտնի մի քաղաք է մուտք գործել։ Բայց այդ Նա էր, իսկ ես՝ մի չնչին էակ։ Ինչպիսի՞ հակադրություն։ Այս մտքերն ու վերադարձի ուրախութիւնն էին, որ խլում էին արցունքներս։



Որբերն ու տեղացիները ինձ հավաստիացրել էին իրենց սրտագին վերաբերմունքը, վերջիններս նույնիսկ նրանով, որ ուխտի էին գնացել Լիբանանի Աստվածամոր տաճարը և աղոթել այնտեղ իմ ապաքինման համար: Նաև Մերձարևելյան նպաստամատույցի՝ Նյու Յորքում գտնվող գլխավոր նիստից հեռագիր էին ուղարկել: Ամենագեղեցիկը, սակայն, Ուրֆայի որբանոցի նախկին վարիչ օրիորդ Հոլմսի նամակն էր, որտեղ ասված էր.

«Այդ հրաշագործ աջը: Ինչպես է այն աշխատել, ճգնել ու ծառայել, ինչ կյանքեր է փրկել, ինչպիսի սփոփանք է բերել հազարավոր մարդկանց, ինչպիսի գեղեցիկ հիշատակներ է պահպանել Ձեզ համար, այժմ նրա գործն ավարտված է:

Ես ողջունում եմ նրան՝ ի դեմս իր իսկ պարտություն: Համբուրում եմ այդ բարեհամբույր ձեռքը, որը երբեք Աստծո որևէ արարածի հանդեպ չարիք չի գործել, և ես երջանիկ եմ, որ ինձ մոտ է Խաղիբից ուղարկված նամակը, որը հավանաբար նրա վերջին գրածներից է»:

Ավելորդ է ասել, որ սկզբում աջ ձեռքիս կորուստը ճնշում էր ինձ: Մենք՝ փոշուց կերտված թշվառներս, նման դժվար պահերին սրտում միշտ ունենք այս հարցը. «Ինչո՞ւ»: Ինչո՞ւ պետք է ես զոհաբերեի մարմնիս այս կարևոր անդամը: Կարծես ամեն «ինչու» պետք է ունենար «դրա» պատասխանը: Մի՞թե չէի կարող բավարարվել այն հավատով, որ ես Աստծո ձեռքում եմ, որ Նա ճիշտ ճանապարհով առաջնորդում է ինձ՝ հանուն Իր անվան: Ինչի՞ համար այլևս հարցնել «ինչո՞ւ»: Ձե՞ որ ես ունեի նրա խոսքը: Դրանով ես փորձեցի մխիթարվել և հատկապես այն հատվածներով, որտեղ խոսվում է սիրո մասին, որը խրատական է:

Երկնային հայրը շատ ավելի սիրառատ է, քան երկրային որևէ էակ: Ես ինձ ասացի, որ միթեևանի Յակոբի միջոցով Նա փորձում է անել այն, ինչ չի կարող անել երկթևանու միջոցով: Այսպես է, որ ես կարողացա հաղթահարել իմ աջ ձեռքի կորստի ցավը: Եվ եթե այժմ ինձ վիճակված է որպես հաջմանդամ շարունակել իմ ուխտագնացությունը, ապա թող Աստված լինի ինձ օգնական, որ լինեմ ու մնամ լավատես հաջմանդամ:

## ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ

Երբ խաղաղությունը մեր աշխատանքը որքանի հետ ավարտվեց, կինս ու ես դեռ երկու տարի աշխատեցինք Բեյրութում: Այնտեղ կինս կարող էր հետևել որբանոցից ելած աղջիկներին: Իսկ ես պետք է աստիճանաբար լուծարեի գորգերի արտադրությունը: Ամերիկյան բարեգործական ընկերությունը, որին մենք ծառայել էինք տասը տարի, կազմալուծվել էր: Սակայն նրանից առաջ եկավ Մերձարևելյան Հիմնադրամը (Near East Foundation), մի ընկերություն, որի նպատակն էր զեկուցումների և դասավանդման միջոցով բարոյական, հոգաբործական ու առողջապահական հարցերում օգտակար լինել Արևելքի ժողովուրդներին, հատկապես՝ գյուղաբնակներին: Այդ աշխատանքն արդեն իսկ բազմաթիվ երկրներում, որտեղ այն ողջունվում էր, շատ բարիք է սերմանել: Մենք երկուսս էլ պատրաստ էինք հեռավոր հյուսիսային Սիրիայում կատարելու նման աշխատանք, որի համար ես հատկապես ուրախ էի, քանի որ այդ աշխատանքն ինձ առիթ պիտի տար որպես միսիոներ գործելու նաև մահմեդականների շրջանում: Նոր էի տեղ ընտրել Նիսիբիսի մոտ՝ Ղամիշլիում, որտեղից սկսելու էինք ամբողջ շրջանի մշակումը, երբ պաշտոնական մարմինների կողմից վետո դրվեց, որի հետևանքով Հիմնադրամը հրաժարվեց՝ հայտնելով, որ մեզ համար այլևս աշխատանք չունի: Սկզբում սա կարծես հարված էր դեմքիս: Սակայն շատ շուտով կրկին հանդարտվեցի՝ մտածելով հետևյալը. «Ո՞վ էր ինձ Արևելք ծառայության ուղարկել՝ դ-ր Լեփսիուսի միսիոներությունը, թե՞ այնուհետև Մերձարևելյան նպաստամատույցը, որը մեզ հրավիրել էր: Արդյո՞ք այդ բոլորի հետևում ես չպետք է փնտրեի մեծ Վերակացուին, որի հանձնարարությունը միայն ես աշխատանքս սկսեցի: Մի՞թե նա այլևս իմ կարիքը չէր ունենալու: Մի՞թե նրա ծառայությունում ևս գործազրկություն գոյություն ունի: Իհարկե, ո՛չ, ինչ-որ տեղ նա անպայման զգալու է ձեր ծառայի կարիքը: Հավատքը սկսեց իր ասելիքն անել, սփոփանքն ու հանգստությունը վերադարձան: Եվ ես չսխալվեցի. «Հայերի չվեցարացի բարեկամները» կրկին հրավիրեցին մեզ աշխատանքի: Բեյրութի փախստականների ճամբարում պիտի ստանձնեինք աղետյալն-

րին օգնելու անհապաղ գործը: Այնտեղ այժմ պիտի կազմակերպեինք խոհանոց, մանկամսուր, նաև խորհրդատվական կետ, և մի բան, որ ինձ առանձնապես ուրախացրեց. բազմազավակ այրիների համար տնակների կառուցում: Այսպիսով, կինս կրկին դարձավ ճամբարի մայրը, իսկ ես ճամբարի հայրը: Այժմ կրկին անթիվ առիթներ ստեղծվեցին՝ սատարելու արևելցի մեր բարեկամներին, և այսպես իմ ծառայությունն Արևելքում կշարունակվի մինչև այն օրը, երբ Տերը կասի՝ բավական է:

## ՎԵՐՋԱԲԱՆ

### ՔՅՈՒՆՑԼԵՐԻ ՎԱՍՏԱԿԸ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Այս գրքի հեղինակը, ինչքան էլ որ պատկերավոր և բարեխիղճ կերպով հաղորդում է իր կյանքի գործունեություն մասին, մի բան նա համեստորեն չի նշում՝ գիտությունը մատուցած իր ծառայությունը: Այդ մասին անշուշտ հարկ է, որ հրատարակիչը մի քանի խոսք ավելացնի:

Արեղա Յակոբ Քյունցլերը իր կրթությունն ստացել է Բազելի վարդապետարանում: Գլաբուսում կարճ ժամանակ ծառայելով որպես վիրաբուժության սանիտար և հիվանդանոցի ղեկավար՝ նա աշխատանքի է անցնում Բազելի քաղաքացիական հիվանդանոցի բուժական, իսկ ավելի ուշ՝ վիրաբուժական բաժանմունքում: Այստեղ նա մնում է հինգ տարի, մինչև որ 1899 թ. դ-ր Հերման Քրիստը, որ ղեկավարում էր միսիոներական հիվանդանոցը Թուրքիայում, իր մոտ՝ Ուրֆա հրավիրեց: Այնտեղ Քյունցլերն աշխատեց ավելի քան 20 տարի, նախ՝ դ-ր Քրիստի, ապա՝ ընդմիջումներով նրան հաջորդող դ-ր Անդրեաս Ֆիչերի ղեկավարությունում: Բժիշկների սակավության պայմաններում Քյունցլերը հաճախ ստիպված էր լինում արեղայի իր աշխատանքը փոխարինել բժշկի ընթերակայի պաշտոնով: Հիվանդանոցի ղեկավարի բացակայության պարագայում նրան էր անցնում նաև հիվանդների քննության ու խնամքի պարտականությունը: Քանի որ որակյալ ծառայողական անձնակազմի պակասը մեծ էր, Քյունցլերը հայուսուցչուհիներին տեսական ու գործնական դասեր էր տալիս հիվանդների խնամքի վերաբերյալ՝ այսպիսով ստեղծելով հմուտ բուժքույրերի մի բանակ: Աշխահամարտի տարիներին, երբ խափանվել էր դ-ր Ֆիչերի վերադարձը Ուրֆա, Քյունցլերին հանձնվեց հիվանդանոցի ղեկավարությունը, որի ընթացքում նա ժամանակավորապես մենակ էր տանում բժշկական ամբողջ աշխատանքը: Նրա բուժած հիվանդները հաշվվում են հազարներով: Նա կատարում էր գրեթե բոլոր փոքր ու մեծ վիրահատությունները՝ հատկապես մեծ հմտություն ցուցաբերելով աչքի հիվանդություն-

ների բուժման ժամանակ: Ուրֆայում նա նաև միակ մանկաբույժն էր:

Քյունցլերը Դիարբեքի բժշկական կլինիկայի հիմնադիրներից է: Կարճ ժամանակով նա եղել է նաև պարսից արքայազների բժշկական խորհրդատուն, և նրան էին վստահված նաև Ալաուիտ երկրամասի տարբեր գյուղերում անցկացվող առողջաբանական հետազոտությունները, որոնք անց էր կացնում Բեյրութի ամերիկյան համալսարանը Մերձարևելյան նպաստամատույցի հանձնարարությամբ: Այն, որ իր բազմաթիվ ճանապարհորդությունների ժամանակ նա ամենուրեք պիտի հանդես գար բժշկական սպասարկումով ու խորհրդատվությամբ, նրա համար ինքնըստ-ինքյան հասկանալի էր: Նա իր դիտարկումներն ու փորձառությունը շարադրել է բազմաթիվ մեծ ու փոքր հրապարակումներում:

Հայրենիք կատարած իր մի այցի ժամանակ Քյունցլերը հանձնում է բժշկագիտական քննություն, որով ձեռք է բերում հետևյալ վկայականը.

Բազել, 7 փետրվարի, 1920 թ.

Բազելի բուժական ու վիրաբուժական համալսարանական կլինիկայի ներքոստորագրյալ գլխավոր բժիշկները 1920 թ. փետրվարի 1-ին եղել են Ուրֆայի հիվանդանոցի կառավարիչ պարոն Յակոբ Քյունցլերի փորձագետները:

Պարոն Քյունցլերն ապացուցեց, որ նա լավ փորձ ունի մի շարք հիվանդությունների ախտորոշման հարցերում, որ նա գիտականորեն յուրացրել է հիվանդության բնույթը և միանգամայն լավ է կողմնորոշվում բուժման սկզբունքների հարցերում: Նա այս քննությունը հանձնեց գերազանցությամբ, մասնավորապես նաև գործնական առումով, որի մեջ նա ցուցաբերեց մեծ կարողություն:

Քաղաքացիական հիվանդանոցի բուժական ու վիրաբուժական կլինիկայի գլխավոր բժիշկներ՝

պրոֆեսոր, դոկտոր **Գ. Հոտց**

պրոֆեսոր, դոկտոր **Ռ. Շտեհելին**

Քյունցլերը, Ուրֆայի հիվանդանոցում իր գործունեության հետ մեկտեղ, 15 տարի շարունակ զբաղվել է օդերևութաբանական ծառայությամբ, որոնց արդյունքները պարոն դ-ր Քրիստի վերամշակմամբ շարադրված են հետևյալ հրապարակումներում.

Վերին Միջագետքի կլիմայի մասին, «Մետեորոլոգ» ամսագիր, տետր 11, 1901, Ուրֆայի կլիմայի վեց տարվա դիտարկումները, նույն տեղում, տետր 10, 1906, Ուրֆայի 1906 թ. օդերևութաբանական ուսումնասիրությունների արդյունքները, նույն տեղում, տետր 5, 1907:

Երևի քիչ են այն եվրոպացիները, որոնք առաջավոր Արև-վելքի երկրներն ու մարդկանց այնքան լավ են ճանաչում, ինչպես Քյունցլերը: Ճանապարհորդական տարբեր գրառումներում, բարքերի ու սովորությունների, բնորոշ դեպքերի ու իրադարձությունների նկարագրություններում նա կրկին ներկայացնում է Արևելքի գույները կյանքը:

Քյունցլերի՝ լեզուների իմացությունը արտակարգ էր: Գերմաներենից, ֆրանսերենից ու անգլերենից բացի նա խոսում էր հայերեն, թուրքերեն, արաբերեն և համեմատաբար ավելի պակաս՝ քրդերեն:

Այս բոլորից հետո չպետք է զարմանալի թվա, որ տարբեր գիտնականներ Քյունցլերի մեջ տեսնում էին վստահելի խորհրդատուի և աշխատակցի: Նրանք բոլորը վկայում են, թե իրենց ինչպիսի արժեքավոր ծառայություններ է մատուցել Քյունցլերը: Համբուրգի կիրառական բուսաբանության ինստիտուտի տնօրեն պրոֆ., դ-ր Գ. Բրեդեմանը Քյունցլերին է նվիրել իր աշխատասիրությունը՝ «Մորեխների դեմ պայքարը Հյուսիսային Սիրիայում և Հյուսիսային Միջագետքում» (*Die Bekämpfung der Heuschrecken in Nordsyrien und in Nordmesopotamien*, Zeitschrift für angewandte Entomologie, Nr. 1, Beiheft 1 zu Band 5, 1918) հետևյալ մակագրությամբ. «Հարգարժան ընկերոջս՝ պարոն Յակոբ Քյունցլերին, սրբտազին շնորհակալությամբ նրա՝ մեր կազմակերպությունը ցուցաբերած գործնական օժանդակության համար: Առանց Ձեր աշխատակցության, որը հիմնվում է երկրի, նրա բնակչության, բարքերի ու լեզուների մասին հանգամանալից իմացության վրա, որն անչափախնդրորեն նվիրեցիք ինձ, անկարելի պիտի լիներ իմ առջև դրված դժվար խնդրի հաղթահարումը»: Իսկ նույն հեղինակի՝ Վերին Միջագետքում խաղողի վնասատուների մասին գրված աշխատասիրությունը (*Zeitschrift für Pflanzenkrankheiten*, Band 29, 1919) ունի հետևյալ մակագրությունը. «Հարգարժան աշխատակցիս՝ Ուրֆայից պարոն Յակոբ Քյունցլերին, որին պարտական եմ երկրի գերազանց իմացության շնորհիվ այս աշխատանքում տեղ գտած տվյալների մեծ մասի համար»: Գիտական մեկ

այլ աշխատանք՝ «Հյուսիսային Սիրիայում և Վերին Միջագետքում խաղողագործության մասին» (Archiv für Wirtschaftsforschung in Orient, Heft 12, 1919), պրոֆ. Բրեդեմանը հրատարակում է Քյունցլերի հետ միասին:

Իր «Նեղոսի և Կովկասի միջև» գրքում դ-ր Փաուլ Շյուցը (Dr. Paul Schütz, *Zwischen Nil und Kaukasus*) այսպես է արտահայտվել. «Քյունցլերին երևի կարելի է դասել այն սակավաթիվ մարդկանց թվին, որոնք Արևելքը ճանաչում են շնորհիվ այն բանի, որ այստեղ երկար ապրելով՝ նրանք ևս դարձել են արևելցի: Նրան անվանում են սպիտակ արևելցի: Բացի եվրոպական լեզուներից, նա ազատորեն օգտագործում է Արևելքի լեզուները: Հազիվ թե այսօր նրանից բացի գտնվի մեկը, որ նրա պես քրդերեն խոսի: Այդ մարդը պետք է իմ առաջնորդը լիներ երկրի խորքերը ճանապարհավիս: Ավելի կատարյալին չէի կարող երևակայել: Եթե ես Արևելքում իսկապես ինչ-որ բան տեսա ու լսեցի, ապա միայն Յակոբ Քյունցլերի հարուստ սրտի ու աչքերի միջոցով, որոնց մեջ մարդկային մի սերունդ ի վեր կուտակվել էր ողջ Արևելքը»:

Պարոն Քյունցլերն ուշագրավ օգնություն է ցույց տվել նաև Մաքս բարոն Փոն Օփենհայմին Մերձավոր Արևելքում իր հետազոտությունների ժամանակ: Ահա թե ինչ է գրում վերջինս այդ մասին. «Պարոն Քյունցլերը իր մշտական օժանդակությամբ հաստատուն վաստակ ունի իմ արշավախմբի պեղումներում և դրանով իսկ՝ իր ներդրումը գերմանական գիտության զարգացման մեջ: Ոչ միայն ես և իմ Հալահե արշավախմբի անդամները, այլև շատ շատերը երախտապարտ են պարոն Քյունցլերին այն ամենի համար, ինչ նա արել է»: Տարբեր ժամանակներում Քյունցլերը օգնել է նաև այլ գիտնականների՝ նրանց համար բուսաբանական ու երկրաբանական նյութեր հայթայթելով:

Հայրենիքում անցկացրած արձակուրդների ընթացքում Քյունցլերը հարյուրավոր զեկուցումներ է կարդացել, որոնց ընթացքում, տառապյալ հայերին օգնելու կոչեր անելու հետ մեկտեղ, շատ հետաքրքրական տեղեկություններ է հաղորդել արևելեցյան երկրների ու մարդկանց, ինչպես նաև նրանց վարք ու բարքի մասին: Արևելքում ևս նա հաճախ զեկուցումներ է կարդացել՝ նպատակ ունենալով գլխավորապես ժողովրդին լուսավորել առողջաբանության հարցերում:

Ուրֆայում Քյունցլերը հիմնել է մի դպրոց, որը տարրական դասարաններից վերաճել է ռեալական գիմնազիայի: Նա ստացել

է Լիբանանի Արժանյաց կարգի շքանշան, որը նրան շնորհել է Լիբանանի կառավարությունը՝ երկրում գորգերի արտադրությունը զարգացնելու համար:

Հսկայական է այն աշխատանքը, որ նա կատարել է չվեյցարական, գերմանական ու ամերիկյան բարեգործական ծառայություններում ի նպաստ հայերի: Այդ աշխատանքը նրան քանիցս հնարավորություն է տվել բարեգործական ծառայության մեջ ի սպաս դնել ոչ միայն երկրի մասին իր ունեցած գիտելիքներն ու լեզուների իմացությունը, այլև անհրաժեշտության բազմաթիվ դեպքերում գործնականորեն կիրառել բժշկագիտական իր ունակությունները:

Մաղթե՛նք, որ նա գիտություն ասպարեզում ևս հաջողությամբ շարունակի իր ծառայությունն Արևելքում:

**Հրատարակչի կողմից**



## ՅԱԿՈՒՔ ԲՅՈՒՆՑԼԵՐԻ ԳՈՐԾԵՐԸ

### **Ուրֆայի միսիոներական հիվանդանոցի աշխատանքից**

Die Missionsklinik in Urfa [Ուրֆայի միսիոներական կլինիկան]. *Christlicher Orient*, Jhg. II, S. 8–10, 1901.

Araber im Missionsspital in Urfa [Արաբները Ուրֆայի միսիոներական հիվանդանոցում]. *Christlicher Orient*, Jhg. II, S. 87–91, 1901.

Zu den Anfängen der Klinik in Diarbekir [Դիարբեկիրի կլինիկայի սկզբնավորման մասին]. *Christlicher Orient*, Jhg. II, S. 192–194, 1901.

Orientalisches aus der ärztlichen Praxis in Urfa [Արևելյանը՝ Ուրֆայի բժշկական աշխատանքի կենսափորձում]. *Christlicher Orient*, Jhg. III, S. 91–95, 1902.

Unsere Patienten [Մեր հիվանդները]. *Jahrbuch der deutschen Orientmission*, S. 222–226, 1902.

Türken im Missionsspital in Urfa [Թուրքերը Ուրֆայի միսիոներական հիվանդանոցում]. *Christlicher Orient*, Jhg. IV, S. 1–5, 1903.

Unsere Klinik in Urfa [Ուրֆայի մեր կլինիկան]. *Christlicher Orient*, Jhg. IV, S. 129–132, 1903.

Jahresbericht der Missionsklinik in Urfa 1903 [Ուրֆայի միսիոներական կլինիկայի տարեկան տեղեկագրություն, 1903]. *Christlicher Orient*, Jhg. V, S. 69–73, 1904.

Klinikbericht [Կլինիկայի տեղեկագրություն]. *Christlicher Orient*, Jhg. V, S. 73–75, 1904.

Klinik in Urfa [Ուրֆայի կլինիկան]. *Christlicher Orient*, Jhg. VI, S. 36–38 und 49–57, 1905.

Freunde in Urfa [Մեր ընկերները Ուրֆայում]. *Christlicher Orient*, Jhg. VI, S. 85–86, 1905.

Der Kinderarzt [Մանկաբույժը]. *Christlicher Orient*, Jhg. VI, S. 174–176 und 189–192, 1905.

Unsere Kranken im Januar 1906 [Մեր հիվանդները 1906 թ. հունվարին]. *Christlicher Orient*, Jhg. VIII, S. 52–57, 1907.

Geistliche Krankenversorgung [Հիվանդների հոգևոր խնամքը]. *Christlicher Orient*, Jhg. VIII, S. 42–45, 1907.

Raubüberfall in der Missionsklinik in Urfa [Գողություն Ուրֆայի միսիոներական կլինիկայում]. *Christlicher Orient*, Jhg. VIII, S. 103, 1907.

- Ein Patient im Missionsspital in Urfa [Մի հիվանդ Ուրֆայի միսիոներական կլինիկայում]. *Christlicher Orient*, Jhg. IX, S. 35–36, 1908.
- Missionsklinik und Spital in Urfa 1897–1907 [Ուրֆայի միսիոներական կլինիկան և հիվանդանոցը 1897–1907 թթ.]. *Christlicher Orient*, Jhg. IX, S. 26–35, 1908.
- 12 Jahre gefangen [12 տարի բանտարկված]. *Christlicher Orient*, Jhg. X, S. 108–109, 1909.
- Urfaspital [Ուրֆայի հիվանդանոցը]. *Christlicher Orient*, Jhg. XI, S. 207–208, 1910.
- Samo, der Kinderarzt [Սամոն՝ մանկաբույժը]. *Christlicher Orient*, Jhg. XII, S. 110, 1911.
- Ärztliche Mission in Urfa [Միսիոներական առաքելություն Ուրֆայում]. *Christlicher Orient*, Jhg. XII, S. 167, 1911.
- Die ägyptische Augenkrankheit [Աչքի եգիպտական հիվանդությունը]. *Christlicher Orient*, Jhg. XIII, S. 153–159, 1911 und in Zeitschrift des deutschen Instituts für ärztliche Mission, Heft, 1911.
- Vom Wolf zum Lamm [Գայլից՝ զառ]. *Christlicher Orient*, Jhg. XIII, S. 50–51, 1912.
- Der Buchstabe tötet [Այդ գիրը սպանում է.]. *Christlicher Orient*, Jhg. XIII, S. 69–70, 1912.
- Bilder aus der ärztlichen Mission in Urfa [Լուսանկարներ՝ Ուրֆայում բժշկական առաքելությունից]. *Christlicher Orient*, Jhg. XIII, S. 90–99, 1912.
- Das Ferienheim des Urfa– Hospitals [Ուրֆայի հիվանդանոցի հանգստյան տունը]. *Christl. Orient*, Jhg. XIII, S. 170–175, 1912.
- Ein Krankentransport in Obermesopotamien [Մի հիվանդի փոխադրումը Վերին Միջագետքում]. “*Basler Nachrichten*” No 100–105, 1912.
- Aus der Klinikarbeit [Կլինիկայի աշխատանքից]. *Christlicher Orient*, Jhg. XIV, S. 29–30, 1913.
- Wer beerdigt ihn? [Ո՞վ է նրան հուղարկվորում.]. *Christlicher Orient*, Jhg. XIV, S. 29–30, 1913.
- Das neue Diakonenhaus in Urfa [Աբեղաների նոր տունը Ուրֆայում]. *Christlicher Orient*, Jhg. XV, S. 38–40, 1914.
- Vom Missionshospital in Urfa [Ուրֆայի միսիոներական հիվանդանոցի մասին]. *Christlicher Orient*, Jhg. XVI, S. 7–8, 1915.
- Bericht über den Betrieb unseres Hospitals und der Klinik in Urfa 1915–1916 [Տեղեկագրություն Ուրֆայում մեր հիվանդանոցի 1915–1916-ի աշխատանքի մասին]. *Christlicher Orient*, Jhg. XVII, S. 57–61, 1916.
- Beobachtungen über Kriegskrankheiten in Mesopotamien [Դիտողություններ՝ Միջագետքում պատերազմի շրջանի հիվանդությունների մասին]. *Die ärztliche Mission*, Jhg. X, Heft 2, S. 33–45, 1919.
- Letzter Bericht über das Spital in Urfa [Վերջին տեղեկագրություն Ուրֆայի հիվանդանոցի մասին]. *Mitteilungen über Armenien*, No 23/24, S. 267–268, 1923.

## Մարդիկ և նրանց բարքերը Մերձավոր Արևելքում

Ein Nomadenfürst Mesopotamiens [Աստանդական մի իշխան Միջագետքում]. *Christlicher Orient*, Jhg. II, S. 65–70, 1902 und Jahrbuch der deutschen Orientmission, 1902, S. 226–233.

Eine armenische Familie [Մի հայ ընտանիք]. *Christlicher Orient*, Jhg. IV, S. 187–189, 1903.

Eine Seele, die suchte und fand [Հոգին, որ փնտրում էր ու գտավ]. *Christlicher Orient*, Jhg. IV, S. 81–85, 1903.

Und fiel unter die Mörder [Եվ ընկավ մարդասպանների շրջապատ]. *Christlicher Orient*, Jhg. V, S. 145–148, 1904.

Kurden [Քրդերը]. *Christlicher Orient*, Jhg. VI, S. 142–144 und 189–191, 1905.

Die Syrer in Urfa [Ուրֆայի սիրիացիները]. *Christlicher Orient*, Jhg. VII, S. 169–173, 1905.

Allerlei aus Syrien und Mesopotamien [Ամեն կարգի բաներ Սիրիայից և Միջագետքից]. *Christlicher Volksbote aus Basel*, Jhg. 74, No 52, S. 413, 1906.

Eine Hochzeitsreise im Orient [Ամուսնական ճանապարհորդություն Արևելքում]. *Christlicher Volksbote aus Basel*, Jhg. 74, No 19–21, 1906.

Das Morgenrot einer neuen Zeit [Նոր ժամանակների արշալույսը]. *Christlicher Orient*, Jhg. IX, S. 173–175, 1908.

Aus Urfa [Ուրֆայից]. *Christlicher Orient*, Jhg. IX, S. 173–175, 1908.

Von weit hinten in der Türkei [Թուրքիայի հեռավոր թիկունքից]. *Christlicher Volksbote aus Basel*, Jhg. 74, No 19–21, 1906.

Das Ende des Nomadenfürsten Ibrahim Pascha [Աստանդական իշխան Իբրահիմ փաշայի վերջը]. *Christlicher Volksbote aus Basel*, Jhg. 76, No 52, 1908.

Eine mohammedanische Geschichte [Մահմեդական մի պատմություն]. *Christlicher Volksbote aus Basel*, No 3, 1910.

Miss Corina Shatuck [Օրիորդ Քորինա Շաթուքը]. *Christlicher Orient*, Jhg. IX, S. 153–155, 1910.

Kurden [Քրդերը]. *Christlicher Orient*, Jhg. VI, S. 142–144 und 189–191, 1905.

Teuerung in Urfa [Թանկացում Ուրֆայում]. *Christlicher Orient*, Jhg. XI, S. 153–155, 1910.

Sonntag in Mesopotamien [Կիրակին Միջագետքում]. *Schweiz*, Sonntagsfreund, No 163, S. 321, 1910.

Aus Mesopotamien [Միջագետքից]. *Christlicher Volksbote aus Basel*, Jhg. 78, No 23, S. 180, 1910.

- Der wandernde Kurdenscheich als Missionar des Islams [Շրջագայող քուրդ շեյխը՝ Իսլամի միսիոներ]. *Christlicher Orient*, Jhg. XII, S. 27–29, 1911.
- Aus dem Innern der Türkei [Թուրքիայի խորքերից]. *Christlicher Orient*, Jhg. XII, S. 35–39 und 55–58, 1911.
- Die Märtyrer von Osmanie [Օսմանականության մարտիրոսները]. *Christlicher Orient*, Jhg. XII, S. 98–106, 1911.
- Chronischer Notstand in Urfa [Հարասև տագնապ Ուրֆայում]. *Christlicher Orient*, Jhg. XII, S. 108–110, 1911.
- Die Aufgabe der Schule in der Mission [Գալղոցի խնդիրները առաքելության մեջ]. *Christlicher Orient*, Jhg. XIII, S. 65–68, 1912.
- Die syrisch-protestantische Schule in Urfa [Ուրֆայի սիրիական-քողոքական դպրոցը]. *Christlicher Orient*, Jhg. XIII, S. 107–110, 1912.
- Jester Wartuhi [Եսթեր Վարդուհի]. *Christlicher Orient*, Jhg. XV, S. 40–53, 1914.
- Die Erlebnisse des Martiros während des Weltkrieges [Մարտիրոսի փորձությունները համաշխարհային պատերազմի տարիներին]. *Christlicher Orient*, Jhg. XXI, S. 11–12, 1920.
- Jugenderinnerungen aus Teufen [Երիտասարդության հուշեր Թոյֆենից]. *Appenz, Sontagsblatt*, No 20–23, 1920.
- Im Lande des Blutes und der Tränen. Erlebnisse in Mesopotanien während des Weltkrieges* [Արյան ու արցունքների երկրում: Միջազգային տպավորություններ համաշխարհային պատերազմից] 140 էջ, Tempelverlag, Potsdam, 1921.
- Sahak, der Waisenjunge [Որբուկ Սահակը]. *Mitteilungen über Armenien*, No 17, S. 212, 1921.
- Deportierte aus dem Norden [Տարագրվածներ հյուսիսից]. *der Orient*, No 7, 1921.
- Etwas von der armenischen Jugend [Հայ երիտասարդության կյանքից]. *Pro Juventute*, No 2, S. 55–63, 1922.
- Seltsame Lebensgeschichte eines syrischen Mönches [Սիրիացի վանականի կյանքի տարօրինակ պատմությունը]. 78 էջ, Tempelverlag, Potsdam, 1922.
- Archalus. *Mitteilungen über Armenien*, No 20, S. 233–234, 1922.
- Garabed und Djürdji, Vater und Sohn. Lebens- und Sittenbilder aus dem christlichen Mesopotamien [Կարապետ և Ջյուրջի, հայր և որդի: Քրիստոնյա Միջազգային կյանքի ու բարքերի պատկերներ]. 125 էջ, Tempelverlag, Potsdam, 1925.
- Der Raub der Kurdenbraut [Քուրդ հարսնացուի առևանգումը]. 52 էջ, Tempelverlag, Potsdam, 1925.
- Jugenderinnerungen aus Stein [Քարե հիշողություններ երիտասարդությունից]. *App. Sonntagsblatt*, No 41–45, 1925.
- Aus dem Leben des Ohannes [Օհաննեսի կյանքից]. *Ref. Schweiz. Zeitung*, No 12–18, 1925.

El-Djim! Geisterspuk auf dem Libanon [Էլ-Ջիմ: Ուրվականներ Լիբանանում], *Orient im Bild*, S. 54–56, 1927.

Aug um Aug, Zahn um Zahn [Ակն ընդ ական, ատամն ընդ ատաման], *Orient im Bild*, 1929.

Des Armeniers Kosrof schwerste Stunden [Հայազգի Խոսրովի ամենածանր ժամերը], *Orient im Bild*, S. 46, 1929.

Das armenische Kind [Հայ երեխան], *Orient im Bild*, S. 87, 1929.

Tina, die Armenierin [Թինան՝ հայուհին], *Für Alle-Kalender, Evangelische Buchhandlung, Emmishofen-Kreuzlingen*, S. 46–48, 1933.

**Մերձավոր Արևելքի աշխարհագրական, ժողովրդատնտեսական,  
քաղաքական և կրոնական պայմանները**

Zum Klima von Obermesopotamien [Վերին Միջագետքի կլիման], *Meteorologische Zeitschrift*, Heft 11, 1901 (Gemeinsam mit Dr. H. Christ).

Haran [Հարան], *Christlicher Orient*, S. 81–85, 1904.

Dunkle Stunden [Սև ժամեր], *Christlicher Orient*, Jhg. VII, S. 17–22, 1906.

Kurden [քրդեր], *Christlicher Orient*, Jhg. VII, S. 31–32, 1906.

Klima von Urfa, Obermesopotamien, nach 6-jährigen Beobachtungen [Ուրֆայի, Վերին Միջագետքի կլիման՝ 6-ամյա դիտարկումներից հետո], *Meteorologische Zeitschrift*, Heft 10, 1906 (gemeinsam mit Dr. H. Christ).

Resultate der meteorologischen Beobachtungen zu Urfa im Jahre 1906 [1906-ին Ուրֆայի օդերևութաբանական դիտարկումների արդյունքները], *Meteorologische Zeitschrift*, Heft 5, 1907 (Gemeinsam mit Dr. H. Christ).

Tierschutz im Orient [Կենդանիների պաշտպանությունն Արևելքում], *Christlicher Volksbote aus Basel*, Jhg. 78, No 16, 1910.

Das Handwerk in Urfa [Ուրֆայի արհեստագործությունը], *Christlicher Orient*, Jhg. VIII, S. 71–80 und 88–93, 1907.

Ibrahim Pascha [Իբրահիմ փաշա], *Christlicher Orient*, Jhg. VIII, S. 182–184, 1907.

Eine armenische Geschichte [Մի հայկական պատմություն]. *Christlicher Orient*, Jhg. 75, No 40–42, 1907.

Aus Urfa [Ուրֆայից]. *Christlicher Orient*, Jhg. IX, S. 24–29, 1911.

Tierschutz im Orient [Կենդանիների պաշտպանությունն Արևելքում], *Christlicher Volksbote aus Basel*, No 16, S. 125–126, 1910.

Die neue Zeit [Նոր ժամանակը]. *Christlicher Orient*, Jhg. XII, S. 24–29, 1911.

Nikomedusnächte [Նիկոմեդյան գիշերներ]. *Christlicher Orient*, Jhg. XII, S. 129–135, 1911.

Das Haar des Propheten [Մարգարեի մազը]. *Christlicher Orient*, Jhg. XII, S. 142–143, 1911.

Aus der Ramasan-Festpredigt [Ռամադանի տոնական քարոզից]. *Christlicher Orient*, Jhg. XII, S. 171–173, 1911.

Über den Weinbau und die Aufbereitung der Trauben zu Wein und Traubenkonserven in Nordsyrien und Obermesopotamien [Հյուսիսային Սիրիայում և Վերին Միջագետքում խաղողագործության ու խաղողի գինու և պահածոների մշակման մասին]. *Archiv für Wirtschaftsforschung im Orient*, Heft 1/2, 1919 (gemeinsam mit Prof. Dr. G. Bredemann).

Die Türkei und Armenien [Թուրքիան և Հայաստանը]. *Neue Schweiz. Zeitung*, No 104, 1919.

Aufteilung der Türkei [Թուրքիայի վերաբաժանումը]. *Appenzell. Zeitung*, No 130, 1920.

Rakka [Ռակա]. *Der Orient*, No 8, 1921.

Wo liegt Ghazir? [Որտե՞ղ է գտնվում Գլազիրը]. *Der Orient*, No 6, 1925.

Der Wolleinkauf am Flusse Chabur [Բրդի գնումը Չաբուր գետի ափին]. *Basler Nachrichten*, 1926.

Das Christentum und die neue Türkei [Բրիստոնությունը և նոր Թուրքիան]. *Der Orient*, No 12, 1926.

Das Europäerchristentum im Urteil des Nahen Ostens [Եվրոպական քրիստոնությունը ըստ Մերձավոր Արևելքի դատողության]. *Der Orient*, No 11–12, 1926.

Die Federn vom Libanon [Փետուրները Լիբանանից]. *Orient im Bild*, S. 52–53, 1929.

Die Lage in Syrien [Գրությունը Սիրիայում]. *National-Zeitung, Basel*, No 446, 1928.

Bäume voll hängender Trauben [Խաղողի ողկույզներով բեռնավորված վազեր]. *Orient im Bild*, S. 78, 1929.

Jesus-Mohammed [Հիսուս-Մոհամեդ]. *Orient im Bild*, 1929.

Urfa und die neue Türkei [Ուրֆան և նոր Թուրքիան]. *Basler Nachrichten*, No 290, 1930.

### **Ճանապարհորդական նկարագրություններ**

Von Basel nach der alten Abrahamstadt [Բազելից դեպի Աբրահամի քաղաքը]. *Christlicher Volksbote aus Basel*, Jhg. 68, No 7–10, 1900.

Allerlei Reiseerlebnisse [Ճանապարհորդական բազմազան տպավորություններ]. *Christlicher Orient*, Jhg. II, S. 136–140, 1901.

Von der Schweiz nach Urfa [Շվեյցարիայից դեպի Ուրֆա]. *Christlicher Orient*, Jhg. XI, S. 39–45 und 55–56, 1910.

Eine Reise im Orient während des Waffenstillstands [ճանապարհորդություն Արևելքում զինադադարի ժամանակ]. *Basler Anzeiger*, No 6–11, 1919.

Reiseerlebnisse aus Mesopotamien [ճանապարհորդական տպավորություններ Միջագետքից]. *National-Zeitung, Basel*, No 287–297, 1920.

Letzte Erlebnisse in der Türkei [Վերջին տպավորությունները Թուրքիայում]. *Der Orient*, No 6 und 8, 1925.

Ein Besuch in Ghazir [Այցելություն Ղազիրում]. *Christlicher Volksbote aus Basel*, No 25, S. 225–299, 1924.

Bei den Schützlingen des Völkerbundes. Syrische Reiseerinnerungen [Ազգերի ընկերակցության հովանավորյալների մոտ: Միրիական ճանապարհորդական հիշողություններ]. *Basler Nachrichten*, No 278 bis 280, 1928.

Reise nach dem Innern Vorderasiens [ճանապարհորդություն դեպի Առաջավոր Ասիայի խորքերը]. *Orient im Bild*, 1928 und 1929 (gemeinsam mit Dr. B. Schütz).

Die Reise nach dem Libanon [ճանապարհորդություն դեպի Լիբանան]. *Christlicher Volksbote aus Basel*, No 20–26, 1932.

### **Օգնության գործունեությունից**

Bericht über das armenische Hilfswerk in Urfa und Umgebung [Տեղեկագրություն Ուրֆայի ու շրջակայքի հայկական նպաստամատույցի մասին]. *Mitteilungen über Armenien*, No 11, S. 126–131, 1919.

Bericht an die Freunde Armeniens in der Schweiz [Տեղեկագրություն հայերի շվեյցարացի բարեկամներին]. *Mitteilungen über Armenien*, No 12, S. 145–147, 1919.

Allerlei Rettungsarbeit [Զանազան փրկարար աշխատանքներ]. *Der Orient*, No 8, S. 1921.

Türkische Waisenhäuser [Թուրքական որբանոցներ]. *Der Orient*, No 8, 1921.

Die Waisenarbeit auf dem Libanon [Որբերի հետ աշխատանքը Լիբանանում]. *Der Orient*, No 9–10, 1924.

Opfertag [Զոհաբերման օր]. *Appenz. Sonntagsblatt*, No 42, 1924.

Aus dem Leben von Jakob Künzler, Waisenvater in Ghazir [Յակոբ Բյունցլերի՝ Ղազիրի «որբերի հոր» կյանքից]. *Der Orient*, No 1, 1925.

Von unseren Waisenkindern in Ghazir [Ղազիրի մեր որբերի մասին]. *Der Orient*, No 2–3, 1925.

Verlobung und Verheiratung der größeren Waisen Kinder [Ավագ որբերի նշանադրում ու ամուսնացում]. *Der Orient*, No 9–10, 1925.

Von unseren Waisenkindern in Ghazir [Ղազիրի մեր որբերի մասին]. *Der Orient*, No 1–2, 1926.

Gedächtnisfeier in Ghazir [Հոգեհանգիստ Ղազիրում]. *Der Orient*, No 3, 1926.

An die Pflegeeltern der Ghazir-Waisen [Ղազիրի որբերի սնուցիչ ծնողներին]. *Der Orient*, No 3, 1926.

Der Jahresanfang in Ghazir [Տարեսկիզբը Ղազիրում]. *Der Orient*, No 5–6, 1926.

Berichte über die Waisenkinder in Ghazir [Տեղեկագրություններ Ղազիրի որբերի մասին]. *Der Orient*, 1926.

Ein Gedächtniswaisenhaus [Հիշատակվող որբանոց]. *Orient im Bild*, 1928.

Der Geburtstag [Տարեդարձը]. *Orient im Bild*, 1929.

Der Camp-Jammer [Ճամբարի պատուհասը]. *Orient im Bild*, No 4, 1928.

Das Weihnachtsfest in Ghazir auf dem Libanon [Ծննդյան տոնը Լիբանանի Ղազիրում]. *Maria Magdalena, Christliches Frauenblatt*, Jhg. 26, S. 27–28, 1928.

Die Siedelungen für die Armenier [բնակավայրեր հայերի համար]. *Orient im Bild*, No 3, 1930.

Die Nöte der armenischen Emigranten im Barackenlager von Beirut [Հայ գաղթականների կարիքները Բեյրութի ճամբարի հյուղերում]. *Mitteilungen über Armenien*, No 52, 1931.

Zum Häuschenbau [Տնակների կառուցման վերաբերյալ]. *Mitteilungen über Armenien*, No 54, 1931.



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<b>Երկու խոսք</b> . . . . .	5
<b>Նախաբան</b> . . . . .	7
Հրաժեշտ հայրենիքին . . . . .	11
Առաջին տպավորություններն Արևելքում. . . . .	12
Ուրֆայի միսիոներական հիվանդանոցը . . . . .	16
Մեր հիվանդները . . . . .	18
Այլևայլ խնդիրներ . . . . .	22
Փոթորիկը մոտենում էր . . . . .	27
Անդորր փոթորկից առաջ . . . . .	30
Փոթորիկը պայթում է . . . . .	35
Մահ ամենուրեք . . . . .	38
Հուսահատության մեջ . . . . .	44
Սարսափի օրերը դեռ շարունակվում են . . . . .	47
Հետնացավեր . . . . .	50
Պատերազմից հետո . . . . .	52
Նոր խնդիրներ . . . . .	57
Մեծ տեղափոխումը . . . . .	62
Դավթի եղբայրը . . . . .	66
Ծանր աշխատանք . . . . .	69
Դժվարին որոշում . . . . .	75
Նոր պաշտոնում . . . . .	77
Ամենամեծ գոհաբերությունը . . . . .	80
Ծառայության շարունակությունը Արևելքում . . . . .	83
<b>Վերջաբան</b> . . . . .	85
Քյունցլերի վաստակը գիտության մեջ . . . . .	85
Յակոբ Քյունցլերի գործերը . . . . .	90
Ուրֆայի միսիոներական հիվանդանոցի աշխատակից . . . . .	90
Մարդիկ և նրանց բարքերը Արևելքում . . . . .	92
Մերձավոր Արևելքի աշխարհագրական, ժողովրդատնտեսական, քաղաքական և կրոնական պայմանները . . . . .	94
Ճանապարհորդական նկարագրություններ . . . . .	95
Օգնության գործունեությունից . . . . .	96

ՅԱԿՈՔ ՔՅՈՒՆՅԼԵՐ

ԵՐԵՍՈՒՆ ՏԱՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ

Հրատ. խմբագիր՝ **Հ. Բ. Պետրոսյան**  
Տեխ. խմբագիր՝ **Վ. Չ. Բրդյան**  
Կազմի ձևավորումը՝ **Գր. Վ. Մարիկյան**

Համակարգչային շարվածքը  
և ձևավորումը՝ **Թ. Շ. Վարդանյանի**

Ստորագրված է տպագրության 27.10.08 թ.:

Չափսը՝ 60x84 1/16: Թուղթը՝ օֆսեթ:

Հրատ. 5,2 մամուլ, տպագր. 6,25 մամուլ + 2 էջ ներդիր = 5,8 պայմ. մամուլի:

Տպաքանակ՝ 300: Պատվեր՝ 76:

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1

---

ԵՊՀ տպագրատուն, Երևան, Աբովյան 52